Universitäts- und Landesbibliothek Bonn

Maštoc' kam Cisaran

I Galata K. Polsoy, 1857

urn:nbn:de:hbz:5:1-56535

Visual Library

701 Rituel Arménien
Galata de
Constantinople
8°. 1877
4° 41597

Goussen 2922

CCO 2296
K

ԾԻՍԱՐԱՆ
ԿԱՄ
ՄԱՐՏՈՑ

ՄԱՏԱՆ

ՅՈՐՈՒՄ ԱՒԱՆԴԻՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԻՍ

ԸՍՏ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՀԱՅՈՑ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ· Տ· ՆԵՐՍԻՍԻ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս· ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ· ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼԱՀԱՒՈՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ· ՊՕԼՍՈՅ Տ· ՅԱԿՈԲԱՅ


ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԳԱԼԱԹԱ Կ· ՊՕԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց· ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1857 =

2722


INRI
C. GEOFFROY
DELAMOUR

ԿԱՆՈՆ

ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Տանին վնորածին երախայն ՚ի դռոան եկեղեցւոյն, և ասէն։

Օրհնեալ հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմութեանդ, ըստ բազում գթութեանդ քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Ցփոխն ղման ասա։

Փառք հօր։ Եւևս խա։ Օրհնու։

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ պբօսան աչք իմ։

Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, և ոչ ընդ այնոսիկ որ պատնէլի էին քան զիս։

Բայց թէ խոնարհեցայ ես որպէս մա-
նուկ սարսռուցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ,
և դարձ նորա անդրէն ՚ի նոյն։
Ա՛յլ թէ հպարտացուցի արդեօք զանձն
իմ, այսպէս եղիցի հատուցումն ան-
ձին իմոյ. յուսացյաւ իսրայէլ ՚ի տէր
յայսմհետէ մինչեւ յաւիտեան։

ՂՓՈՆ ԵՐԻՑ ԿԻՆԵԱ։

Փառք հօր։ Եւս խա։ Օրհնու։

Ա՛ք քեզ տէր համբարձի զանձն իմ. աճ
իմ ՚ի քեզ յուսացայ, մի ամաչեցից. և
մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ։
Ա՛մենեքեան որք համբերեն քեզ՝ մի
ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք
յունայնութեան իւրեանց։
Ո՛ճանապարհս քո տէր ցոյց ինձ, և
զշաւիղս քո ուսո ինձ։
Ա՛ւանդնորդեա ինձ ՚ի ճշմարտու-
թեան քում և ուսո զինս, զի դու ես աս-
տուած փրկիչ իմ. և ես քեզ համբերի
զօրհանապազ։
Յիշեա տէր զգթութիւնս քո և զողոր-

մուԹիւնա քո, որք են յաւիտենից։
Օ՛մեղս մանկուԹե՛ն իմոյ և զանգիտու-
Թեան իմոյ մի յիշեր. այլ յիշեա զիս
ա՛ռ ըստ ողորմուԹե՛ն քոմ՝ վասն քաղց-
րուԹեան քո, զի քաղցր և ուղիղ ես։
Վ՛ասն այսորիկ օրէնսդէտ առնես զմե-
ղաւորս ՚ի ճանապարհի. առաջնորդես
հեզոց ՚ի դատաստանի. և ուսուցանես
հեզոց զճանապարհս քո։
Ա՛մենայն ճանապարհք են ողորմուԹիք
և ճշմարտուԹեամբ են այնոցիկ, որք
խնդրեն զուխտ և զվկայուԹիւն նորա։
Վ՛ասն անուան քո ա՛ռ քաւեա զմեղս
իմ, զի բազում եղեն. մի՛ է մարդ որ
երկնչի ՚ի տեառնէ. օրէնսդէտ առնէ
զնա ՚ի ճանապարհի՛ յոր և հաճեցաւ։
Անձն նորա ՚ի բարուԹեան հանգիցէ.
և զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր։
Օ՛գուԹի՛ է ա՛ռ երկիւղած իւրոց.
և զկտակարանս իւր ուսուցանէ նոցա։
Աչք իմ յամենայն ժամ առ ա՛ռ են.
և նա հանէ յորոգայԹէ զոտս իմ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի

միամօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն
յոյժ. և ի վշտաց իմոց հան զիս։
Տես զնոնարհութիւն իմ և զվաստակ
իմ և թող ինձ զամենայն զմեղս իմ։
Տես զթշնամիան իմ, զի բազում եղեն,
առեւրութիւ՝ ողք ի նանիր առեցին զիս։
Պահեա զանձն իմ և փրկեա զիս. և
մի յամօթ եղէց, զի յուսացայ ի քեզ։
Ընդիմդ և ուղիղք կցորդք եղեն ինձ.
և ես քեզ համբերի. փրկեա աստուած
զիսրայէլ յամենայն նեղութենէ նորա։

Փառք հօր։ Եւս ևս։ Օրհնու։

Դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի, ի տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ։
Փորձեա զիս տէր և քննեա զիս. փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ։
Ողորմութի՛ քո տէր առաջի աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։
Ոչ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ անօրէնս ես ոչ մտից։

Ընթեցի ես զժողովս քարոզ, և ընդ
ամբարիշտս ես ոչ նստայ ։
Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և
շուրջ եղէց զսեղանով քով տէր ։
Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և
պատմել զամենայն սքանչելիս քո ։
Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո,
և զտեղի յարկի փառաց քոց ։
Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զան-
ձն իմ, և մի ընդ արս արիւնահեղս
զկեանս իմ ։
Որոց ձեռք ի բրեանց յանօրէնութեան
են. և աջ նոցա լի է կաշառօք ։
Ես յանբծութեան իմում գնացի. փրկ-
կեա զիս տէր և ողորմեա ինձ ։
Ոտն իմ կացցէ յուղղութեան. յեկե-
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ ։

Փառք հօր ։ Եւս խա ։ Օրհնու ։

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յումմէ
երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց՝
ես յումմէ դողայցայց ։
Ի մերձենալ առնուլ զմարմ-

մին իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ,
նոքա տկարացան և անկան։
Թէ պատրաստեսցի ՚ի վերայ իմ պա-
տերազմ, ոչ երկիւղ սիրտ իմ. և թէ
յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ,
սակայն և այսուհետ ՚ի քեզ տէր յու-
սացայ։
Օ՛մի խնդրեցի ՚ի տեառնէ, և զսոյն ա-
ղաչեմ. բնակիլ ինձ ՚ի տան տեառն
զամենայն աւուրս կենաց իմոց։
Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն,
և հրաման տալ ՚ի տաճարի նորա։
Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յա-
ւուր չարի. ընդ յարկաւ արար զիս
՚ի ծածկոյթի խորանի իւրում։
Ի վեմ բարձր արարեր զիս. և այժմ
բարձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թըշ-
նամեաց իմոց։
Շ՛ուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի
նորա պատարագ օրհնութեան. օրհ-
նեցից և սաղմոս ասացից տեառն։
Լ՛ուր տէր ձայնի իմում, զի կարդացի
առ քեզ. ողորմեա ինձ և լուր ինձ, զի

քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին ե-
րեսք իմ, զերեսս քո տէր խնդրեցին:
Մի դարձուցաներ զերեսս քո յինէն,
և մի խոտորիր բարկութեամբ ի ծա-
ռայէ քումմէ:
Օգնական իմ լեր տէր, մի անարգեր
զիս, և մի թողուր զիս աստուած
փրկիչ իմ:
Հայր իմ և մայր իմ թողին զիս. և
տէր իմ ընկալաւ զիս:
Օրէնագէտ արա զիս տէր ի ճանա-
պարհի քումմ, և առաջնորդեա ինձ ի
շաւիղս քո ուղիղս:
Վասն թշնամեաց իմոց, մի մատներ
զիս ի ձեռս նեղչաց իմոց:
Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց. և
ստեցին ինձ յանօրէնութեանց:
Հաւատացի տեսանել զբարութիւն
տեառն յերկրին կենդանեաց. համբեր
տեառն և քաջալերեաց. զօրասցի սիրտ
քո և համբեր տեառն:

Փառք հօր և: Այժմ և:

Ողբի վնարօսն կարմիր և սպիտակ ընելը՝ ի խորհուրդ հինաւուր արեան և ջրոյն, որ ել ի փիգախոյ կողէն Քրիստոսի. և ասէ շարականն։

Բ

Տէրտերութիւնն անբաժանելի և զօրութիւն երկնային ընդ ցասցէ յաշխարհ. նմանօրինակ հանգոյց զօրհնութիւնս եւրդոյ։ Որ էջըն յերկինս նիցս, այսօր և հանդերձեալ յառաքեալսն ճառնուցանէ մարգարէին. նըման։

Սուրբ խաչիս աղաչեցուք զտէր։

Պահպանեա զնարօսս քրիստոս ամօ մեր ընդ հուման։ Այլ մեր որ։

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։

Տէր աստուած մեր՝ որ զհեռացեալս ի քէն զազգս մարդկան, զանկեալս ի դրախտէն փափկութեան՝ ոչ անտես

արարեր ։ Այլ գթացեալ խոնարհեցար
՚ի քումմէ բարձրութենէդ ՚ի մեր նըւ-
աստութիւնս , առնելով զբոլոր մեր
բնութիւնս բացի ՚ի մեղաց ։ Չարչա-
րանաց և մահու խաչիւ զփրկութիւն
մեր և զդարձ գնեալ , վերստին շնոր-
հեցեր մեզ կենդանութիւն ։ Ընկալ և
այժմ մարդասէր տէր՝ զբարեյօժարու-
թիւն ստեղծուածոյս քո , որ դիմեաց
մերձենալ ՚ի սուրբ և ՚ի ճշմարիտ աս-
տուածութիւնդ քո քրիստոնեայ անուն
յանձին կրելով ։ Նորոգեա զսա յամե-
նայն նեղութենէ մեղաց . և ազատեա
՚ի ծառայութենէ սատանայի ։ Նր տուր
սմա զօրութիւն և օգնականութիւն
արժանաւորիլ և հասանիլ ՚ի մաքրու-
թիւն սուրբ աւազանին , և ՚ի ժա-
ռանգութիւն երկնից արքայութեանդ ,
տերամբդ մերով Յիսուսիւ քրիստո-
սիւ ։ Ընդ որում հօր՝ միանգամայն և
հոգւոյդ սրբոյ՝ վայելէ փառք իշխա ։

Եւս խաղաղութեան ղտէր աղաչեսցուք ։

Վասն երախայիս աղաչեսցուք զմար-

զաւէրն աստուած, զի ողորմեցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և արժա- նաւորեցէ զսա լուացման վերստին ծննդեան, և զգեստու անապականու- թեան: Եւ զուգաթուեցէ զսա ընդ հաւատացեալս անուան իւրոյ. և կե- ցուսցէ հնորհիւ ողորմութեամբն իւ- րով: Ամենակալ տէր աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Ե՛ս Յհաննէս ասէ երէ՛ Տէր ողորմ:

Աղօթք:

Ընկալ մարդասէր տէր՝ զընծայեալս քեզ զերախայս զայս, և սրբեա զմիտս և զխորհուրդս սորա յամենայն ներ- գործութենէ հակառակորդին: Եւ արժանի արա զսա՛ի ձեռն սուրբ ա- ւազանին լուանալ զհնութիւն մեղաց իւրոց, և նորոգիլ լուսով հնորհաց քոց: Օ՛ի և սա մեօք հանդերձ փա- ռաւորեսցէ զհայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և:

Եւս խաղաղութեան ղտէր աղաչեսցուք:

վ ան քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց, և իջանելոյ ողորմութեանն աստուծոյ ՚ի վերայ երախայիս՝ զտէր աղաչեսցուք։

Ն՚ Տէր ողորմեա։

Աղօթք։

Տէր աստուած մեծ՝ և փառաւորեալ յամենայն արարածոց, ՚ի քո ահաւոր և ամենազօր անուն ապաւինեալ ծառայս քո, խոնարհեցոյց զգլուխ իւր անուան քում սրբոյ. որում կրկին ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և անդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լինի, եթէ տէր է յիսուս քրիստոս ՚ի փառս աստուածոյ հօր։ Աղէկ՝ յայդմ ահաւոր անուանէդ մանն հաղորդութեան ընկալցի սա. որ հալածեաց զխաչեալ թիւն աստանայի, և զամենայն որոգայթս մոլորութե նորա խափանեաց։ Նայեա տէր ողորմութեամբ քով ՚ի սա. մերժեա և հեռացո ՚ի սմանէ ամենա-

յաղթ կոչմամբ անուան քո ՚ի վերայ
սորա, զխորհուրդս՝ զբանս և զգործս,
և զամենայն խաբէութիւնս չարին, ո-
րով սովոր է խաբել և կորուսանել զմարդիկ: Որպէս զի զարհուրեալ ՚ի
յաղթող անուանէդ քումմէ, տագնա-
պեսցի և տանջեսցի աներևոյթ տան-
ջանօք. և երդմամբ հեռացեալ ՚ի սը-
մանէ, այլ մի և ս դարձցի ՚ի սա: Զո
զսա երկնային շնորհօքդ, և զուար-
ճացո ամենաբարի կոչմամբ քրիստո-
նեայ անուանելով. և արժանի արա
զսա մկրտութեան վերստին ծննդեան
սուրբ աւազանին: Եւ ընդունելով
զհոգիդ քո սուրբ, մարմին և անդամ
եղիցի եկեղեցւոյ քում սրբոյ: Եւ ա-
նարատ քրիստոնէութեամբ կրօնաւոր-
եալ յայսմ աշխարհիս հանդերձեցից
բարեացդ հասցէ ընդ ամենայն սուրբս
քո: Փառաւորելով զանփոփոխելի տէ-
րութիւնդ քո, այժմ և միշտ և յաւէ:

Ընդ ինձ հայրն երէց ծռնր կրնէ և ասէ:

Ի քեզ անկայ ես յարգանդէ . յորովայնէ մօր իմոյ դու ես աստուած իմ :

Ապա առնու պերեխայն ՚ի գիրկն , տառնայ յարևմուտս՝ և ասէ :

Հրաժարիմք ՚ի սատանայէ և յամենայն :

Ապա դառնայ յարևելս՝ և ասէ :

Դառնամք ՚ի լոյս աստուածգիտութեան :

Հաւատամք յամենատուրբ երրորդութիւն ՚ի հայր , և յորդի , և ՚ի սուրբ հոգի : Օրհնութիւն գաբրիէլի , գծնունդն քրիստոսի , գմկրտութիւնն , գչարչարանն , գխաչելութիւնն , գթաղումն երեքօրեայ , գյարութիւնն , գաստուածապէս համբարձումն , գնստիլն ընդ աջմէ հօր , գահաւոր և գխաւսաւորեալ գմիւսանգամ գալուստն՝ խոստովանիմք և հաւատամք :

Ալէլուիա Օրթի :

Սբոյ Աւետարանիս ՅՒ ԿԻ որ ըստ Մատթէոսի :

Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի գալիլեա ՚ի լեառնն՝ ուր ժամադիր ե-

ղեւ նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիրպագին նմա. և ոմանք յերկուածացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ: Գնացէք այսու հետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոս. մկրտեցէք զնոսա յանուն հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ: Եւ սուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի:

Աւետաւմք ի մի աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի: Եւ մեք փառաւորեսցուք որ յառաջքան զյաւիտեանս. երկիրպագանելով:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք:

Եւ ևս՝ Հաւատով աղաչեսցուք և խընդրեսցուք ի տեառնէ աստուծոյ և ի վրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի

ժամուս պաշտաման և աղօթից ։ Օ՛ի արժանի ընդունելութեան արասցէ. լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց ։ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր. ողորմեսցի՛ ի վերայ մեր ։ Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մատցեն առաջի մեծի տէրութեան նորա ։ Եւ նա տացէ մեզ միաբան՝ միով հաւատով և արդարութեամբ վաստակիլ՛ ի գործս բարեաց ։ Օ՛ի զողորմութիւն ընդորհն իւր՝ արասցէ՛ ի վերայ մեր տէրն ամենակալ. կեցուսցէ և ողորմեսցի ։ Օ՛ժամ և զառաջակայ օրս խաղաղութեամբ ։ Օ՛հրեշ ։ Օ՛քաւութի ։ Օ՛սրբոց խաչին ։ Եւ ևս ։ Օ՛անձինս մեր ։ Ողորմեաց ։

Աղօթք ։

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս. որ մեծդ ես ողորմութիւք և առատ պարգեւօք բարերարութեան քո ։ Ար դու քոյին կամաւդ՛ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու՝ յաղագս մեղաց մերոց ։ Եւ պարգե-

եեցեր առաստապես զպարգեւս հոգեւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Նաղորդս արա և զմեզ տէր, աղաչեմք ըզքեզ՝ աստուածային պարգեւացդ. Թողութեան մեղաց և ընդունելութեան հոգեւոյդ սրբոյ: Որպէս զի՝ արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգեւոյդ, այժմ և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Խաղաղութեամբ քով քրիստոս փրկիչ մեր. որ ՚ի վեր է քան զամենայն միտս և զբանս. ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամենայն չարէ: Նաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո. որք հոգեւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն: Որ՝ ան զի՝ ամենայնք երրորդութեանդ վայելեն փառք իշխանութի՛ւն և պատիւ, այժմ և միշտ:

Օրհնեալ տէր մեր յի՛ս քի՛ ամէն:

Նայր մեր որ յերկինս:

Ալէլուիա ալէլուիա:

Խոստովան եղերուք տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ընդացէ տունն իսրայէլի՝ զի յաւիտ։
Ընդացէ տունն ահարոնի՝ զի յաւիտ։
Ընդացեն երկիւղածք տեառն՝ զի յա։
Ի նեղութեան իմում եմ առ տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորր։
Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։
Տէր է իմ օգնական, և ես տեսից ՚ի թշնամիս իմ։
Բարի է յուսալ ՚ի տէր՝ քան յուսալ ՚ի մարդիկ. բարի է յուսալ ՚ի տէր՝ քան յուսալ յիշխանս։
Ընդունայն ազինք շրջեցան զինեւ, և անուամբ տեառն յաղթեցի նոցա։
Շրջելով շրջեցան զինեւ, և պաշարեցին զիս ՚ի միասին. և անուամբ տեառն վանեցի զնոսա։
Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան ոտի փուշք ՚ի հուր. և անուամբ տեառն մերժեցի զնոսա։
Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ

’ի գլուխ. և տէր ընկալաւ զնա։
Ծ՚օրութիւն իմ և օգնութիւն իմ
տէր, և եղև ինձ ’ի փրկութիւն։
Ձայն ցնծութեան փրկութեան ’ի
յարկս արդարոց։
Աջ տեառն արար զօրութիւն, աջ
տեառն բարձր արար զնա, և աջ տեն
արար զօրութիւն։
Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից
զգործս տեառն։
Խրատեալով խրատեաց զնա տէր, և ’ի
մահ ոչ մատնեաց։
Բացէք ինձ զդրունս արդարութե՛ զի
մտից ընդ այն, և խոստովան եղէց տեն։

Ա՚սպ տպանեն յեկեղեցին ասելով։

Ա՚յս դուռն տեառն է, և արդարք
մտանեն ընդ սա։
Խոստովան եղէց քեզ տէր, զի լուար
ինձ, և եղեր ինձ ’ի փրկութիւն։
Վ՚էմն զոր անարգեցին շինողքն, նա
եղեւ գլուխ անկեան։
Ի տեառնէ եղեւ այս, և է սքանչելի

առաջի աչաց մերոց։

Այսօր է զոր արար տէր. եկայք ցըն-
ծասցուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։
Որ տէր փրկեա, ո տէր առաջնորդեա.
օրհնեալ որ գալոց ես յանուն տեառն,
և օրհնեցաք զքեզ ՚ի տանէ տեառն։
Տէր աստուած մեր երեւեցաւ մեզ.
արարէք տօնս ուրախութեան կանխաւ,
մինչև յանկիւնս սեղանոյ։
Աստուած իմ ես դու՝ և խոստովան ե-
ղէց քեզ. աստուած իմ ես դու՝ և
բարձր արարից զքեզ։
Խոստովան եղէց քեզ տէր՝ զի լուար
ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն։
Խոստովանեցարուք տեառն զի բարի է,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Հայրական դէմ։

Ո՞ողորմութեա՛ն քո զգուռըն բաց մ
մեզ տէր. և արժանի արա զմեզ լու-
սեղէն յարկաց քոց ընդ սո՞ւրբըս քո՛։
Ի պատրաստեա՛լ քո յօթեվա՛նըս սըր-

բո՛ց քոց ընկալ և ըզմեզ փըրկիչ յոր-
դեգրութիւն ՚ի դըպրութեա՞ն կե-
նաց ։ Ի նստիլ քո յաւետի՛ դատաւոր
ահեղ խնայեա՛ յարարածըս քո, բա-
րե՛խօսութեամբ և աղօթի՛ք սուրբ
ճըգնաւորացն ։

Ընդունակեցէ՛ք առ տէր ամենայն երկիր ։
ծառայեցէ՛ք տեառն ուրախութեամբ ։
Մտէ՛ք առաջի նորա ցնծութի՛ւք ։ ծա-
ներուք զի նա է տէր աստուած մեր ։
Նա արար զմեզ, և ոչ մե՛ք էաք ։ մե՛ք
ժողովուրդք և խաշն արօտի նորա ։
Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանու-
թեամբ, և օրհնութի՛ւք ՚ի յարկս նորա ։
Խոստովան եղերուք տեառն, և օրհ-
նեցէ՛ք զանուն նորա ։
Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմու-
թիւն նորա ։ ազգէ մինչեւ յազգ է
ճշմարտութիւն նորա ։

Փառք հօր և որդւոյ և ։
Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՔ

տէր՝ զի սովաւ վրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և կեցուսցէ հնորհիւ ողորմութեան իւրոյ: Ընդունակալ տէր ամ մեր՝ կեցո և ողորմեա:

Ի մէջ տաճարիս, և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս, և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղաւնի դէպ յաւետեանն ասէրվ:

Ընդունի՛ր զաղաչանս քո ամենայնի ծագեալ յաշխարհս հանդիսացեալ ըղձալիս ամենայն ազգաց մարդկան, և յետ մահու և յարութեան համբարձեալ առ հայրն յոյսդ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորացդ և յերկրաւորացդ ընդ հօր և

գձ

սուրբ հոգւոյն. վասն որոյ. և մի՛ք երկիւղածանեմք հոր հոգւովք և ճշմարտութիւք։ Որ փոխանակ ծոցաձին բանին ընդ եղ երկինս, ամուսնքեցաւ աւետիքըն հոր ի բարձանց հոգւոն ճշմարտութեան, մինչեւ զոր յաղագայ տըրտմեցելոց, և հրաժշտելոյ զընտրեալ դասս առաքելոցն. վասն։ Այսօր տըրտմակաւն և գիշերային լուծան երկունք ծնընդեան նախանօրն. քանզի զծընեալըն մարմնով ի մահ և յաւիտենականութիւն, վերըստին ծնանի հոգին յորդիս լուսոյ հօրն երկնաւորի. վասն։

Աստուած չհանայն զքո՝ն օծութեան ի քեզ՝ն է՛ր, և սրիա՝ւգն ասէ։

Եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Վասն խնդութեան հոգւոյն սրբոյ ընդ խաղայս այսորիկ՝ զտէր աղաչեսցուք։

և՝ չահանայն առ երէց Տէր ողջմեա, և ապա վնջելն ։

Օրհնեալ ես տէր աստուած ամենակալ, որ ընտրեցեր քեզ նոր ժողովուրդ ի քահանայութիւնն և ի թագաւորութիւն, յաղգ սուրբ, ժողովուրդ սեպհական, ըստ որում նմանութեան յառաջագոյն օծեր զքահանայս, զմարգարէս և զթագաւորս՝ ամենասուրբ այսպիսի իւղով ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր բարերար, առաքեա զընծորհս ամենասուրբ հոգւոյդ ընդ իւղոյս . զի որ օծցի, եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան, ի նահատակութիւն և ի յաղթութիւն հակառակամարտին ։ Ի զօրութիւն պատուիրանացդ առաքինի գործոց, և յամենակատար հրահանգս և ի կրթութիւնս աստուածպաշտութեան ։ Որպէս զի լուսաւորեալ մտօք կեցցէ յայսմ աշխարհի ի փրկութիւն անձին իւրոյ, ի պատիւ և ի փառս ամե-

նասուրբ երրորդութեանդ : Եւ արժանի լեցի հասանիլ վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս : Փառաւորելով զհայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և միշտ և :

Ամէն զը-ր յա-ւիտեան խա-չանմա՝ և ասէ :

Զայն տեառն ի վը ջուրց՝ և աստուած փառաց որոտաց . և տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց :

Ատուցէք տեառն՝ որդիք աստուծոյ, մատուցէք տեառն զորդիս խոյոց :

Ատուցէք տեառն զփառս և զպատիւ, մատուցէք տեառն զփառս անուան նորա . և երկրպագէք տեառն ի սրահ սրբութեան նորա :

Զայն տեառն ի վը ջուրց՝ և աստուած փառաց որոտաց . և տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց :

Զայն տեառն զօրութեաց, և ձայն տեառն մեծավայելչութեանց :

Զայն տեառն փշրէ զմայրս, և մանրէ տէր զմայրան լիբանանու :

Անդրեասդ զնոսա որպէս զմատաղա-
տուն լիքանանու. որ սիրելին է որ-
պէս զորդիս միեղջերուի:
Ձայն ան հատանէ զբոց ՚ի հրոյ. ձայն
տեառն շարժէ զանապատն, և խուռ-
վեցուցանէ տէր զանապատն կադէս:
Ձայն տեառն հատուատէ զեղջերուս,
և յայտնի առնէ զանտառս:
Ի տաճարի նորա ամենեքեան ասասա-
ցեն զփառս նորա:
Տէր զջրհեղեղս նստուցանէ և ցածու-
ցանէ. թագաւորեսցէ տէր յաւիտեան:
Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ
տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր
՚ի խաղաղութիւն:

Ընթերցուածս յԵզեկիէլէ մարգարէէ:

Ա յսպէս ասէ տէր. և ցանեցից ՚ի վե-
րայ ձեր ջուր սուրբ, և սրբեսջիք յա-
մենայն պղծութեանց ձերոց, և յամե-
նայն կռոց ձերոց սրբեցից զձեզ: Ա-
տացից ձեզ սիրտ նոր, և հոգի նոր նորո-
գեցից ՚ի ձեզ. և հանից զսիրտ քարե-
ղէն ՚ի մարմնոյ ձերոց, և տացից ձեզ

սիրտ մարմնեղէն. և զհոգի իմ տայց ձեզ: Եւ արարից՝ զի յարդարութիւնս գնասջիք, և զիրաւունս իմ պահիցէք և առնիցէք զնոսա, և բնակիցէք յերկրին զոր ետու հարցն ձերոց. և եղիջիք ինձ ՚ի ժողովուրդ, և ես եղէց ձեզ յաստուած աւետ տէր:

Պօղոսի առաքելոյն ՚ի Գաղատացւոց:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ՚ի քրիստոս յիսուս, զի ՚ի հաւատոյն արդարասցուք: Այլ եբեւ եկին հաւատքըն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք. քանզի ամենեքին որդիք աստուծոյ էք, հաւատովք ՚ի յիսուս քրիստոս: Որք մկանգամ ՚ի քրիստոս մկրտեցարուք, զքրիստոս զգեցեալ էք. չկայ իսիր, ոչ հրէի՝ և ոչ հեթանոսի, ոչ ծառայի՝ և ոչ ազատի. ոչ արուի՝ և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ՚ի քրիստոս յիսուս: Ապա եթէ դուք քրիստոսի էք, ուրեմն աբրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն ժառանգք:

Ալէլուիա ալէլուիա:

Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։

Սբբոյ աւետարանիս ցՃ փ՝ որ ըստ ցՈվհաննու։

Այս էր այր մի՝ ի փարիսեցւոց անսի, Նիկոդիմոս անուն նորա, իշխան հրէից։ Սա եկն առ յիսուս՝ ի գիշերի և ասէ ցնա. ռաբբի՝ գիտեմք թէ յաստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դուդ առնես. եթէ ոչ աստուած իցէ ընդ նմա։ Պատասխանի ետ յիսուս՝ և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծընանի վերստին, ոչ կարէ մտանել յարքայութիւնն աստուծոյ։ Ասէ ցնա Նիկոդիմոս. զիարդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծեր հնացեալ իցէ. մի թէ մանրէ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ։ Պատասխանի ետ յիսուս՝ և ասէ. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի՝ ի ջրոյ և՝ ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն աստուծոյ. զի ծնեալն՝ ի մարմնոյ՝ մարմին է, և ծընեալն՝ ի հոգւոյ՝ հոգի է։ Մի զար-

մանար, թէ ասացի քեզ, պարտ է ձեզ ծնանիլ վերստին. զի հողմն ուր կամի՝ շնչէ. և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ, կամ յո՞ երթայ։ Նոյնպէս և ամենայն ծնեալն ՚ի հոգւոյն։

Եւս խաղաղութեան ըմբռ աղաչեցուք։

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց ըմբռ աղաչեցուք։

Լուր տէր և ողորմեա։

Վասն սրբելոյ զկնի ծնեալ զայս ներգործութեամբ հոգւոյն սրբոյ, ըմբռ աղաչեցուք։

Վասն որդիս լուսոյ առնելոյ զոր ՚ի սմա մկրտին, ըմբռ աղաչեցուք։

Վասն աստուածային զօրութիւն զգեցուցանելոյ սորա՝ ընդդէմ հակառակ կամարտին օծմամբ իւղոյս այսմիկ, զնոր։

Վասն անօթ սրբութեան լինելոյ սորա առ ընդունելութիւն աստուածատուր խորհրդոյն, ըմբռ աղաչեցուք։

Վասն գնալոյ սորա յարժանաւոր հրաւէր վերստին կոչման յոր կոչեցաւն, զնոր։

Վ֊ան ամուր և հաստատուն չնորհել
սորա զգիտութիւն առաքելական հա֊
ւատոյ, զտէր աղա ։
Վ֊ան ժառանգորդս առնելոյ զսա ար֊
դարոյն խոստմանց, զտէր աղա ։
Վ֊ան փրկելոյ զսա և զմեզ յամենայն
նեղութենէ, ի բարկութենէ, ի վըշ֊
ասց՝ և ի վտանգից, զտէր աղա ։
Ընկալ կեցո և ողորմեա ։ Օ֊ամենասըր֊
բութի աստուածածինն ։ Ընդ և սմա ։
Օ֊անձինս մեր ։ Ողորմեաց մեզ տէր ։

Ընդ Հաւանայն ասէ երէց Տէր ողորմեա, և
ապա Ընդ ։

Պատ տէր՝ զօրութեամբ քով մեծաւ
արարեր զծով և զցամաք, և զամենայն
որ ի նոսա արարածք կեցեն. որոշեցեր
և կացուցեր զջուրն ի վերոյ քան զեր֊
կինս՝ ի բնակութի երկնաւոր զուարթ֊
նոյն, որ կան յանդադար փառաբա֊
նութեան քում ։ Ընդ աքեցեր և զսուրբ
զառաքեալն քո, տալով նոցա հրաման
քարոզել և ուսուցանել զամենայն հեթա֊

նոսա՝ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Ալ և սահմանեցեր անաւետ բանիւ քով՝ ոչ ծնեալոյն ի քոյ և ի հոգւոյ ոչ մոռանել յարքայութիւնն աստուծոյ։ Յորմէ բանէ զարհուրեալ ծառայս քո, և փախեալով մշանջենաւոր կենացդ, եկն կամաւ ի մկրտութիւն հոգեւոր քոյս այսորիկ։ Ասէ՝ աղաչեմք զքեզ տէր, առաքեա զհոգի քո սուրբ ի քուրս յայս, և սրբեա զսա, որպէս սրբեցեր զյորդանան լճանելով քո ի նմա՝ ամենասուրբդ ի մեղաց տէր մեր Յիսուս քրիստոս, յօրինակ այսմ աւազանի մկրտութեան՝ վերստին ծննդեան ամենայն մարդկան։ Եւ ընդրեա սմա զքուրս զայս յորում մկրտի այժմ, ի թողութիւն մեղաց՝ և յընդունելութիւն հոգւոյդ սրբոյ, յորդեգրութիւն հօրդ երկնաւորի՝ և ի ժառանգութիւն արքայութեանդ երկնից։ Որպէս զի սրբեալ ի մեղաց, ի հաճոյս կամացդ քոց կեցցէ յայսմ աշխարհի. և ի հանդերձելումն զանապատ

բարիան ընկալցի ընդ ամենայն սուրբս քո. և ուրախութիւք գոհասցի և միշտ փառաւորեսցէ զքեզ ընդ հօր՝ և սբ հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ի՞ սպա ինչահայրն պանի՛ ի ՌՐԻԱՑՈՒՑԱՆԵԼ ՂԵՐԵԱՑԱՆ, և ԲԵՐԵ ՂԵՐԵԱՑԱՆ ՌԵՐԻ ԱՍ ԸՆԻԵՐ ՀԱՆԱՑԻՆ. և ասէալ ՀԱՀԱՆԱՑԱՆ ՂՍՈՒՐԲ ՀՐԱՈՆՆ Ի ՅԵՈՆ և խալինՀԷ Ի ՎԵՐԱՑ ԼՐՑԱՆ ասելով:

Ալելուիա ալելուիա ալելուիա:

Օրհնեսցի և սրբեսցի Ջուրս այս:

Ո՛ՂԵՐ ՂՍՈՒՐԲ ՀՐԱՈՆՆ ՅԱՈՂԱՆՆ ԽաչանմԱՆ ասելով:

Ա՛ռաքելոյ այգաւնոյ ի՛ջանելով մե՛ծա- ձայն հընչմա՛մբ ի՛ բարձա՛ծնց, ի՛ նմա՛ նուիրեաւն լուսոյ փայլման հրաշալեաց անկիզելի՛ զաշա՛կերտսն, մի՛ նչդեռ նը՛ատեի՛ն ի՛ սուրբ վե՛րնատա՛նն: Ա՛ն նուիրական այգաւնի, ա՛նքննելի՛ր քըն- նէ ըզևսա՛ս աստուածո՛ց. զոր առեա՛լ ի՛

դձ

հօրէ պատուէ զահաւոր և ըզմիւսանգամ գամ գալ՝ դատել. զի՞ր քարո՞զեցի՛ն հաճոյական։ Օ՛րհնութիւն՝ի բարձեա՛ն, ելոզին՝ի հօրէ հնգետոյն սըրբոց. որո՛վ առաքեա՛լքն արբեցա՛ն անմահական բաժակա՛ն՝ և հրաւիրեցի՛ն զերկիրս՝ի յերկինս։

Ա՛- Քրիստոսն կանգնի ՚ի մեռելոց յաւիտեանն. և փառաւորեսցի՛ անէ զաղօթս։

Որ կոչեցեր զծառայս քո տէր՝ի սըրբութիւն և՝ի լուսաւորութիւն մկրտութեան, աղաչեմք զքեզ տէր՝ արա զսա արժանի մեծի շնորհացդ քոյ։ Ա՛ՙր կեա՛՝ի ամանէ զհնութիւն մեղացդ, և նորոգեա՛՝ի կեանս նորս. և լցո զօրութեամբ հոգւոյդ սրբոյ՝ի նորոգութիւն փառացդ քրիստոսի քոյ։ Ա՛- քեզ հզօրիդ՝ և միածնի որդւոյ քո՝ և աղաւնի սուրբ հոգւոյդ վայելէ՝ իշխա։

Ա՛ոյնպէ՛ զահանայն. Աստեղացա զմինչ խնդրեմ։

Քահանայն ասէ. Հաւատք, Յոյս, Սէր, և Ակնառութիւն: Անկանիլ և արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիւացն, և ծառայել ոմն: Աղեխ կինէ: Ընտ ասէ քահանայն. Ընտ հաւատոյ քոյ եղիցի քեզ:

Ապա իջուցանէ զերախայն ի ջուրն. և զինէ զանունն ասելով: Այս անուն ծառայս աստուծոյ, ելեալ յերեխայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Գնեալ արեամբն քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն հօրն երկնաւորի, լինիլ ժառանգակից քրիստոսի, և առնմար Հոգւոյն սրբոյ:

Ձայս հրանգամ ասելով երիցս լաղէ զերեխայն ի ջուրն, յօրինակ երեքօրեայ լաղմանն քրիստոսի: Ի սկզբ՝ յասելն, Յանուն Հօր, ընկղմէ հրանգամ. յասելն, և Որդւոյ, ընկղմէ հրանգամ և. և յասելն, Հոգւոյն սրբոյ, ընկղմէ երրորդել: Եւ այսպէս կոչեցին անուանն սրեանսորբ երրորդութիւնեան լինի հրանգամ, և ընկղմուցին երեք անգամ: Եւ հանել ի ջրոյն՝ ասէ:

Ողք ՚ի քրիստոս Մկրտեցայք, զքրիստոս զգեցեալ էք. ալէլուիա: Ողք ՚ի հայր լուսաւորեցայք, սուրբ հոգին բերկրեսցի ՚ի ձեզ. ալէլուիա:
Բազում նեղութիւնք են արդարոց:

Փառք հօր և որդւոյ և:

Ապա ասէ ղարիան:

գձ ԱՒր համագոյդ ես հօր և որդւոյ, անճառաբար բըղխուեր ՚ի մէջ էիր. ահյսօր բըղխեցեր զուր կենդանի յերուսաղէմ. հոգի աստուծոյ ձըգ ՚ուր վեա: ԱՒր ծրարչակից ես հօր և որդւոյ, որով կենդանացնեալք ՚ի քո աւրհրածք. ահյսօր որդիս աստուծոյ ծնանիս ՚ի զուրց. հոգի: ԱՒր փառակից ես հօր և որդւոյ. և քննես զկամս աստուծոյ. ահյսօր խորհրդիս համառոտից զյիմարս աշխարհի արարեր. հոգի աստուծոյ ձըգ:

Պօղոսի առաքելոյն ՚ի հռոմայեցւոց թղթոյն:

Եթէ ոչ գիտէք՝ զի որ միանգամ մկրտեցաք ՚ի քրիստոս յիսուս, ՚ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ. զի որպէս յարեաւ քրիստոս ՚ի մեռելոց փառօք հօր, նոյնպէս և մեք ՚ի նորոգութիւն կենաց շրջեսցուք: Ո՛չ ի եթէ տրնկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք: Ո՛չայս գիտասջիք՝ զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա, զի խափանեսցի մարմին մեղացն, մի և ծառայել մեզ մեղացն: Ո՛չ որ մեռանին՝ արդարացեալ է ՚ի մեղաց անտի: Իսկ եթէ մեռաք ընդ քրիստոսի, հաւատամք՝ թէ և կեցցուք ընդ նմա: Գիտեմք՝ եթէ քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ և սիրէ: Ո՛չ որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է աստուծոյ: Նոյնպէս և դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս աստուծոյ ՚ի քրիստոս յիսուս ՚ի տէր մեր:

Աւետիս Օրթի ։

Սրբոյ Աւետարանիս ցՅ՚ Ք՚ի որ ըստ Մատթէոսի ։

Յայնժամ գայ Յիսուս ՚ի գալիլէէ ՚ի յորդանան առ Յովհաննէս՝ մկրտիլ ՚ի նմանէ ։ Եւ Յովհաննէս արգելու զնա՝ և ասէ, ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտիլ, և դու առ իս գաս ։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա, Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւնս . և ապա Թոյլ ետ նմա ։ Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջուր անտի . և ահա բացան նմա երկինք . և եռես զՀոգին աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ՚ի վերայ նորա ։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէ, դա է որդի իմ սիրելի . ընդ որ հաճեցայ ։

Հայր մեր որ յերկինս ։

Ե՛ւ զնի՝ շարական ։

դկ Ա՞ղբիւր կենաց բաշխող հնարհաց հա՛ դնդ իջեա՛լ ՚ի բարձանց . զանապականն պարգե՛ւն քո՞ բաժանեցեր յաւուրք

եաման։ Ա՛ր ի վերայ Լուցըն գոլով աստղածանէիր զաւրաւածս. իջեալ ի ջուրս աւազանի՞ն ծնանիս որդիս աստուծոյ։ Ա՛ր զարդարեալ նորոգես միշտ ընտիր քո ղեկեղեցի. պես պես շնորհաց քոց պարգեւո՛ք փայլին մանկունք սորա։

Աղօթք։

Ար լուսաւորեցեր զաւրաւածս քո քրիստոս աստուած, ծագելով զլոյս աստուածգիտութեան յանձինս մեր. և այժմ ազատեցեր զծառայս քո զայս, սրբեցեր և արդարացուցեր, և եաւր սմա զորդեգրութե պատիւն։ Շնորհեա սմա տէր՝ և զկենացն հաւատարութիւն, և պարգեւեա զհանապազորդն անապականութիւն, խառնեալ զսա ընդ արդարս քո՝ և ի թիւս սրբոց քոց. և ընդ նոսին փառաւորել զքեզ ընդ հօր՝ և ընդ սրբոց հոգ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուած, որ մեծդ ես և մշտնջենաւոր՝ և ամենայն գաղտնեաց գիտակ. որ սուրբ ես և ՚ի սուրբս հանգուցեալ, փրկիչ ամենայն մարդկան: Որ շնորհեցեր զգիտութիւն ճշմարտութեան քո՝ ամենայն հաւատացելոց. և եւսուր իշխանութիւն լինիլ որդիս աստուծոյ՝ ՚ի ձեռն վերստին ծննդեան ջրոյ և հոգւոյ: Որ և զծառայս քո պայս անուն՝ նորոգեցեր քաւութիւք նր աւազանի քո: Սուրբ արա զսա տէր՝ ճշմարտութեամբ քով, և լուսով շնորհաց սուրբ հոգւոյդ. զի եղիցի տաճար և բնակարան աստուածութեանդ քո. և կարասցէ գնալ յամենայն ճանապարհս արդարութեան. և կալ համարձակութեամբ առաջի ահաւոր բեմի միածնի քո՝ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի: Որում քեզ հօր ամենակալի, և կենդանարար և սրբասիրէ սուրբ հոգւոյդ՝ վայելէ:

Նոյ ժառանգն զսուրբ էրէն ՚ի յափն էր, և ասէ ցարեան:

դձ

Ու յառաջագոյն յօրէնս յօրինակ մի-
ածնի քո հայր երկնաւոր, եւտուր զօ-
րութիւն ի լինել սրբութեան յա-
ծումն օծելոյց. հեղ և լինելոյս յայս
զերկնային քո զչնորհս: Ու խոնարհե-
ցար ի մեզ լինել թափեալ անուն օծ-
եալդ աստուծոյ, խառնելով զաստ-
ուածութիւնդ՝ օծեալ ըզմարդկայինն
առեր բնութիւնն. հեղ և: Ու ի
վերնատունէնն սուրբ լինելով յա-
ռաքեալն օծումն օծելոյց. և օծ-
մամբս այսու վերաստեղծեր նոքօք զը
հոգեղէնս որդիս աստուածոյ. հեղ
և: Ու զարդարեա սուաւ ի հանդերձս
լուսափայլս և գերապայծառս զհարս-
նացեալ եկեղեցի քո սուրբ. մանր
կունըք սորա ընդ հրեշտակս օրհնեն
սուրբ զերրորդութիւնդ:

Ա- Կնդէ սուրբ է-ղիր զԱ՛կապն, ասելով:

Իւղ անոյշ յանուն յիսուսի քրիստոսի, հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգեւացն անապականութեան։

Օ՛ձէն * Կնիքս յանուն յն քի լուսաւորեսցէ զաչս քո. զի մի երբեք նիրհեսցես ի մահ։

Օ՛ճանջան * Օծումն սրբութեան՝ եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն։

Օ՛հոպոպելիան * Կնիքս յանուն յն քի, եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի կեանս։

Օ՛բերան * Կնիքս յանուն յն քի, եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ և դուռն ամուր շրթանց քոց։

Օ՛յեոան * Կնիքս յանուն յն քի, եղիցի քեզ պատճառ բարեգործութեանց առաքինի գործոց և վարուց։

Օ՛նէրպան * Կնիքս աստուածային՝ սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ, և հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քումմ։

Օ՛չամայն * Կնիքս յանուն յն քի, եղիցի քեզ վահան ամրութեան, որով

կարասցես զամենայն նեռս մուխս չա-
րին ելևլուցանել։

Օ՛ոպան * Կնիքս աստուածային՝ ուղղեա-
ցէ զգնացս քո՛ ի կեանսն յաւիտենից.
զի մի սասանեսցիս։

Ը՝ ապա ասէ. Խաղաղութիւն ընդ քեզ
վրկեալդ աստուծոյ։ Խաղաղութիւն
ընդ քեզ օծեալդ աստուծոյ։

Ը՝ Հնչահայրն ասէ. Ը՛ր ընդ հոգւոյդ
քումմ։

Ը՝ ապա ղեկցո՛ցանէ հանդերձ ապիսակ և նոր,
և կապէ գնարօսն, և պայ ղերկո՛ւ վառեալ մոմե-
ղէնս ի ձեռն. և Հահանայն ասէ ղարեկան։

Ա՛ստուած խոսեցաւ ի բարձունս, ը՛ր
արար՛ք բո՛ նահկիչք երկրի, որ եկն և
վրկեաց զամենայն արարածս. զի զա-
նո՛ն սեաւրն կարդա՛ցուք, և տո՛ւք
օրհնութի՛ւն ի բարձունս։ Նո՛ր խոսա-
կի՛ կոչեցա՛ք ի քրիստոս, եղա՛ք բա-
ժի՛ն սեաւն և ժառա՛նգակից քրիս-
տոսի. զի զա։ Ի՛ վի՛մն կենդանա՛ւթե

բձ

ճաշակեցաք զի քաղցր է տէր, և յիւղ
սրբութեան օծաք հաւատով. զի ։
Ի քեզ եմք ապաւինեալ ո՛ր մայրդ ես
և՛ աղախին քրիստոսի. լեր բարեխօս
վասն մեր, զի զանուն տեառնըն կար-
դացուք և զքեզ մեծարեալ պա-
տուեսցուք ։

Ի՛ սէ ղաղօնա՝

Օրհնեալ ես բարեխնամող աստուած,
որ զգեցուցեր ծառայի քում հանդերձ
փրկութեան և պատմուճան ուրախու-
թեան. և եդեր սաղաւարտ փրկու-
թեան և պսակ շնորհաց ՚ի գլուխ սո-
րա, և զէն անվթար ընդդէմ հակա-
ռակամարտին ։ Վ՚ասն որոյ և մեք գո-
հութեամբ փառաւորեսցուք զքեզ
ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Խաղաղութիւն և հաստիչ խաղաղու-
թեան յիսուս քրիստոս, օծեալ և ել-
կրպագելի և քահանայապետ յաւիտե-

նից ։ Ընդ ընկալաւ այս անուն ծառայ
քն՝ զօծումն սրբութեան քո . վասն ո
րոյ աղաչեմք զքեզ տէր , մի՛ զնզլեսցի
սա՛ի դպրութենէ քումմէ կենաց ։ Ել
մեք արժանի լեցուք երկնային փառաց
քոց , յորժամ պսակես զսուրբս քո և
պսիրելիս անուան քում սրբոյ . և ան
դադար փառաւորեսցուք զքեզ ընդ
հօր և սրբոյ հոգւոյդ , այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Ձանէ ՚ի բեմն պնորընծայն՝ և ասէ ։

Ամէն առաջի սեղանոյ աստուծոյ առ
աստուած , որ ուրախ առնէ զմանկու
թիւն իմ ։ Դատ արա ինձ աստուած ,
և լսաւ արա ինձ ՚ի դատաստանի ի
մում ։

Ել՝ պինի խոնարհեալ՝ ասէ երէց ։

Ընդ անուն ծառայ քրիստոսի՝ եկեալ
յերախայութենէ ՚ի մկրտութիւն , ՚ի
մկրտութենէ յերկրպագութիւն ։ Ել
կրպագէ սուրբ սեղանոյս . երկրպագէ
սուրբ խորանիս . երկրպագէ սուրբ ա

ասպանիս . որ մերկացաւ զանօրէնու-
թիւն , և զգեցաւ զլոյս աստուածգի-
տութեան :

Ե՛ հաղորդէ ընդլնծայն ՚ի սուրբ մարմնոյ և յա-
րենէ փեսան . և ասէ ՀԱՀԱՆԱՅՆ ՊԱՂՕՂԱ :

Տէր ողորմեա , տէր ողորմեա , տէր ողորմեա :

Փառք քեզ Թագաւոր յաւիտենական ,
որ աճեցուցանես և լցուցանես զեկե-
ղեցի լուսով հաւատոյ անհամար վըր-
կելոցս ՚ի ձեռն ճշմարիտ աստուածա-
ծանօթութեան քրիստոսի քո : Օ՛ որս
վերատին ծննդեամբ արժանի արարեր
որդեգրութեան հօրդ երկնաւորի ,
հաղորդելով մարմնոյ և արեան միած-
նի քո :

Ե՛ արդ տէր՝ պահեա զսա սրբու-
թեամբ հոգւոյդ սրբոյ , առնել անա-
րատութեամբ զկամս քո , և անմեղու-
թեամբ ժամանել ՚ի կեանդ յաւիտե-
նից : Ե՛ զմեզ զամենեսեան զմերձա-
ւորքս սորա օրհնեա շնորհօք և մար-
գասիրութեամբ տեառն մերոյ յիսու-

ամի քրիստոսի ։ Ընդ որում քեզ հօր , և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ , այժմ և ։

Ա֊ փայ ընդունչային ի գերիս կնչահօրն ես չահանային ի յերես կալով, սարիաւագն չարոզէ ։

Սուրբ խաչիս աղաչեցուք զտէր ։

Ա֊ չահանայն ասէ ղաղօթս ։

Ողք մկրտեցան և լուսաւորեցան և եռուր նոցա զզօրութիւն քո տէր . տուր և հաստատութիւն , կալ միշտ ի սրբութենէ քումմէ , և պայծառանալ ի լոյս աստուածգիտութենէ քո ։ Պահեա զսա հաստատուն ի հնարհս քո զոր եռուր . հեռացո զսա ի մոլորութենէ թշնամւոյն , և ի պատրանաց նորա , և ի գործոց ա֊ նօրէնութեան . զի լուսով գիտութեան քո գնացէ ի պատուիրանս քո . և ու֊ զիղ վարուք հասցէ ի խոստացեալ հան֊ գիստն քո յաւիտենից ։ Օ՜հրեշտակ խա֊ զաղութենէ քո առաքեա տէր , որ եկեալ պահեսցէ զսա ։ Ա֊ւ մեք ամենեքեան արժանի լինուք սպասել յուսով՝ յայտ֊ նութեան տեառն մերոյ Յիսուսի քրիս֊

առաւ։ Ընդ որում քեզ հօր՝ և հոգւոյդ սրբոյ։

Համբուրեն զնոր ձկրպեալն, և ասեն։

դկ Որ անտես և անքննին քառակերպին ցերեկն վեհապոյն, ի փըրկել զմեզ եկեալ անմահիկս Թագաւորն, օրհնութիւն առաքոյլն։ Աւաքի հրեշտակապետան առ սերովբէն հոլեղէն, առ տէր և արարչին ամաքեանն ի հօրէ մարմնանայ ի քէն վիճակոյն։ Ընկերատէր ի յորդանան վկայեալ հօր և հոգւոյն. ճխանանաց ի բարձրնըս երգեին մանկունքն, օրհնութիւն որդւոյ դաւթի։

Փառք հօր և որդւոյ և։

Ես յիշանել նորա ի ջրոյն ահաւ բացան նըմա երկինք. սուրբ հոգին աշ ղաւնակերպ գայր ի վերայ կենարարին, օրհնութիւն առաւ։

Ես ապա ասէ ցարդոլ։

Սուրբ խաչիւս աղաչեցուք զտէր մի։

Պահպանիչ և յոյս։ Ձայր մեր որ յեր։

Յետ դէրպռ֊ընեան առեալ փանին ՚ի սո֊րբ
եկեղեց֊ոյն վմանու֊ն ՚ի փո֊ռն ասելով ։

Լ֊յա ՚ի լո֊սոյ ՚ի հօրէ՛ առաքե՛ցար և մարմնացար ՚ի սուրբ կո֊սէն, ղև վե֊րըստի՛ն նորո՛գեացես զապականեա֊լն ա՛դամ ։ Դո֊ւ ա՛ստուած ՚ի յերկրի՛ ե֊րեւեցար և ընդ մարդկա՛ն շրջեցար, և վրկե՛ցեր զմեզ ՚ի սե՛ղերըս յանէծի՛ն ադամայ ։ Ք֊եզ ՚ի յերկնից վըկայեա՛լ հօրէ՛ քո՛ ձայն . ասէ դա՛ է իմ ո՛րդի . և սուրբ հոգի՛ն ըզքեզ յայտնեաց ա֊ղա֊ռնակե՛րտ երեւմամբ ։

Ա֊ռ եղեալ ՚ի գէրէս մօրն ասէն աղմո ։

Դո֊ւ ես որ հաներ զիս յարգանդէ,
յոյս իմ՚ի ստեանց մօր իմոյ ։
Ի֊ քեզ անկայ ես յարգանդէ, յորո֊
վայնէ մօր իմոյ դու ես աստուած իմ ։

Պօղոսի ՚ առաքելոյն յեբրայեցւոց թղթոյն է ընդ
թերցուածս ։

Ընդ՝ որում՝ հեռեւեա֊ մանկունք հաղորդեա֊

ցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութիւք կցորդ եղև նոցունց. զի մահուան իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ. և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն: Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակն աբրահամու բուռն հարկանէ. ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յաստուածաւակոյս կողմանէ անսի, առ ի քաւել զմեղս ժողովրդեանն:

Ալէլուիա ալէլուիա:

Ի բերանոց մանկանց տղայոց և ստնդեացց հաստատեցեր զօրհնութիւն:

Սուրբ Աւետարանիս ՅՃ գլ. որ ըստ Մարկոսի:

Ընկն ի կախաւնայում. և իբրև եմուտ ի տուն, հարցանէր զնոսա, զինչ վի-

ՃՀԼՔ ՂՃԱՆԱՊԱՐՀԱՅՆ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ։ ԱՒ ՆՍՔԱ ԼՈՒՌ ԼԻՆԵԼԻՆ . ՔԱՆԶԻ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՎԻՃԱԿԻՆ ՝Ի ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԹԷ՝ ՈՒԼ ՄԵԾ ԼԻՑԷ ։ ԱՒ ԻՐՐԻՒ ՆՍՏԱԼ՝ ԿՈՉԵԱՑ ՂԵՐԿՈՏԱՍԱՆԱՆ , և ԱՍԷ ՑՆՈՍԱ . ԵԹԷ ՈՔ ԿԱՄԻ ԱՌԱՋԻՆ ԼԻՆԵԼ՝ ԵՂԻՑԻ ԱՄԵՆԵՑՈՒՆ ԿՐՏԱՍԵՐ՝ և ԱՄԵՆԵՑՈՒՆ ՊԱՇՏՕՆԵԱՅ ։ ԱՒ ԱՌԵԱԼ ՄԱՆՈՒԿ ՄԻ ԿԱՑՈՑՑ ՝Ի ՄԷՋ ՆՈՑԱ . և ԸՆԿԱԼԵԱԼ ՁՆԱ ՝Ի ԳԻՐԿԱ ԻՐ , ԱՍԷ ՑՆՈՍԱ ։ ՈՐ ԻՄԱՆԱԿԱՄ ՅԱՅԱ ՊԻՍԻ ՄԱՆԿՈՒՑ ԸՆԿԱԼՑԻ ՅԱՆՈՒՆ ԻՄ , ՂԻՍ ԸՆԴՈՒՆԻ . և ՈՐ ՂԻՍ ԸՆԴՈՒՆԻ , ՈՉ ՂԻՍ ԸՆԴՈՒՆԻ . ԱՅԼ ՁԱՅՆ ՈՐ ԱՌԱՔԵԱՑՆ ՂԻՍ ։

Շ. ՊՐԱԿԱՆ .

ԴՃ

Ա՛ՆՈՐ ՍԻՈՆԻ ԾՆՆԵԱԼ ՄԱՆԿՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԱՇԱՀԱՆԱՆ . ՀՆՈՐՀԱՒԱՐԴԵԱՒՆՔ ՀՈԳՒՈՒՆ ՁԵՐ . ՕՐՀՆԵՑԷՔ ԸՂՀԱՅՐՆ ԵՒՐԿ ՆԱՒՈՐ ՅԱՒՈՒԲ ԾՆՆԴԵԱՒՆ ՍՐՔՈՒՀՈՒՆ ԿՈՅՍԻՆ . ՅՈՐ ՕՐՀՆԵՑԱՒՆՔ ՅԱՆԻՆ ԾԻՑ ՆԱԽԱՆՇՈՒՆ ։ Ա՛ՐԵԱՒՔ ԳԱՒԻՆՆ ԱՆ

արա՛տի փըրկեա՛լ ժողովուրդք. յաւուր ծնընդեա՛ն մեր անտա՛նելոյն, գովեցէ՛ք ըզմիածինն որ հաճեցա՛ւ առնուլ մարմի՛ն ա՛նաբրմն՝ ի նմանէ. յոր օրհնե՛ւ։ Յառաւաւո՛ւրվն ընորհաց հոգւոյն լուսազարդեա՛լ ա՛զգք հեթանո՛սաց. յաւուր ծնընդեա՛ն մեր բանի՛ն ծնո՛ղն. զիաւուրակից որդւոյ գհոգին բարեբա՛նեցէ՛ք հա՛ւատո՛ւր երգով. որ մանրա՛զարդեա՛ց զմարմնա՛ն ոդւոյն։

Ի՝ տահանայն ասէ ցաղօթս ցայս։

Օրհնեա՛լ ես տէր աստուա՛ծ աւետնական, և օրհնեա՛լ է անբաւ գութ մարդասիրութեան քո, որ արժանի արարեր զծառայս քո զմատուցեալս առ քեզ լինել հաղորդ հոգւոյդ քո սրբոյ։ Ի՛ւ այժմ աղաչեմք զքեզ, ուղղեա զգնացս սորա, և ամրացո զսա յերկիւղ քո. զգուշացո զսա լուսաւոր պատուիրա-

նաց քոց, և զամենայն աւուրս կենաց իւրոց խաղաղութեամբ և առանց մե- ղաց պահեա: Ընդհօք և մարդասի- րութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի քրիստոսի. ընդ որում օրհ- նեալ ես հայր ամենակալ՝ ընդ կենդա- նարար սուրբ հոգւոյդ, այժմ և:

Սուրբ խա: պահոտա: Հայր մեր:

Ե- յաւուրն ուրբաթի վերացո-յանէ չա- հանայն պնաւգին՝ այինչն պնաւօպն, ՚ի գլխոյ նորոգ մկրտելոյն, և ասէ պաղօնս:

Տէր՝ որ լուսով գիտութեան քո առաջ նորդեցեր ծառայիս քո վերատին ծնա- նիլ ջուր ջրով և հոգւով սրբով. հան- ատատեա զսա ՚ի հաւատս և ՚ի սէր քո, փրկեա զսա ՚ի չարէ՝ և կեցո: Ընդհօք և գթութեամբ մխածնի որդւոյ քո. ընդ որում օրհնեալ ես հայր ամենա- կալ ընդ կենդանարար և աղատիչ սո- հոգւոյդ, այժմ և:

Ե՞ր չահանայն լուանայ վնոր Տիրեալ Տանուէն, և ասէ ցաղօքս ցայս։

Որ զերծումն ի մեղայ ՄիրտուԹեամբ սուրբ աւազանին ի ձեռն ծառայիս քո պարգեւեցեր. և այժմ աղաչեմ զքեզ տէր, զայս երեսաց քոց ծագեա ի սիրտս սորա. սպառազինեա զսա հաւատով ընդդէմ հակառակորդին. ի վերայ վիմի պատուիրանաց քոց հաստատեա զսա. և զդգեստս անապականուԹեան սորա յամենայն մեղայ աղտեղուԹենէ սորա անբիծ և անարատ, և զդրոշմ հոգւոյդ սրբոյ մինչեւ յաւուր ահեղ դատաստանին ամբողջ պահեա. և քաւիչ լեր մեզ ըստ բազմութեան գԹուԹեանքումս։ Ո՛վ բարերար և մարդասէր ես աստուած գոլով. և մեք փառս մատուցանեմք հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ զգեցար զքեզ՝ զտէրդ և զաստուածդ մեր, և խոնարհեցայց քեզ ըղ

գլուխս իւր. պահեա անյաղթելի ի պատերազմսդ հպարտացեալ թշնամ ւոյն, և քո անապական պահպանդ միշտ չեւ ցվախճան յաղթող զամենեսեան ցոյց: Օ՛ի քո է ողորմիլ և կեցուցանել զմեզ՝ քրիստոս աստուած մեր. և քեզ փառս վերադարձեմք ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և:

Ո՛ր բարձրացուցեալ զգլուխ մանկանն, և առեալ զմեզ՝ լուանայ զկերեսս նորա, ասելով:

Ընդարձակեալ, սրբեցեալ, զօրացիր, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և:

Իսկ յետ չորեսուն աւուր գան ի դուռն եկեղեցւոյն. և մայրն չորեսուն ծունր կրկնէ, և առնու զպղպջն ի գիրկն: Ո՛ր չհանայն ասէ զաղօթս զայս:

Տէր աստուած մեր, որ եկիր ի փրկութիւն ազգի մարդկան, նայեա ի վերայ աղախնոյս քո այսորիկ. և տուր սմա՝ ապաւինիլ ի սուրբ կամարդ

և առաքելական եկեղեցի քո. և արժանացս զսա մնանել ի տաճար սուրբ քո, և հաղորդիլ փրկական մարմնոյ և արեան քո: Ի բաց լուա զաղտ մարմնոյ և զբիծ հոգւոյ սորա ի լրումն կատարման քառասնօրեայ աւուրցս. և որբեւ եա զսա ի ձեռն պատուական ուխտի քահանայիցս. և արժանացս մնանել ի սրբութիւն վտառաց քոց, և վայելել զանապատ բարիսն որ ի քէն: Ընդ քեզ վայելէ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Որ նորոգութիւնդ եա հնացելոց, և կեանք՝ մահկանացու ազգի մարդկան. դու եա զօրութիւն և օգնութիւն ապաւինելոցս ի քեզ: Հաստատուն լիցի հնարհք ողորմութեան քո ի վերայ ողջոյս, որ եկեալ կայ քառասնօրեայ յերկրպագութիւն սուրբ տաճարիդ. զի եղիցի հզօր և աներկիւղ ի թշնամւոյն ներգործութենէ՝ պահպանութիւք աջոյդ քո սրբոյ. զի դու եա մեր յաջմինեաին՝ և բարեբար ամենեցուն:

Պահեա զսա և սրբեա ճշմարտութ-
քով. և արժանացո ընդունիլ զմարմին
և զարիւն քո սուրբ, և զառհաւատ-
չեայ հոգւոյդ սրբոյ։

Ընդաչեմք զքեզ տէր, զի եկեսցէ ՚ի սա
հոգի սուրբ, հոգի հեղութեան, հո-
գի ճշմարտութեան, հոգի որդեգրու-
թեան. լինել անբիծ և անարատ, պը-
տակիլ խաչիւ քով ընդ աչմէ քումմէ
յարքայութեանդ երկնից։ Ն՚ը քեզ
ընդ հօր և սուրբ հոգւոյդ վայելէ
փառք իշխանութի՛ն և պատիւ, այժմ։

Ն՚ր Տպանէն յեկեղեցին ասելով։

Ամէն առաջի սեղանոյ աստուծոյ առ
աստուած, որ ուրախ առնէ զման։
պվօխն լման ասա։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք։

Ի մէջ տաճարիս և առաջի ճգընկալ։

Ն՚ր փանի դէպ ՚ի խորանն՝ ասելով։

Ամարմնացեա՛լդ ՚ի կուսէ՛ն նախայաւե-
տեա՛ն բանդ, այսօր ՚ի տաճարն եկիր

կատարել զօրէնս վասն փրկութեան հեթանոսաց։ Որ յանարուեստ աթոռ նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց. այսօր ի սիմէօնի բառնալով ի գիրկս. որ ընծայեցեր ըզմեզ ի կեանսըդ յաւիտեան։ Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատուս ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ եւ զիս ըզքաղամաճկալ ի կապանաց մահու ի կեանսըդ յաւիտեան։

Աղերսիա օրհն։

Սրբոյ Աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

Ու երբեք լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա Երուսաղէմ յանդիման առնել տեառն, որպէս և գրեալ է յօրէնս տեառն, թէ ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ տեառն կոչեսցի։ Ու

տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօ-
բէնա տեառն, զոչգս տատրակաց, կամ
երկուս ձագս աղաւնեաց: Եւ ահա՝
էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն
էր սիմէոնի. և էր այրն այն արդար և
երկիւղած, և ակն ունէր մխիթարու-
թեան իսրայէլի, և հոգի սուրբ՝ էր
՚ի նմա: Եւ էր նորա հրաման առեալ
՚ի հոգւոյն սրբոյ՝ մի տեսանել զմահ,
մինչեւ տեսցէ զօծեալն տեառն. և
եկն հոգւովն ՚ի տաճարն: Եւ իբրեւ
ածին ծնողքն զմանուկն յիսուս, առ-
նել նոցա ըստ սովորութեան օրինացն ՚ի
վերայ նորա. և նա՝ առ ընկալաւ զնա
՚ի գիրկս իւր, և օրհնեաց զաստուած,
և ասէ: Արդ՝ արձակես զծառայս քո
տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութի՛ն,
զի տեսին աչք իմ զփրկութիւն քո.
զոր պատրաստեցեր առաջի ամենայն
ժողովրդոց: Լոյս ՚ի յայտնութի՛ն հեթա-
նոսաց, և փառս ժողովրդեան քում
իսրայէլի: Եւ էին հայրն և մայր նորա
զարմացեալ ՚ի վերայ բանիցն, որ խօ-

աչին զնամանէ : Եւ օրհնեաց զնոսա սիմէոնէն, և ասէ ցմարիամ մայրն նո-
րա . ահա սա կայ՝ ի գլորումն և ի
կանգնումն բազմաց ի մէջ իսրայէլի ,
և ի նշան հակառակութեան . և ընդ
քո իսկ անձն անց ցէ սուր . զի յայտ-
նեսցին ի բազում սրտից խորհուրդք :

Եւ ասէ զաղօթս առաջի խորանին :

Տէր մեր յիսուս քրիստոս , որ կեցեալ
զաւուրս քառասուն՝ ըստ օրինացն մով-
սէսի , եկիր ի տաճարն ի յընծայումն՝
հանդերձ մարիամաւ մարբն քով , և
ի գիրկան սիմէոնի գգուեցար : Աղա-
չեմք և խնդրեմք ի քէն , պահեա զմ
տղայս զայս , և աճեցո զնորհօք՝ անտե-
սանելի զօրութեամբ քով . և արժանի
արա զսա մասին ժառանգութե ընտ-
րելոց քոց , և պահպանիլ ընդ հովան-
եաւ աջոյ քո : Եւ քեզ ընդ հօր և սո
հոգւոյդ :

Եւ ասէ զարթիան :

գձ Աստուածածնէն երկնային դժուն. ա՛ծ-

այի՛ն ձայնիւն աւետարանչը հրեշտակն. ուրախ լեր բեմկրեա՛լդ տէր ընդ քե՛զ: Ի քերմնլեհս բաղմեա՛լ ընդ հօր անապականաբար բնակիլ հաճեցար ՚ի քում յորովայնի. ուրախ լեր: Որ բոցեղէն սրովբէիւք շրջապատեալ պահիւր, այսօր ՚ի մէջ մարդկան ՚ի պէրկրս հոգեղինի յայտնեա՛լ. ուրախ:

Ե՞ւ ապա չահանայն փառի ղաղցն ՚ի խորանն ե ասէ:

Այս անուն Ծառայ քրիստոսի, եկեալ յերկրպագութիւն. երկրպագե՛ւ սուրբ խորանիս. երկրպագե՛ւ սուրբ սե:

Սուրբ խաչիս աղաչեցուք:

Պահպանիչ և: Հայր մեր որ:

ԿԱՆՈՆ

ԿՈՒՍԻ ՊՍԱԿԻՆ

ՀԱՒԱՒ ՕՐՀՆԷՔ

Նախ քան զամենայն բերբեն զՀայաւն առաջի քահանային. և քահանայն խոտանի արիանէ և ասէ ընդ նմա:

ԲԿ Այսօր երկնայինքն ուրախանան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորածողն էից հոգին կ'ի սուրբ վերնատունն. ուրով նորոգեցար ի դասք առաքելոցն: Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցընծայ ընդ հօր հաշտութեան. քանզի որ եբարձ զհոգին 'ի մարդկանէ մարմին եղելոց, դարձեալ վերըստին ընդնայ պարգեւէ: Այսօր

մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծու-
թեամբ զպաղատատ սուրբ հոգւոյն.
որով զարդարեցան ի զգեստս լուսա-
փայլս և զերանգայծառս. երգեն ընդ
սրաֆէ՛ից զերեքսրբեանն։

Ո՛ր զհիմնեալն յաշտարակին բա-
ժանեալ լեզուացըն քակեաց. այ-
սօր ըղբաժանեա՛լ լեզո՛ւս ազգաց միա-
բանեաց դարձեա՛լ ի սո՛ւրբ վերնա-
տունն. ամե՛նայն հոգւք օրհնեցէ՛ք
զհոգին աստուա՛ծ։ Ո՛ր էլ հոգին
սեւառն ե՛ւ առաջնորդեաց երկուտա-
սան ցեղից Իսրայէլ՝ ի յա՛նապա-
տին. այսօր երկոտասան առաքեալցն ա-
ռաջնորդե՛ ի յաւետարանն. ամե՛-
նայն։ Ո՛ր եկից հոգին սեւառն ըզբե՛-
ռեալսն՝ ճարտարապետս խորանին. այսօր
վինե զմարդիկ խորան սուրբ երրոր-
դութեանն. ամե՛նայն։

Ամէն ընտանի մարմնաւ անհամբանա-
յեաւ, օրհնեալդ ի կանանց : Օ՜ յան
անբաւութեր յարդանդի կրեցեա՛ր, օրհ :
Այլ դարձա՛ր վասն մեր բարեխո-
սե՛լ, օրհ :

Ի՛ վերայ վիմի հաւատոյ շինեցեր զ-
քո սուրբ ղեկեղեցի. զորս պահեա
ի խաղաղութեան : Ո՛ր հնարեցեր ա-
պրումն ի բնական հրճշտա-
կաց եւ մարդկան քաւարան. տուր
սմա պահպան քո վիճակաւորութիւն :
Ի՛ տաճարի փառաց սրբեալ թեան քո
քեզ երգեն մանկունք. տուր տոյա
զառաւ քո զպրութիւն :

Փառք հօր և որդւոյ և :

Ակտ անմահ վերատին եղեր դու մայր
մարիամ. բարեխօսեա վասն մեր ի
յաւիտեան աւուրս անեղին :

Աղօթք ։

Օրհնեա քրիստոս աստուած մեր՝ հո-
գեւոր օրհնութեամբ զհալաւս զայս
հարսանեացդ. զի որ զգեցոյին զսա, մի՛
իշխեսցէ մերձենալ՝ ի սոսա չար աղանդ
դիւացդ կամ կախարդացդ ։ Այլ ամրա-
ցեալ զօրութեամբ սուրբ խաչին քո,
փրկեսցին յամենայն որոգայթից սա-
տանայի ։ Ընդ քեզ վայելէ փառք իշխան ։

Սուրբ խաչիւս աղաչես ։ Պահպանիչ և ։

Հայր մեր որ ։

Ընդ ապա երկան՝ ի տուն հարսին, և բերեն
զհարսն առ փեսային, և առնու չահանայն զձ
ձեռն հարսին և տայ յձեռն փեսային և ասէ ։

Ընդունիր զձեռն Եւայի՝ տուեալ՝ ի յայն
Ադամայ, և ասէ ադամ. այս այժմ
ոսկր յոսկերաց իմոց, և մարմին՝ ի
մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի
յառնէ իւրմէ առաւ ։

Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր
և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ

խօտոյ. և եղեցին երկոքեան ՚ի մարմին
մի: Ասէ՝ զոր աստուած զուգեաց
մարդ մի մեկնեսցէ:

Տ. պոհան:

պվ Նայեամ ՚ի մեզ եւ ծաղրեմ մեզ. քրիս-
տոս. որ ունիս բանիւմ գքննութիւն:
Որ հայրդ էս որբոյ եւ դաստաւոր
այրեաց քրիստոս. որ ես: Որ պըտա-
կիչդ ես սրբոյ. ըմբ և մեզ աղօ-
թիւք սուգ քրիստոս. որ ունիս քա:
Ասայր և կոյս աղաչին քրիստոսի որ
բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ
երանեն ամենայն ազինք: Ասքանչ
աղաւնի և հարան երկնից մարիամ,
տաճար և աթոռ աստուծոյ բանիդ. քեզ
քեզ: Զեռ հաճեցան խմանալիքն ընդ
հոգեղէնքս, եւ քեզ մերձեցաք ՚ի
վայեան կենաց. քեզ երանեն ամե:
Յաղթող և զնոր օրհնութիւն միշտ

’ի բարձունս երկեսցուք թագաւոր-
բին քրիստոսի հաւատացեալ ժողո-
վուրդք : Որ եկն ’ի լուսաւորել զնստ-
բեալ սէր ընկէղեցի . և պըղ՛ասակեաց
սէր խաչիւն, նըման ըղխաւս երկեսցուք :

Փառք հօր և որդւոյ և :

Այսօր և մեք ծնեսցուք ընաւակատիս
սուրբ խաչին . և վըղ՛ոլին մատուս-
ցուք փառք եւ պատիւ յաւիտեան :

Աղօթք :

Տէր աստուած յաւիտենական, որ զան-
զգոս և զհացորոշեալս զուգակցես մի-
աւորութեամբ, և կապես անքակտե-
լի : Որպէս օրհնեցեր զիսահակ և զռե-
բեկ, և ժառանգ զնոսա քո աւե-
տեացն երևեցուցեր : Դու տէր օրհնեա
զծառայս և զաղախինս քո, առաջնոր-
դեալ նոցա ’ի գործս բարիս, ողորմած
և մարդասէր տէր աստուած մեր : Ընդ
քեզ վայելէ փառք իշխանութիւն և :

Սուրբ խաչիս : Պահպա : Հոյր մեր :

Ն֊ ապա երթան ի տուռն եկեղեցւոյն. և հարան և փեսայն երեք ծուռնր կրկնեն. և չաշ հանայն խոպովանողքնէ զնոսա, և ապա ողջոյն զնա֊ րօքն։ Նոքա զփեսայինն ողջոյն՝ ասէ։

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Ն֊ երբ զկարմինն ողջոյն՝ ասէ։

Տարցին թագաւորի կուսանք զհետ նո֊ րա. և զընկերս նորա տարցին նմա։

Ն֊ ապա պայ զչեռն ի չեռն՝ և ասէ Ա֊ռեալ զձեռն Նւայի։ Ն֊ ապա ասէ զկրապ։

Տեսէք որդեակք, աստուածային հրա֊ մանաւն՝ և կանոնիւք սուրբ հայրա֊ պետացն եկեալ էք ի սուրբ եկեղեցիս պսակիլ օրինօք ի սուրբ ամուսնու֊ թիւն. աստուած զձեզ միաբան սիրով պահեսցէ, ի խոր ծերութիւն հասուս֊ ցէ, և անթառամ պսակին արժանա֊ ցուսցէ։ Ա֊պա տեսէք, որ յաշխարհիս վերայ պէս պէս փորձութիւնք կան. թէ հիւանդութիւն, եթէ աղքատու֊

թիւն, և թէ այլ ինչ նեղութիւն. աստուած զձեզ յամենայն փորձութիւնէ հեռի պահեսցէ: Բայց աստուծոյ հրամանն այս է, որ դուք երկրքեանդ վինչև ի մահ վիմեանց օգնութիւն պարտիք ընել:

Ն– Նախ հարցանէ ֆեսային:

Ամրեակ իմ, վինչև ի մահ ասէր ես: Ն– Նա ասէ: Այո հայր սուրբ, ասէր եմ հրամանաւն աստուծոյ:

Ն– ապա հարցանէ հարսին:

Ամրեակ իմ և դու վինչև ի մահ հնազանդ ես: Ն– Նա ասէ նոյնպէս:

Ն– ասէ չահանային: Այս բանիս վկայ՝ աստուած է, որ աներևութապէս ի վերայ սուրբ սեղանոյս բազմեալ է: Այլ և մեր պահապան հրեշտակքն, այս սուրբ եկեղեցիս, սուրբ խաչս և սուրբ աւետարան. դաք քահանայիդ, և երամք ժողովրդոյ. սքա ամենեքեան վկայ լինիմն մի:

Ա– նոքա ասեն : Ընդ հայր սուրբ, վկայ թող լինիմ :

Ա– ասէ տէհանայն : Ընտուած ի միջ տացա, և ոքա մի տատանեսցին . օդնեսցէ տոցա տատուած ի վաղորդենէ մինչև ի վաղորդայն :

Ամէն յեկեղեցին, և ասեն ժամամոտ :

Օ խաղաղութիւն ընդհեա եկեղեցւոց քում սրբոց, զխաղաղութիւն և զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ . և հաստատեա ի մի հաւատ զկաթողիկէ եկեղեցի . զքեզ խոստովանիմք տէր և աստուած կեցո զմեզ :

Ճարկան :

դձ Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի քրիստոս արքայն երկնից այսօր պլսակեաց զքեզ խաչիւն իւրով . եւ զարդարեաց զամուրսն քով սքանչելի վաստօքն իւրովք : Ելնեդա յոյժ դուա տըս սիոնին . քանզի երկնիս երկինք

եղեն այսօր վէրքատէրն քո նորոգմամբ
և թաթաւուն երկնաւորի հաճեցաւ
բնակիլ ի քեզ։ Լինի դատաստան
ուղղութեան վերատեսակ ոճնեմբք քեզ
այսօր զինադադար փառաւորութիւնս.
ուրախ լեր հանդերձ անարատ ծնեալդ
քո խնդրելով։

Փառք հօր և որդւոյ և։

Ուրախ լեր բերկեամ հարանձգեալ
սուրբ եկեղեցի, պայծառացո զմանկ
կոչնիս քո յօրհնաբանութիւն ծագո-
ղին լուսոյ ի քեզ մայր եկեղեցի։

Գառնխոսմէ։

Մոլորեալ աստուած՝ սուրբ և հզօր, սուրբ
և անմահ, որ մարմնացար վասն մեր։

Եւս խաղաղութեան վասն աղաչեսցուք։

Վասն խաղաղութեան ամենայն աշ-
խարհի՝ և հաստատութեան սրբոյ ե-
կեղեցւոյ. վասն աղաչեսցուք։

Վ֊ան ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց զտէր աղա ։

Վ֊ան Հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին՝ զտէր աղա ։

Վ֊ան վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ՝ զտէր աղա ։

Վ֊ան բարեպաշտ Թագաւորաց և առատաձեռն իշխանաց՝ զօրավարաց և զօրաց նոցին՝ զտէր աղա ։

Ես ևս միա ։ Օ֊անձինս մեր ։ Ողորմեաց ։

Տէր ողորմա՝ տէր ողորմեա՝ տէր ողորմեա ։

Օ֊ւ ողորմած | և մարդասէր ես առատաձեռն գոլով և քեզ վայելէ փառք իշ ։

Ալէլուիա ալէլուիա ։

Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն . ՚ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։

Օ֊ջանկութիւն սրտի նորա ետուր նմա, և կամս շրթանց նորա ոչ արգելեր ՚ի նմանէ ։

Ջաման արարեր զնա յօրհնութիւն

քաղցրութեան քոյ . և եդեր ՚ի գլուխ
նորա պսակ ՚ի քարէ պատուականէ ։
Կեանս խնդրեաց ՚ի քէն . և ետուր
նմա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս
յաւիտենից ։
Մեծ են փառք նորա ՚ի փրկութենէ քումմ.
զփառս մեծավայելչութենէ քո դիցես՚ի վրայ նմ։
Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս
յաւիտենից . և ուրախ արասցես զնա
յուրախութեան երեսաց քոց ։
Թագաւոր յուսացաւ ՚ի տէր . յողոր-
մութենէ բարձրելոյն նա մի սասանեսցի ։
Գտցի ձեռն քո ՚ի վրայ թշնամեաց քոց .
և աջ քո գտցէ զամ՚ատելիս քո ։
Դիցես զնոսա որպէս հնոց ՚ի հուր՝ ՚ի
ժամանակի երեսաց քոց ։
Տէր բարկութեամբ իւրով խառնեցուսցէ
զնոսա . և հուր կերիցէ զնոսա ։
Պտուղ նոցա յերկրէ կորիցէ , և զաւակ
նոցա յորդւոց ՚ի մարդկանէ ։
Խոտորեցան ՚ի քէն չարութեամբ . խոր-
հեցան զխորհուրդ , զոր ոչ կարացեն
հաստատել ։

Ընտրեաս զնոսա Հալածեալս. ՚ի միայոուածս քո պատրաստեացես զերեսս նոյ։ Բարձր լեր տէր ՚ի զօրութեան քում. օրհնեացուք, և սաղմոս ասացուք ՚ի զօրութեան քում։

Ընթերցուածս ՚ի ծննդոց։

Եւ ասաց աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամենայն անասնոց, և ամենայն սողնոց որք սողին ՚ի վերայ երկրի։ Եւ արար աստուած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի աստուծոյ արար զնա։

Դարձեալ ՚ի ծննդոց։

Եւ էարկ տէր աստուած թմրութիւն ՚ի վերայ ադամայ, և ննջեաց. և էառ մի ՚ի կողից նորա՝ և ելից ընդ այնր մարմին։ Եւ շինեաց տէր աստուած զկողն զոր էառ յադամայ՝ ՚ի կին, և էած զնա առ ադամ։ Եւ ասէ ադամ. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին

զի յառնէ իւրմէ առաւ : Վ՚ասն այ-
սորիկ թողեաւ այր զհայր իւր՝ և զմայր
իւր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ . և
եղիցին երկոքեան ՚ի մարմին մի :

ընթերցուածս Աբաւեայ մարգարէի :

Ես ծանիցի ՚ի մէջ ազգաց զաւակ նո-
ցա , և ծնունդք նոցա ՚ի մէջ ժողովուր-
դոց , ամենեքեան որ տեսանիցեն՝ ճա-
նաչիցեն զնոսա՝ և ասասցեն . սոքա են
զաւակք օրհնեալք յաստուծոյ . և ու-
րախութեամբ ուրախ լիցին ՚ի տէր :
Ցնծասցէ անձն իմ ՚ի տէր , զի զգե-
ցոյց ինձ հանդերձ փրկութեան՝ և
պատմուճան ուրախութեան . իբրև
փեսայի եդ ինձ պսակ , և իբրև հարսն
զարդու զարդարեաց զիս : Ես իբրև
երկիր որ աճեցուցանէ զծաղիկս իւր ,
և իբրև զպարտէզ որ բուսուցանէ զ-
սերմանիս իւր՝. այնպէս ծագեսցէ տէր
զարդարութիւն իւր , և զինծութիւն
առաջի ազգաց : Վ՚ասն սիօնի ոչ լռե-
ցից , և վասն երուսաղէմի ոչ ներեցից .
մինչև ծագեսցի իբրև զլոյս արդարու-

Թիւն նորա, և փրկութիւն նորա իբ-
րև պիսյլական վառեսցի. և տեսցեն հե-
թանոսք զարդարութիւն քո, և թա-
գաւորք զփառս քո, և կոչեսցի քեզ
անուն նոր զոր սէր անուանեսցէ : Ընդ
եղիցիս պսակ վայելչութեան ի ձեռին
տեառն, և թագ արքայութեան ի
ձեռին աստուծոյ քոյ. և ոչ ևս կոչես-
ցիս լքեալ, և երկիրն քո ոչ ևս կո-
չեսցի աւերակ, զի քեզ անուն կո-
չեսցին կամք իմ, և երկրին քումդ շի-
նութիւն բնակութեան. զի հաճեսցի
տէր ընդ քեզ, և երկիրն քո խառնեա-
ցի ի բնակութիւն իւրում : Ոչ արօրն
նակ բնակեսցի երիտասարդ ընդ կուսի,
այնպէս բնակեսցին որդիք քո ի քեզ,
և եղիցի ըղձութիւնակ ուրախ լինի փե-
սայ առ հարսին իւրում, այնպէս ու-
րախ լինի տէր ի քեզ : Ընդ ի վերայ
պարսպացն քոյ երուսաղէմ՝ պահա-
պանս կացուցից. ցորն ողջոյն և ցդիւերն
ամենայն, որ միշտ ցայգ մի դադա-
րեսցին յիշել զնա. զի ոչ գոյ նման քեզ :

Պօղոսի առաքելոյն Հեվհեսացւոց Թղթոյն է ընդ Թեբրայեցս։

Կանայք իւրեանց արանց հնազանդ լինին իբրև առաւն. զի այր է գլուխ կնոջ, որպէս և քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ։ Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի։ Այր՝ սիրեցէք զկանայս ձեր. որպէս և քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր յանեղիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ բան՝ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ։ Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ որպէս զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։ Ո՛չ ոչ ոք երբեք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և քրիստոս զեկեղեցի. զի անդամք

եմք մարմնոյ նո՛ր, ՚ի մարմնոյ նո՛ր և յոսկեբա՛ց նորա։ Ա՛յսո այսորիկ Թողեք այր զհայր իւր և՝ զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ՚ի քրիստոս և յեկեղեցի։ Ա՛յլ և դուք նոյնպէս մի բաս միջէ. զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրև զիւր անձն. և կին երկնչեցի յառնէ իւրմէ։

Աւետիս ալէլուիա։

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, ՚ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Օրթի խաղաղութիւն ամենեցուն։

Սբոյ Աւետարանիս ՅՀ գլ. որ բաս Մաթէոսի։

Ե՛ւ գնային զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնոսա անդ։ Ե՛ւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ և ասէին. եթէ արժան է այր ումեք արձակել զկին իւր բաս ամենայն պճառս։ Պատասխանի եաո նոցա՝ և ասէ. չէիք ընթերցեալ ձեր՝

թէ որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ ա-
րու և էգ արար զնոսա՝ և ասէ. վա-
սն այսորիկ Թողցէ այր զհայր և զ-
մայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ,
և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Ա-
պա ուրեմն ոչ են երկու, այլ մի մար-
մին. արդ՝ զոր աստուած զուգեաց
մարդ մի մեկնեսցէ: Ասեն ցնա. իսկ
մովսէս ընդէր պատուիրեաց մեզ տալ
Թուղթ մեկնելոյ՝ և արձակելոյ: Ասէ
ցնոսա յիսուս, մովսէս վասն խստա-
սրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ
արձակել զկանայս ձեր, այլ ՚ի սկզբա-
նէ ոչ եղեւ այնպէս: Բայց ասեմ ձեզ,
զի ամենայն որ արձակէ զկին իւր՝ և ոչ
վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝
շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ:

Քարոզ:

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանա-
պարհս խաղաղութեան՝ զտէր աղա:
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խոր-
հուրդս չարին՝ զտէր աղա:
Վ՚ն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս

և առաքինի վարս՝ զտէր աղա։
Վ֊ան պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյն իւրոյ զտէր աղա։
Վ֊ն խորտակելոյ զհակառակորդն վաղ֊
վաղակի ընդ ոտիւք մերովք՝ զտէր։
Վ֊ն հոգւոցն հանգուցելոյ՝ որք ճշմա֊
րիտ և ուղիղ հաւատով ի֊քն ննջեցին։

Աղօթք։

Տէր աստուած զօրութեանց և արա֊
րիչ ամենայն արարածոց, որ առեր
հող յերկրէ և ստեղծեր զմարդն ըստ
պատկերի քում և ըստ նմանութեան,
և եդեր զնա ի դրախտին փափկութե֊
ան։ Ընտրեա և ես արարեր զնոսա՝ և օրհնե֊
ցեր զնոսա աւետով, աճեցէք և բազ֊
մացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք
դմա։ Նախատապեցան խնամք արարչական
սիրոյ քո յարարածս քո ի ձեռն միածնի
որդւոյ քո տեառն մերոյ յիսի քրիստ. գալ
ճնանիլ ի սրբոյ կուսէն, և նորոգել զմ
հնութիւն առաջնաստեղծ մարդոյն։ Ընդ
նեղով սկիզբն նշանաց ի կանա գալիլ

եացւոց ՚ի հարսանիսն. և աստուածա-
յին աքանչելեօքն զուարճացուցեալ զը
հարսնարանն՝ զջուրն ՚ի գինի փոխելով։
Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր՝ օրհնեա
* զամուսնութիւնս զայս որպէս զը
սուրբ նախահարցն. անարատ պահե-
լով զսոսա հոգեւոր սիրով վիաբանու-
թեամբ ՚ի կեանս յաւիտեանս։ Օրհնեա
* տէր և զպտղաբերութիւն որդեծը-
նութեան սոցա ՚ի ժառանգութիւն
վարուց առաքինութեան՝ ՚ի փառս ա-
մենասուրբ անուան քո։ Որպէս զի
խաղաղական կենօք՝ և բազմաժամա-
նակեայ ծերութեամբ յերկարեալ յայ-
սմ աշխարհիս, և յանդրաւական ու-
րախութիւնն ՚ի վերին հարսնարանին
արժանաւորեսցին հասանիլ ընդ ամե-
նայն սուրբս, շնորհօք և մարդասիրու-
թեամբ տեառն մերոյ և փրկչին յիսի քրիստ։ Ընդ
որում օրհնեալ ես հայր ամենակալ՝
հանդերձ կենդանարար և ազատիչ
սուրբ հոգւովդ այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնեալ ես տէր աստուած արարիչ ամենայն արարածոց, որ դու միայնդ ես բարերար և կարող. որ արարեր զամենայն արարած հրամանաւ քով՝ զերկինս և զերկիր, և զամենայն ինչ որ ի նոսա: Զերկինս արարեր իմաստութ. զերկիր հիմնեցուցեր կարողութ և զծով պատրաստեցեր ողորմութ: Զարեգական ճառագայթեցեր ի լուսաւորուի տունջեան. զլուսին և զաստեղս պայծառացուցեր ի զարդ գիշերոյ. և զտարերս զուգակարգեցեր առ ի կենդանութի արարածոց քոց: Խորհեցար հայր անակիզն՝ ընդ միածնի որդւոյ քո՝ և ընդ կենդանարար սուրբ հոգւոյդ՝ և ասացեր. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ ի վերայ երկրի: Ընդեր հող յերկրէ, և ստեղծեր աստուածային աջով քով մարդ. և կերպարանակից քեզ արարեալ՝ կացուցեր զնա տէր և իշխան ի վերայ ամենայն արարածոց քոց երկրաւորաց:

Եւ ապա հայեցեալ ՚ի միայնութիւն նորա՝ ասացեր. ոչ է բարւոք մարդոյդ միայն լինիլ. արասցուք դմա օգնական ըստ դմա: Եւ արկեալ զքուն Թմրութե՛ ՚ի վերայ ադամայ, առեր զմի ՚ի կողից նորա, և շինեցեր զնա ՚ի կին և ետուր մարդոյն բանից կցորդ, և կենակից ՚ի զուգաւորուի որդէծնութե՛. և օրհնեցեր ասելով, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա: Իսկ նախաստեղծ մարդոյն մարգարէական հոգւով ծանուցեալ՝ ասէ ՚ի տեսանելն. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Եւ յաղագս միաւորութե՛ սոցա ծնան նահապետք, քահանայք, թագաւորք, մարգարէք. աճեցան և բազմացան տոհմիւք իւրեանց՝ յաստուածային օրհնութենէդ, յասելդ քո արա-

րողիդ կենաց, թէ բազմացուցից զձ
զաւակս ձեր որպէս զաստեղս երկնից,
և իբրեւ զաւազ առ ափն ծովու։
Ընդ՝ որպէս օրհնեցեր զամուսնութի՛ն
նախահարցն և զնախամարցն, զաբրա-
համն և զսառային, զսահակայն և
զռեբեկային, զյակոբայն և զհռաքելին,
զյովսեփայն և զասանէթին, զյովակի-
մայն և զաննային, զզաքարիայն և
զեղիսաբեթին. և որպէս օրհնեցեր
զպաակս արդարոցն քոց, նոյնպէս օրհ-
նեա * զպաակս զայս յամուսնութիւն
ծառայից քոց. զի դու ժամանեցու-
ցեր զսոսա յօրհնութիւն քաղցրու-
թեան քո, և եդեր ՚ի գլուխ սոցա
պաակ ՚ի քարէ պատուականէ։ Նո՛ր որ-
պէս օրհնեցեր զհարսանիսն ՚ի կանա
գալիլեացւոց. և աստուածային սքան-
չելեօք զձուրն ՚ի գինի փոխելով ծա-
նուցեր աշակերտաց քոց զաստուածա-
յին քո զիտուս. և քարոզեցար աս-
տուած և փրկիչ ազգի մարդկան։ Ո՛չ
եթէ խոտեցեր զամուսնութիւնն. այլ

քահանայապետաբար օրհնեցեր, և հաստատեցեր անսուտ բանիւդ քո, եթէ զոր ած զուգեաց՝ մարդ մի մեկնեցէ: Այլ պարտին արք սիրել զիւրեանց կանայս ոպ զիւրեանց մարմինս. նոյնպէս և կանայք հնազանդ լինիցին արանց իւրեանց իբրեւ տեառն: Որ և սուրբ առաքեալն գոչէ ՚ի մէջ եկեղեցւոյ, թէ որպէս եկեղեցի հնազանդ լինի քրիստոսի, նոյնպէս և կանայք՝ իւրեանց արանց յամենայնի. զի այր է գլուխ կնոջ. որպէս և քո գլուխ է եկեղեցւոյ: Յաղագս որոյ պատուական է ամուսնութի, և սբ են անկողինք նոցա: Դու տէր՝ որ սուրբդ ես և ՚ի սուրբս հանգուցեալ, սուրբ պահեա զանկողինս ամուսնութեան նոցա. և միաւորեա զնոսա զուգակցութեամբ ընդ լծով վիճակի քո: Որպէս զի մի յայամ հեառ կոչեսցին երկու, այլ մի մարմին միաւորեալ հոգւով հեղութեան. սիրել զիմեանս պարկեշտ վարուք, ամբիծ հոգւով, առանց ամօթոյ, առանց

լկտութեան պատրաստ լինել ՚ի գործս բարիս: Որպէս զի զերծեալք յորոգայթից թշնամւոյն՝ առողջ հոգւով և մարմնով պահպանեսցին հրեշտակական պահպանութեամբ, և նշանաւ ամենայնի խաչի քո:

Այս տէր աստուած մեր՝ լեր պաշտպան ծառայից քոց, և տուն ապաւինի զամենայն աւուրս կենաց մոցա: Փրկեա զսոսա յօտարոտի խորհրդոց, և պատսպարեա ՚ի տուէ և ՚ի գիշերի ողորմութեամբ քով: Տնկեա զսոսա որպէս ձիթենի պտղալից ՚ի տան աստուծոյ: Որպէս զի կեցեալք արդարութեամբ, սրբութեամբ, և աստուածպաշտութեամբ ընդ հաճոյից կամաց քոց բարեսիրաց, տեսցեն զորդիս որդւոց իւրեանց. և եղիցին քեզ ժողովուրդ՝ և փառաբանիչ անուանդ քում սրբոյ: Նա անդադար օրհնեսցեն զամենասուրբ երրորդութիւնդ, զհայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս:

՚Առաքեալքն ցվիեսային և ասեն ցարքիան։

ԻՎ երանելիդ ամենեցուն տիեզերա- ԲԿ
կան իշխանութեամբ ընկալար ի քրիս-
տոսէ ըզ թագ պարծանաց. ո՛վ
թէոդոս մեծ թագաւոր վասըն մեր
բարեխօսեա առ թագաւորն երկնա-
ւոր։ Որ քոյին սուրբ աղօթիւքըզ
վանեցեր ըզ թըշնամին, կոխեալ ըզ
սատանայ ընդ երկնայինսըն դասե-
ցար. ո՛վ թէոդո։ Ողորմեա եւ մեզ հա-
ւատացեալքս ողնեմք զքո յիշա-
տակս, օրհնութիւն առաքելով ըզ
քեզ պըսակողին. ո՛վ թէոդո։

Ապաւաճանի, Ստիչն, Փառս։

Սուրբ հաշիւս աղաչես։ պահպանիչ և։

Հայր մեր որ։

Աղերսան ի փառն ասելով։ Ընդգականն. հա
թագաւոր գոլով։

ԿԱՆՈՆ

ՊՍԱԿ ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵԼՈՑ

Ընդէ՞ հանային վհատն և վիճասցին և դնէ գլո՞ւխ գլխի. և դնէ վաւչն ՚ի վերայ գլխոյ նոցա. և ասէ ցարդեան։

գկ Այսօր մարմրոսա՞ց դասքըն ցընծա՞ցեալ բե՞րկրին ընդ առաջ տ՚՚ն քրիստոսի որդւո՞յն աստուծոյ։ Զայն ՚ի յերկինից վըկայեալ ասէ. եկայ՚ք օրհնեալը՚ք հօր իմ՚՚յ, ժառա՞նգորդ՚ք երկնի՞ց խորանացն։ Այլ ցո՞ւյք ըզտեղի ա՞նկելոցն ա՞պըստամբո՞ղական թըշնամ՚՚ն, որ ՚ի յերկինից վայր անկեա՞լ։ Այր և կոյս ա՞զախին քրիստոսի ո՞ր բարեհաճո՞ւ ես միշտ աշխարհի՞. քե՞զ

երանեա՛ն ամե՛նայն ա՛զի՛նք: Ա՛ստո՛ւ
աղաւնի՛ և հա՛րան երկնի՛ց մարի՛ամ,
տաճա՛ր և աթո՛ռ աստո՛ւծոյ բանի՛ն.
քե՛զ: Ո՛ւրա՛խ հաճե՛ցան իմանալո՛վքն ընդ
հողե՛ղէնքս, եւ քե՛զ մերձե՛ցա՛ք 'ի
փա՛յտըն կենա՛ց. քե՛զ:

Ցա՛ղթո՛ղ և զնո՛ր օրհնո՛ւթիւն միշտ
'ի բարձունս ե՛րգեսցու՛ք Թագա՛ւո՛ր
բին քրիստոսի հաւատացեա՛լ ժո՛ղո՛վ
ուրդ՛ք: Ո՛ր ե՛կն 'ի լուսաւո՛րել զընտ
րեա՛լ սուրբ զեկե՛ղեցի. և սպա՛ս
կեաց սուրբ խաչին նըման ըզփառս
ե՛րգեսցո՛ւք: Ա՛յսօր և մե՛ք տօնե՛սցու՛ք
զնաւակատիս սո՛ւրբ խաչին. և փո՛ր
կողին մատո՛ւսցու՛ք փառ՛ք և՛ պատիւ
յա՛ւիտեա՛ն:

Փառ՛ք հօր և որդւո՛յ և:

Ընթացա՛մ պըտակըն ձե՛զ աւա՛նդեա՛լ
մընայ քա՛ն զականըս պատուա՛կանըս

գերաձգոյն հրաշիւք. որք վայելել ըզ
թշնամին խոստակեցիք:

Ալելուիա ալելուիա:

Աթոռ քո աստուած յաւիտեանս յա-
ւիտենից, գաւազան ուղղութեան գա-
ւազան արքայութեան քո:
Ընդսիրա սիրա իմ զպատգամս քո բա-
րի, և ասացից զգործս իմ թագաւորի:

Ընթերցուածս յՈվսեայ մարգարէէ:

Այսպէս ասէ տէր. եղիցի խորհել
իբրև զցօղ, և ծաղկեսցի իբրև զշու-
շան և արձակեսցէ զարմատս իւր իբ-
րև զլիբանոս: Աբձակեսցին ոստք նո-
րա, և եղիցի իբրև զձիթենի պտղա-
լից, և բուրեսցէ հոտ նորա իբրև ըզ
կնդրկի: Դարձցին և նստցին ընդ յար-
կաւ նորա. կեցցեն և հաստատեսցին
ցորենով, և ծաղկեսցէ իբրև զորթ յի-
շատակ նորա և իբրև զգինի լիբանանու
եղիցի եփրեմայ:

Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմոթէոսի առաջին թղթոյն:

Կամիմ լինել զկանայս ՚ի զարդ խոնար-

հուԹեան՝ ակնածուԹեամբ և զգաստուԹեամբ զարդարել զանձինս. մի՛ ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ՚ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայել է կանանց՝ զաստուածպաշտուԹիւն յանձնառելոց գործովք բարուԹեան: Կին մարդ ցածուԹեամբ ուսցի՝ ամենայն հնազանդուԹեամբ: Այլ ուսուցանել կինոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ ՚ի լռուԹիւն կալ: Ով ի ադամ նախ ստեղծաւ՝ և ապա եւայ: Եւ ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ և յանցեաւ. բայց կեցցեն վասն որդեծնուԹեանն՝ եԹէ կացցեն ՚ի հաւատս և ՚ի սէր և ՚ի սրբուԹիւն պարկեշտուԹեամբ:

Ալելուիա ալելուիա:

Կացէք դշխոյ ընդ աջմէ քումմէ, ՚ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ:

Սրբոյ աւետարանիս ՅՒ ԿԻ՝ ուր ըստ ՅովհաննուՀ:

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին

՚ի կանա գալիլեացւոց, և անդէր մայրն յիսուսի. կոչեցաւ և յիսուս և աշա-
կերտքն նորա ՚ի հարսանիսն: Եւ ՚ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցյիսուս.
գինի ոչ ունին: Ասէ ցնա յիսուս. ՚ք կայ իմ և քո՝ կին դու, չէ է հասեալ
ժամանակ իմ: Ասէ մայրն ցսպասա-
ւորսն. որ ինչ ասիցէ ձեզ՝ արասջիք:
Ընդ էին քարկայք վեց՝ ըստ սրբութեան հրէից. տանէին ՚ի մի ՚ի
նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ
ցնոսա յիսուս. լցէք զքարկայսդ ջրով.
և լցին զնոսա մինչև ՚ի վեր: Ասէ ցնո-
սա, արդ՝ առէք և բերէք տաճարա-
պետիդ. և նոքա բերին: Եւ իբրև
ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի
եղեալ, և ոչ գիտէր թէ ուստի լոյծ.
բայց սպասաւորքն գիտէին որք արկին
զջուրն: Կոչէ ընդ փեսային տաճարա-
պետն՝ և ասէ, ամենայն մարդ՝ զանոյշ
գինին յառաջագոյն պաշտէ. և յոր-
ժամ արբեանն՝ յայնժամ զլաւսն. դու
պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայ-

ժըմ: Օ՛այս արար սկիզբն նշանաց յի-
սուս ՚ի կանա գալիլեացւոց, և յայտ-
նեաց զփառս իւր. և հաւատացին ՚ի
նա աշակերտքն նորա:

Քարոզ:

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց,
ընկալցի զխնդրուածս սրտից մերոց,
թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ՚ի
վերայ մեր: Աղօթք մեր և խնդրուածք
յամենայն ժամ մտցէ առաջի մեծի
տէրութեան նորա: Եւ նա տացէ մեզ
միաբան միով հաւատով արդարութե
վաստակիլ ՚ի գործս բարեաց: Օ՛ի զո-
ղորմութեան գլնորհն լոր՝ արասցէ ՚ի
վերայ մեր տէրն ամենակալ. կեցուսցէ
և ողորմեսցի:

Աղօթք:

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Տէր աստուած մեր՝ որ յամենայն ժամ
ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս ՚ի
ձեռանէ քումմէ զայնոսիկ, որք ճշմար-
տութեամբ խոստովանին զանուն քո

սուրբ ։ Օ՜ քեզ աղաչեմք՝ և առ քեզ կարդամք՝ և ի քէն խնդրեմք մարդասէր տէր, քոյին հրամանատ օրհնեցաք զպատակս զայս ամուսնութե՛ սոցա ի խորանի քում սրբութեան առաջի սրբոյ սեղանոյ քո. և արդ՝ տէր բարերար՝ քոյին հրամանատ առնումք զնարօտ պատկիս ի գլխոց սոցա. և օրհնեմք զսոսա նշանաւ սուրբ խաչին * նայեա տէր քաղցրութեամբ քով ի սոսա՝ և առաքեա զհրեշտակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զսոսա սուրբս և անարատս, միաշունչս և միախորհուրդս ։

Շնորհեա սոցա տէր՝ և զաւակս ըստ կամաց քոց. քաղցրացո զվայելչութիւն կենաց սոցա քոյով առատ բարերարութեամբդ. զի կեցցեն անբիծ և անարատ վարուք յայսմ աշխարհիս մինչև ի խորին ծերութիւն, և արժանաւորք եղիցին երկնից աքսայութեանդ, և անթառամ պսակացն ։ Նա քեզ ամենազօրիդ աստուծոյ վայելէ փառք իշ։

Ես ապա քաջակ մի գիշեր առնու չահանայն
ի Յեհան իւր՝ և ասէ ցաղօլս ։

Տէր աստուած մեր, որ զամենայն ինչ
իմաստութեամբ արարեր, և հաստա-
տեցեր զերկիրս, և զարդարեցեր ըղ
հարսանիսն ի կանա գալիլեացւոց ։
Ինքնին տէր՝ օրհնեա զքաժակս զայս
ողորմութեամբ քով. և մեք յամենայն
ժամ գոհացուք զպարգեւաց քոց ։ Ես
քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս ։

Ես պայ նոցա զքաժակն ասելով ։

Օրհնութիւն գոհութիւն և փառք հօր և ։

Սուրբ հաչիւս աղաչեսցուք զտէր վի ։

Գահպանիչ և յոյս ։ Հայր մեր որ յերկ ։

ԿԱՆՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ՊՍԱԿԻ

Քահանայն բերէ զնոսա յեկեղեցին՝ և խոպո-
վանեցուցանէ. և ապա պայ զչեռն ի չեռն, և
հարցանէ որպէս յառաջն գրեցաւ. և ապա ասէ:

Ալէլուիա ալէլուիա:

Տէր ի զօրութենէդ ուրախ եղիցի թագա-
ւորն. ի փրկութենէդ քումմէ ցնծասցէ յոյժ:
Ցանկութիւն սրտի նորա ետուր նմա. և ըղ-
կամս շրթանցն նորա ոչ արգելեր ի նմանէ:

Գիրք պօղոսի, Ընդ եփեսոն գոլիքէ, Քարոզ
վասն ուղղելոյ, նոյնք են՝ որք ի կոսէ
պահին կան: Ընդ ապա ասէ զաղօթս:

Տէր աստուած մեր, որ ի հրեշտակաց
խօսեցեալ՝ և ի մարգարէիցն քարոզ-
եալ՝ և յառաքելոցն աւետարանեալ.
որ անարատ յայտնութիւնք քով կեանս
աշխարհի պարգևեցեր: Օրհնեա տէր

և այժմ զամուսնութիւն ծառայիս քո
և աղախնոյս. որպէս օրհնեցեր զՅուբէն՝ի
կանա գալիլեացւոց՝ և արարեր գինի.
աբանչելագործելով պատուեցեր զա-
մուսնութիւն: Օրհնեա և այժմ՝որ զդ
ծառայքս քո զզուգաւորեալքս այժմոյս
դարձեալ յերկրորդ ամուսնութիւս: Որ-
պէս զի ընդունելով զերկրորդ ամուս-
նութիւս զայս յանձինս իւրեանց, միաւո-
րեցին հաւատով և յուսով և սիրով
ընդ սէր եկեղեցւոյ. և յառաջեալք՝ի
պատուիրանս քո՝ եղիցին միաւորեալք
ընդ միմիեանս հոգւով և մարմնով: Պար-
գեւեա սոցա որդեծնութի ողջմտութ քով.
Թող՝որ զմեղս և զյանցանս սոցա, զդ
կամայ և զակամայ, ընկալ զաղօթս և
զինդրուածս սոցա. սրբեա զսոցա զդ
հոգի և զմարմին. և շինեա զսոսա որ-
պէս առաջին վարուքն կեալ ընդ մի-
մեանս գործովք բարուք յայսմ աշխար-
հի: Օրհնեա տէր և զծնունդս որս
վայնի սոցա, զի եղիցին՝ի հաճոյս քեզ
արարչի և աստուծոյգ մերոյ: Ո՛վ

դու ես որ օրհնես և սրբես զանձինս մեր ամենեցուն. և քեզ վայելէ փառք։

Կարողք։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեբ։

Կեցո տէր և ողորմեա։

Զինչ պատկան է ասել պաղծոն։

Աստուած միտնչենաւոր, որ զօրութեբ քով՝ և միածնի որդւոյ քո՝ և ամենասուրբ հոգւոյդ՝ արարեր յոչնչէ զամենայն արարածս քո, զծով և զցամաք, և զամենայն որ ի նոսա։ Շ. ինեցեր զդրախտն փափկութեան, և տնկեցեր ի նմա զփայտն կենաց. որ և ի վախճան ժամանակի ի ձեռն սրբոյ որդւոյ քո սիրելւոյ՝ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի՝ նոյն կենաց փայտիւն աղատեցեր զանկեալն ընդ պատրանօք բանսարկուին։ Դու նոյն ինքն տէր մեր՝ և աստուած ամենեցուն, օրհնեա և սրբեա զերկրորդ պսակս զայս յամուսնութիւն ծառայից քո և աղախնոյս, պահելով զսոսա անարատ սիրով և միաչունչ խորհրդով։ Օրհնեա տէր և

զպատաբերուԹի՝ որդէծնուԹե՛ սոցա. զի աՃեսցին խաղաղական կենօք, և ապրեսցին շնորհօք քովք. և հանդերձեալ բարեացն հանդիպելով՝ փառաւորեսցեն զքեզ ընդ որդւս և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և:

ԽաղաղուԹիւն աՃենեցուն:

Տէր ՃՃ մեր՝ որ գաղտնեաց մարդկան գիտակ ես, և զծածուկս մեր ՃանաչԷս. զի քեզ յայտնի են խորհուրդք առն, և Ճանապարհ կնոջ. նայեա՛ բարերարուԹեամբ քով՛ի ծառայս քո, և տուր սոցա զլուծ սիրոյ քո. զի ընկալցին զերկրորդ պսակս, և հրամանաւ քով բնակեսցին՛ի միասին միով խորհրդով՝ ՛ի սուրբ անկողինս իւրեանց: Հեռասցին՛ի չար գործոց, և կացցեն ամօԹխաՃուԹեամբ առ միմեանս. և առաքինի գործովք քաղաքավարեալ, արժանաւորք եղիցին հանդերձեալ բարեացդ. և քեզ հանցեն զօրհնուԹիւն:

Սուրբ Հաչիւս աղաչեցուք:

ԿԱՆՈՆ

ՀԱԴՈՐԴ ՏԱՂՈՅ

Ընտու՝ չահանայն զնաչ և զաւետարան և զՃիմորոն՝ և երիտ ատ՝ հիւանդն . և ասէ զաղօթեան յոմնանոյ ծարգարէին ։

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի . և լուաւ աստուած յանդնդոց դժոխոց աղաղակի իմում ։

Լուր տէր ձայնի իմում, զի ընկեցեր զիս ի խորս ծովու , և շրջանք գետոց պաշարեցին զիս ։

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ, և ասացի թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց ։

Արդ՝ եցէ թէ յաւելից հայիլ ի տաճար սուրբ քո . զի հեղան զինեւ ջուրք մինչեւ ցես յանձն իմ, և անդունդք անհնարինք պաշարեցին զիս ։

Ամաւտ գլուխ իմ ընդ փապարս լե-
րանց. իջի ես ի խորս երկրի, և տեսի
զնիգս նորա, զի էին որպէս աղիսք յա-
ւիտենից. և ելցեն յապականութենէ
կեանք իմ:

Ա՛ր քեզ տէր աստուած իմ՝ի նուաղիլ
անձին իմոյ կարդացի, և զքեզ տէր
յիշեցի. և մատեան աղօթք իմ՝ի տա-
ճար սուրբ քո:

Ո՛ի պք պահէին զսնայնութիւն և
զատութիւն, յողորմութենէ իւրեանց
մերժեցան:

Ա՛յլ ես՝ի ձայն օրհնութեան խոստո-
վան եղէց քեզ, մատուցից պատարա-
գըս տեառն, և կատարեցից զուխտ
իմ՝ի փրկութեան:

Փառք հօր և որդւոյ և:

Ա՛մէնաւկալ քաւեա՛ զմեզ տէր. զդ
զի ամօթաւած եմ ապաշխարողացդ: Ա՛յ-
զիտիդ սուրբ մի հարկաներ յինէն.
զի ա՛յծ: Ա՛յ փրկեա՛ զիս յամհարկ
զին հլորէն. զի ա՛յծ:

Ի՞ր խոսփովանէցո՞ւցանէ զնա զգո՞ւշութեամբ
և ապա ասէ զաղօթս զայս ։

Օրհնեալ ես տէր աստուած մեր յիւ
սուս քրիստոս արարիչ ամենայն արա
րածոց, որ արժանի արարեր զամենայն
հաւատացեալս՝ հաղորդիլ մարմնոյ և
արեան քո ։ Ընդունաւորեա և այժմ
զծառայս քո զայս յետին Թոշակիս, որ
հեռևի՛ ի կեանն յաւիտենից ։ Ո՛վ
դու իակ ասացեր ամենասուրբ բերա
նովդ, եթէ ոչ կերիջիք զմարմին իմ,
և արբջիք զարիւն իմ, ոչ ունիք կեա
նըս յանձինս ձեր ։
Ընդ՝ի ձեռն սուրբ մարմնոյ և ար
եան քո՝ ազատեա զմա զի՛ յանցանաց
մեղաց, և սրբեա զմա շնորհիւ քո. զի
ճաշակելով՛ի կենարար մարմնոյ և ա
րենէ քումմէ՝ արժանի լիցի կենացն
յաւիտենից ։ Փառաւորել զքեզ ընդ
հօր և սուրբ հոգւոյդ այժմ և ։

Ալէլուիա. Ալէլուիա ։

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողոր ։

Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։

Կարող։

Ո՛վ ան՛ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զտէր։
Ո՛վ ան՛ սել լինելոյ տեառն աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զտէր աղա։
Ո՛վ ան՛ քաւիչ և ներող լինելոյ աստուծոյ ի վերայ մեղաց մերոց, զտէր ա։
Ո՛վ ան՛ Թողոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամաց և զակամայ, զտէր աղա։
Ո՛վ ան՛ զի մի ընդ խոտանս գոանիցիմք յաւուրն պատասխանատուութե՛ն, ըզ։
Ո՛վ ան՛ հոգւոյն հանգուցելոց ոյք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի քրիստոս ննջեցին, զտէր աղաչեացուք։

Եւ ևս միա. Ո՛վանձինս։ Ողորմեայ։

Ընթերցուածս Յեսայեայ մարգարէ։

Եւ եղիցի յամին յորում մեռաւ ոզիա արքայ, տեսի զտէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացեալ. և լի էր

տունն փառաք նորա: Եւ սերովբէք կա-
յին շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ՝ և
վեց թեւք միոյ. երկուքն ծածկէին զե-
րեսս իւրեանց, և երկուքն ծածկէին
զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալ:
Աղաղակէին մի առ մի՝ և ասէին. սբ.
սբ. սբ. տէր զօրութեանց՝ լի է ամ երկիր
փառաք նորա: Եւ վերացաւ դրանդն
ի ձայնէն զոր աղաղակէին, և տունն
լի եղև ծխով: Եւ ասեմ, վայ է ինձ՝
ես այր տառապեալ զի՞ արդ կամ հիա-
ցեալ. զի մարդ եմ՝ և պիղծ շրթունս
ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողո-
վրդեան բնակեալ եմ ես. և զտէր
զօրութեց տեսի աչօք իմովք: Եւ ա-
ռաքեցաւ առ իս մի ի սերովբէից անտի,
և ի ձեռին իւրում ունէր կայծակն.
զոր առեալ ունելեօք ի սեղանոյ անտի,
եբեր մերձեցոյց ի բերան իմ, և ասէ.
ահաւասիկ մերձեցաւ այդ ի շրթունս
քո, և հանցէ զանօրէնութիւնս քո,
և զմեղս քո սրբեսցէ ի քէն:

Յօհաննու առաքելոյն ի կաթուղիկեայց Ա. Թղթոյն:

Սիրեցիք՝ մարմին և արիւն որդւոյն այ՝ սրբէ զմեզ յամենայն մեղաց։ Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ։ Այլ եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ ՚ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ յամ անօրէնութէ։ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա. և բանն նորա ոչ է ՚ի մեզ։ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ հայր զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատն. և նա է քաւութիւն մեղաց մերոց։

Ալէլուիա. Ալէլուիա։

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Սրբոյ Աւետարանիւ Յհի Քի՝ որ ըստ Յօհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիք

Ջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբ-
Ջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս
յանձինս: Որ ուտէ զմարմին իմ՝ և
ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յա-
ւիտենականս. և ես յարուցից զնա
յաւուրն յետնում. զի մարմին իմ՝
ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝
ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին
իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնա-
կեացէ, և ես՝ ի նմա: Որպէս առաքեաց
զիս կենդանին Հայր, և ես կենդանի
եմ վասն Հօր. և որ ուտէն զիս՝ և նա
կեցցէ վասն իմ: Այս է Հացն՝ որ յեր-
կնից իջեալ. ոչ որպէս կերան Հարքն
ձեր զմանանայն՝ և մեռան. որ ուտէ
զՀացս զայս՝ կեցցէ յաւիտեան:

Ց- ապա ասէ զՀաւատամքն, և զնորին
խաչն, և զաղօթքն. և Հայր մեր. Երես 18:

Շ արական.

պձ Որ կամիցեր սեղանն խորհրդոյ, և
արբուցեր յանմահական բաժակէն,
որ՝ երբոք քոց առաքելոցն այսօր՝ ի ա՛ր

վերնատունն . աղաչեմք փըրկիչ մ՚ղ՚ՙրամեա՛ : Անքրեա՛ ըզմիտս ե՛ ըզ խորհուրդս , զի և մեք հաղո՛րդեսցո՛ւք սրբութեամբ ընդ սրբոց քոց առա՛ք : Տայ ըստ՛ւծ խորհուրդն ահե՛ ռնջա՛, և ասէ ցաղօ՛ն :

Գոհանամք զքէն հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի , որ արժանի արա՛ րեր զմեզ երկնաւոր պարգևացս այսո՛ ցիկ՝ կենարար մարմնոյ և արեան միա՛ ծընի քո : Աղաչեմք զքեզ տէր , մի լինի սա մեզ ՚ի դատապարտութիւն վասն բազում յանցանաց մերոց . այլ եղիցի սա մեզ յաւողջութի՛ հոգւոյ և մարմ նոյ , ՚ի զգաստութի՛ խորհրդոց , և ՚ի կատարումն ա՛մ գործոց առաքինութե՛ : Որպէս զի սրբեսցէ զսուրա միտս և ըզ շունչս , և անուանեսցի տաճար սրբոյ երրորդութե՛ն՝ առ ՚ի գտանել զողոր մութի՛ առաջի քո : Նո՛ գոհանալով փա՛ ռաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սո՛ :

Սուրբ հաչիւս : Պահպա : Հայր մեր :

ԿԱՆՈՆ

ԳԻՇԵՐ ԺԱՄՈՒ ԱՂՕԹԻՑ

Ոչ կոպարի՝ ի վերայ ծանր հիւանդացդ, ի բը-
ժշկու-ւիւն ցաւոց՝ և ի ցաւու-ւիւն յանցանացդ:

Հայր մեր որ յերկինս:

Ընդաքեա տէր զլոյս քո և զճշմարտու-
թիւն քո. զի առաջնորդեացեն ինձ և
հանցեն զիս ի լեառն սբ և ի յարկս քո:
Մտից առաջի սեղանոյ աստուծոյ առ
ած. որ ուրախ առնէ զմանկու-թիւն իմ:
Խոստովան եղէց քեզ օրհնու-թեամբ
աստուած աստուած իմ:
Ընդ՝ ընդէր տրտում ես անձն իմ.
կամ ընդէր խռովես զիս. յուսա առ
աստուած, խոստովանեա նմա. փրկիչ
երեսաց իմոց աստուած է:

Փառք հօր: եւս խա: Օրհնու:

Նկեացե՛ ի վերայ իմ ողորմու-թիւն քո
տէր, և փրկու-ի՛ քո ըստ բանի քում:

Տայ պատասխանի ոչ նախատեն զիս բանիւք. զի ես ’ի բանս քո յուսացայ։
Ակն ’ի բացեայ առներ ’ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտենից։
Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ’ի պատուիրանս քո զոր սիրեցի։
Ընդարձակ զձեռս իմ ’ի պատուիրանս քո զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քումմէ։
Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։
Սա մխիթարեսցէ զիս ’ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։
Ընդարատաւանք անիրաւեցան յիս յոյժ այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։
Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր և մխիթարեցայ։

Տրամաբանիւն կալաւ զնա ՚ի մեղաւոր-
բայց , և այք Թողին զօրէնս քո ։
Գովեալ են ինձ իրաւունք քո , ՚ի տեղի
ւոյ պանդխտութեան իմոյ ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր . և
պահեցի զօրէնս քոյ ։
Այս եղև ինձ ձանապարհ ՚ի կեանս . զի
զարդարութիւնս քո խնդրեցի ։
Օ՛անօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի ։
Օգնական և փրկիչ իմ՛ ես դու , և ես
՚ի բանս քո յուսացայ ։
Իբաց եղերուք յինէն չարք . և քննե-
ցից զպատուիրանս աստուծոյ իմոյ ։
Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո
զիս . և մի յամօթ առներ զիս ՚ի յու-
սոյ իմմէ ։
Օգնեա ինձ , և ապրեցո զիս . և խոր-
հեցայց զիրաւունս քո յամենայն ժամ։
Ընարգեցեր զամենեսեան՝ որք ապըս-
տամբ եղեն յարդարութենանց քոց .
զի անիրաւութեամբք էին խորհուրդք
նոցա ։
Յանցաւսրս համարեցայ զամենայն մե-

զաւուրս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բևեռեա ընդ երկիւղդ քո զմարմին իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Առնեցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում խմաստուն արա զիս։

Մատեան աղօթք իմ առաջի քո տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Իղձեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութիւն են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քոյ, կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առիս նըշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։

Փառք հօր և։ Այժմ և։

Սաղմոս։

Ընձեն իմ՝ի ձեռս քո է յամենայն ժամ, և՝ի սուք խաչ քո յուսացեալ եմ, թագաւոր երկնաւոր, զբազմութիւն սրբոց քոց քոց բարեխօս ունիմ առ քեզ, որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի անտես առնես զապաւինեալս՝ի քեզ. այլ պահեա պատուական և սուրբ խաչ քով՝ի խաղաղութեան։

Ալէլուիա. Ալէլուիա։

Ես ասացի՝ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացի ես՝ի դրունս դժոխոց։

Թողի զամենայն յետին իմ, և ասացի թէ այլ ոչ ևս տեսից զփրկութիւն տեառն յերկրին կենդանեաց, և ոչ ևս տեսից զմարդ բնակչաց խորհրդոց։ Պահապետայ ես յաղտատոհմէ իմմէ. այսուհետև Թողի զբի զայս ինձ։

Եւ գնաց մեկնեցաւ ինձէն հոգի իմ, ոտ
ղայն՝ որ քակէ զտաղաւար. և եղէ ես ոտ
ղոստայն աստարաց մերձ՝ ի հատանիլ։
Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառա
ւօտէ ոտ՝ ի ձեռս առիւծու. այնպէս
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ, զի
յառաւօտէ մինչ՝ ի գիշեր մատնեցայ։
Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի, ոտ
ղաղաւնի՝ այնպէս մնչեցի, զի նուա
ղեցան աչք իմ՝ ի տեսանելոյ։
Հայեցայ՝ ի բարձունս առ տէր աստ
ուած իմ՝ որ փրկեաց զիս, և փարա
տեցոյց ինձէն զցաւս անձին իմոյ։
Տէր, ասան այսորիկ պատմեցաւ քեզ.
զարթուցեր զանձն իմ, գարձուցեր
զհոգի իմ. մխիթարեցայ և կեցի։
Ահա՝ ի խաղաղութի դարձաւ դառնու
իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի կորեայց.
և ընկեցեր յետոյ զամենայն զմեղս իմ։
Օի ոչ լթէ որք՝ ի դժոխս են, խոստո
վան առնին առ քեզ. և ոչ մեռեալք
օրհնեսցեն զքեզ. և ոչ յուսասցին՝ ի
ճշմարտութիւնս քո ամենեքեան, այլ

լիցանեն ՚ի դժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ տէր, որպէս և ես այսուհետեւ մանկունս ծնայց, որք պատմեսցեն զարդարութիւնդ քո՝ տէր փրկութեան իմոյ։

Ես ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենաց իմոց յանդիման տաճարիդ սուրբ։

Փառք հօր և որդւոյ և։

Սաղմոնք։

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան տէր յիսուս փրկիչ. փրկեա և փարատեցո զցասս անձին իմոյ։ Ամարդասէր տէր, վասն սրբութեցդ ա նարատի մօր քո և կուսի, և վասն խաչի քոյ պատուականի, տէր, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Կարող։

Եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց՝ զտէր ա։ Նե ևս վասն հիւանդիս այս անուն որ

յուսացեալ է կոչել զանուն տեառն աստուծոյ՝ և զպօրութիւն նր ՚ի յոգևնութիւն և ՚ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ իւրոյ. որպէս զի ապրեսցի և կեցցէ, և վերստին նորոգեսցի քահանայական աղօթիւք ձերովք՝ և կարողութեամբն աստուծոյ, զտէր աղա։ Օ՛ամենասրբուհի զնծածինն՝ զմիշտ կոյս մարիամ՝ հանդերձ ամ սրբովք, յիշելով զտէր աղա։

Ես ևս վիաբան։ Օ՛անձինս մեր և։ Ողորմեաց մեզ տէր։

Աղօթք։

Տէր՝ որ ողորմութեամբ քով բժշկես զբեհումն հոգւոյ և մարմնոյ մերոյ, բըժշկեա զամենայն ախտս և զհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ այս անուն ծառայի քո. զի փառաւորեսցի ամենանայն անուն քո. զի քո է ողորմիլ և կեցուցանել ամ մեր։ Ես քեզ փառս մատուցանեմք՝ հօր և որդւոյ և։

Վարագ։

Եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Օրհնեա տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ո-
ղորմութեան քում, ըստ բազում գո-
թութեան քում քաւեա զանօրէնութիւն իմ։

Պիտոյն ըմն աստ։

Երգեան։

աձ Հայր բազմամողորմ խոստովանիմ առ
քեզ որպէս զանաւրէն որդին. թող
ինձ ըզմեղս իմ, և ազատեա։ Տէր
որ գթածցար ի կինն քանանացի, գո-
թա՛ և յիս ի մեղաւորս, և ազատ։
Տէր որ դարձուցեր ըզմաքսաւորն ի
գիտութիւն ճշմարտութեան, դարձ՛
և զիս զմոլորեա՛լս, և ողո՛ր։
Ցոյս և յարութիւն ազգի մարդկան
քրիստո՛ս ամատուած, զհիւանդութիւն
հոգւոյ իմոյ կենդանացո որպէս երբեմն
զնեղկիսայն։ Օ՜ չարչարա՛նս և ըղ

մահ յանձն առեր կենդանատու ամե-
նեցուն. պհիւանդութիւն հոգւոյ ի-
մոյ ամոքացո որպէս երբեք։ Ա՛ռ քեզ
ամաւելի՛ նիմք խորհի՛ն և՛ տանձառ աս-
տուածոյ բանիւն մարիամ մայր և՛ կոյս.
բարեխօսեա առ քրիստոս վասն ան-
ձինց մերոց։

Փալոլ։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց
բարեխօսութեամբ սուրբ աստուա-
ծածնին, և իջանելոյ ի վերայ մեր ո-
ղորմութեան և գթութեան տեառն
աստուծոյ. ամենակալ տէր աստուած
մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Աղօթք։

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխո-
սութեամբ սուրբ աստուածածնին,
անարատ ծնողի միածնի որդւոյ քո,
և աղաչանօք ամենայն սրբոց. լսեր
տէր և ողորմեա, ներեա, քաւեա և
թող զմեզս մեր. արժանաւորեա զո-

հանալով փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ այժմ։

Ալելուիա։ Ալելուիա։

Ես ասացի տէր ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա տէր։

Յակոբոս առաքելոյն՝ ի կաթուղիկեայց Ա. Թղթոյն։

Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք՝ ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնակատնութիւն։ Նկուն մարդ էր Իլիա ըստ մեզ չարչարելի. և յաղօթս եկաց, և ոչ տեղեաց յերկիր զերիս ամս և ըստ վեց ամիս։ Եւ դարձեալ եկաց յաղօթս՝ և եռուն երկինք զանձրեւ և բուսոյց երկիր զպտուղ իւր։ Նկատեալք իմ, եթէ ոք՝ ի ձէնջ մոլորեսցի՝ ի ճանապարհէ ճշմարտութեան, և դարձուսցէ ոք զնա. գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն՝ ի մոլորութենէն

ձանապարհէն իւրմէ, վրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։

Ալէլուիա. Ալէլուիա։

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա ինձ աէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Սբբոյ Աւետարանիս ՅՃ ԿԲ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Կոչեաց առ ինքն զերկոտասանեան, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս. այլ ագանել հողաթափս, և մի զգեներցուք աս՝ երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն

օթեվանս կալչիք՝ մինչև ելանիցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լսեցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ՚ի վկայութիւն նոցա։ Եւ եղեալ քահոդէին զի ապաշխարեսցեն. և դեւս բազումս հանէին և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա։

փառք քեզ տէր աստուած մեր։

Հաւատամք ՚ի մի աստուած հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի։ Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով։

Փարոզ։

Եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Օրհնեա՛ տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ։

Ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ո՛ղորմութեան քումմ, ըստ բազում գթութեանդ քումմ քաւեա զանօրէնութիւնս իմ։

զվերին ըմեն ասա։

Շ. պրեխան ։

ակ Ո՛ւմ կ՚ենցաղոյս հանապազ զիս ալէ-
կո՛ծէ ։ Աղօթիկեա՛ ալեք թշնամի՛ն ինձ
յարձացա՛նէ ։ Նա՛եսպե՛ս բարի՛ լեր
ա՛նձի՛ն իմոյ ապա՛ւէն ։
Ընդհեղի՛ զբազմա՛մաղո՛րմ ամասրեաց,
և լուա՛ ձայնի խընդրուածոյ իմոյ,
զի նուաղեցան աչք իմ՛ ի սեսանելոյ,
և յի՛նէն փարատեցոյց զյաւս անձի՛ն
իմոյ ։ Ո՛ թագաւո՛ր երկն քրիստոս բա-
րեբանեցեալ, որ՛ ի յանձն էիր ըզ
մահ խաչին և խափանեա՛ց ըզմահու
թագաւորութիւնն . և յի՛նէն փարա ։
փութացի՛ր յօգնութիւն մերոյ ամ-
տուածոյին . և ազատեա՛ զառ՛ ի
քէն ըզմարմնացեալ բանն ամասրեաց .
զի յահաւո՛ր և՛ ի մի՛ւսանգամ գալս-
սեանն իւրոյ պարգեւեսցէ մեզ ըզ
կեանսն յաւիտե՛նից ։

Կարող ։

Լուսից եր ձայնի աղաչանաց ։ Երե. 119 ։

Աղօթք ։

Ընկալ եր զաղաչանս մեր բարեխօսու ։

Ալէլուիա ալէլուիա ։

Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի ։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս ։

Ցովհաննու առաքելոյն ի կաթուղիկէսյց Ա. Թղթոյն։

Աղաւթք՝ եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա՝ և արդար, առ ի թողուլ մեզ զմեղս մեր և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ ։ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա, և բան նորա ոչ է ի մեզ ։ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք

բարեխօս առ աստուած զխիստս քրիս-
տոս՝ զարդարն՝ և զանարատ։ Եւ նա
է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ ե-
թէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշ-
խարհի։ Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ
ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նո-
րա պահիցեմք։ Որ ասիցէ՝ եթէ ծան-
եայ զնա, և զպատուիրանս նորա ոչ
պահիցէ, սուտ է՝ և ճշմարտութիւն
՚ի նմա ոչ գոյ։ Իսկ որ պահիցէ զբան
նորա, արդարև ՚ի նմա կատարեալ է
սէրն աստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝
եթէ ՚ի նմա եմք։ Որ ասիցէ ՚ի նմա
բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս
նայն գնաց։

Ալէլուիա ալէլուիա։

Զայնիւ լսով ես առ քեզ տէր կար-
դայի, ձայնիւ լսով առ աստուած.
և նայեցաւ առիս։
Յաւուր նեղութեան իմոյ զաստուած
խնդրեցի ձեռովք իմովք. և ՚ի գիշե-
րի առաջի նորա ոչ խաբեցայ։

Սրբոյ Աւետարանիս Յ֊ի Ի֊ի որ ըստ Ղուկասու ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Ու մտեալ շրջէր ընդ երկիրս. և ա֊
հա այր մի անուն կոչեցեալ զակքէոս,
և նա էր մաքսապետ, և ինքն մեծա֊
տուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ ի֊
ցէ Յիսուս, և ոչ կարէր ՚ի բազմու֊
թենէն, զի կարճ էր հասակաւ ։ Ու
ընթացեալ յառաջս, ել ՚ի ժանտաթը֊
զենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ
այն խակ անցանելոց էր ։ Իբրեւ եկն
՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր Յիսուս՝ և
ասէ ցնա. զակքէ փութով էջ այտի,
զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ
ագանել. փութացաւ և էջ, և ընկա֊
լաւ զնա ուրախութեամբ ։ Իբրեւ
տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝
թէ առ առն մեղաւորի եմուտ լու֊
ծանել ։ Նին եկաց զակքէոս, և ասէ
ցտէր. տէր՝ ահա զկէս ընչից իմոց
տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի,
հատուցից չորեքկին ։ Ու ասէ ցնա
Յիսուս. այսօր եղեւ փրկութի՛ւն տանս

այսմիկ. քանզի և սա որդի աբրահամ
մեր էր: Օ՛ի եկն որդի մարդոյ խընդ-
րել և կեցուցանել զկորուսեալն:

Կարոզ:

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեցուք:

Վ՛ասն՛ի վերուստ խաղաղութեան և
փրկութեան անձանց մերոց զտէր ա:
Նէ եւս վասն հիւանդիս այս անուն որ
յուսացեալ է կոչել զանուն տեառն
զտէր աղա:

Աղօթք:

Ընակիչդն աստուած սուրբդ սրբոց,
որ զմիածին քո որդիդ առաքեցեր բըր-
ժըշկել զամենայն ախտս հոգւոց և
մարմնոց մերոց. առաքեա զհոգիդ քո
սուրբ, և սրբեա զայս անուն ծառայս
քո, և ազատեա յամենայն մեղաց.
զի ողորմած ես և գթած: Նէ քեզ
փառս մատուցանեմք ընդ որդւոյ և
ընդ սրբոյ հոգւոյդ այժմ և:

Կարոզ:

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեցուք, ընկալ:

Օրհնեա տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ո։

Պիտոյն լման ասա։

Շարական։

բձ Անեղաբ միայն յերկինս և զարդարդ ըզ ցասմանն քո շարժեցաբ ի մեզ. տէր ըստ մեծի քում ողորմութեան նդ, ողորմեաս մեզ։ Լսաբ միայ ի դժոխս ընկղմեալ մեռանելոբ յանօրէնութեան մերում. տէր յիշեա զի պինս արեան որդւոյդ քո և ո ղորմեա։ Հալածեա ի մէնջ տէր նըզ շանաս խաչն քո զընդդիմամարտս և զանեղեւոյթ գաղանն. և մի տար յաղագս պատանութիւնն զքո ժառանգութիւն։ Ո՞ղեկիայն քեզ ո՞ զմաղթեմ հառաչ մամբ սըրտի իմոյ, որ վանն իմ խոնարհեցաբ ի յերկինից. յոյս կենդանութեան՝ն և փրկութեան իմոյ տէր։

Ա՛ր ՚ի խաչին բարձե՛ր ըզդատակնիք մահու, տա՛ր ածելով ըզբաժդուկըս քո. արձա՛կեա և զիս ՚ի կապանաց բանսարկուին. յո՛յս կենդ: Ա՛ր յամենայն ազգաց երաւ՚նեցար սըրբուհի և կո՛յս մարիամ. աղաչեա զառ ՚ի քէն ըզմարմ նացեա՛լն աստըւած, ա՛պրեցուցանե՛լ ըզմե՛զ ՚ի սատանալեաց գեհենայն:

Կարոզ:

Լո՛ւսկե տեր ձայնի աղաչա: Երե» 119:

Աղօթք:

Ընկալ տեր զաղաչանս մեր բարեխօ:

Ալէլուիա ալէլուիա:

Բարձր առնեմ զքեզ տեր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Տէր աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ ՚ի դըժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ՚ի գուբ:

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց Բ. Թղթոյն։

Ապաքէն դուք տաճար աստուծոյ կեն-
դանւոյ էք. որպէս ասաց աստուած,
թէ բնակեցայց ՚ի նոսա, և գնացից ՚ի
նոսա. և եղէց նոցա աստուած, և
նոքա եղիցին իմ ժողովուրդք։ Վասն
որոյ ելէք ՚ի միջոյ նոցա և մեկնեցա-
րուք, ասէ տէր. և ՚ի պիղծս մի մերձ-
ձենայք. և ես ընկալայց զձեզ. և ես
եղէց ձեզ ՚ի հայր, և դուք եղիջիք
ինձ յուստերս և ՚ի դստերս, ասէ
տէր ամենակալ։ Իսկ որովհետեւ զայս
աւետիս ունիմք սիրելիք, սրբեսցուք
զանձինս մեր յամենայն պղծութենէ
մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք ըզ
սրբութիւն ահիւն աստուծոյ։

Ալէլուիա. Ալէլուիա։

Երանի որ խորհի զաղքատն և ըզտըր-
նանկն, յաւուր չարի փրկէ զինա տէր։

Սբոյ Աւետարանիս ՅՃ. ԳԼ. որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ

քաղուամ գՀետ նորա, և նեղէին զնա։ Եւ կին մի էր ՚ի տեառատեսութեան արեան զերկոտասան ամ, և յոյժ վըշ- տացեալ ՚ի բաղում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն, և չէր ինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ, եկն ՚ի միջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զՀանդերձէ նորա. քանզի խորհէր ՚ի մտի, թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա՝ փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նո- րա. և գիտաց ՚ի մարմին իւր՝ թէ բըժշկեցաւ ՚ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ

գաղտն արար. քանզի գիտեր զինչ ե-
զեւ նմա. եկն՝ անկաւ առաջի նորա,
և առաց զամենայն իրն ստուգու-
թեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա. դուս-
տր՝ հաւատք քո կեցուցին զքեզ.
երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ
՚ի տանջանաց քոց:

Քարոզ:

եւ եւս խաղաղութեան զտեր աղաչեցուք:

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և
փրկութեան անձանց մերոց զտէր ա:
Եւ եւս վասն հիւանդիս այս անուն որ
յուսացեալ ե կոչել զանուն տեառն
զտէր աղա:

Աղօթք:

Աստուած մեծ և անքանչելագործ. որ
ապահես զուխտս քո, և տաս զողորմու-
թիւն սիրելեաց քոց, և զթողութիւն
մեղաց ՚ի ձեռն սրբոյ որդւոյ քո Յի-
սուսի քրիստոսի. որ նորոգեաց զմեզ
՚ի մեռելութենէ մեղաց մերոց: Որու
ես պր լուսաւոր առնես զկոյրս, և

կանգնեա զանկեալս։ Դու հաներ զմեզ ի խաւարէ, և ի ստուերաց մահու. ասելով ցկապեալս՝ թէ ելէք, և որք ի խաւարին՝ թէ յայտնեցարուք. յորս ծագեաց լոյս գիտութեան օձելոյ քո, որ եկն երեւեցաւ յերկրի, և ընդ մարդկան շրջեցաւ. և որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս աստուծոյ լինել։ Դու տէր՝ փրկական աւազանին վերստին ծննդեամբն զորդեգրութիւն մեզ շնորհեցեր, և հաղորդս արարեր զմեզ սուրբ անուան նորա։ Դու լինքն տէր ամենայնի նայեա յայս անուն ծառայ քո, զի փրկեալ ի մեղաց, եղիցի արդարացեալ ի քեզ, զգեցեալ զտէր մեր յիսուս քրիստոս։ Ո՛վ ողորմած և մարդասէր աստուած ես, և քեզ վայելէ։

Կարող։

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք, ընկալ։

Օրհնեա՛ տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ո։

ՂԻՈՒԱՆ ԼՄԱՆ ԱՍԱՑ ։

ՇԱՐԱԿԱՆ ։

ԻԿ Յամենայն ժամ աղաչանք իմ այս եղիցի. ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս տէր ։ Յանցանաց իմոց զարհո՛ւրսի սիրտ իմ. աղաչեմ զքեզ Թո՛ղ ինձ տէր ։ Ընտասուանց իմոց մի լռեր տէր. զի պանդո՛խտ եմ ես յանցաւո՛ր երկրի ։ Ընդունի Թագաւոր որ կամիս ըղձեան ամենայն մարդկան, որ կա՛յդան առ քեզ. լուր աղաչանաց մերոց և՛ նո՛ր ծոգեա հոգւո՛վ գիտութեան ։ Որ զառաքամանակեայ ըղձալսըն բարձեր ի մարմնոյն ե՛զ կեցուիլ , մշտնջենաւո՛ր ցուցանելով նըման զհոգեւորական առո՛ղջութիւն. լուր ։ Ընտսկակ և՛ բա՛րեգութ, բարեխօսութեամբ սրբո-

բուհնոյ անարատ մօր քո՛ և՛ կոնսի
լուր աղաչա ։

Կարող ։

Սուրբ զաստուածածնինն և զամենայն
սուրբս բարեխօս արասցուք առ Հայր
ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի
և գթասցեալ կեցուսցէ զարարածս
իւր. ամենակալ տէր աստուած մեր ։

Ազօթք ։

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօս ։

Ալէլուիա. Ալէլուիա ։

Աստուած յօգնել ինձ նայեա, և տէր
յընկերել ինձ փութա ։
Ամաչեսցեն և յամօթ լինին որ խնդր-
կեն զանձն իմ. դարձցին յետս և ա-
մաչեսցեն որք խորհէին ինձ չար ։

Պօղոսի առաքելոյն յերկրորդոց Թղթոյն Կ ։

Ընդարձակ աղաչեմ զձեզ եւս որ կապեա-
լոս եմ ի տէր, արժանի գնալ կոչմանն
յոր կոչեցարուք ։ Ամենայն խոնարհու-
թեամբ, և հեզութեամբ, և երկայնմը-
տութեամբ՝ անասել միմեանց սիրով ։

փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան : Ի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցաք ի մի յոյս կոչման ձերոյ : Ի հ տէր, մի հաւատք, մի մկրտութիւն : Ի աստուած, և հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ : Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն քրիստոսի :

Ալէլուիա. Ալէլուիա :

Դատ արա ինձ տէր՝ զի ես յամբծութեան իմում գնացի, ի տէր յուսացայ զի մի եղէց հիւանդ :

Սբոյ Աւետարանիս ՃԻ ԿԻ որ ըստ Մատթէոսի :

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս :

Ելեալ անտի Յիսուսի գնաց ի կողմանս տիւրոսի և սիդովնի : Եւ ահա՝ կին մի քանանացի ի սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեաց ինձ տէր որդի դաւթի, դուստր իմ՝ չարաչար այսահարի : Եւ նա ոչ եթ

նմա պատասխանի ։ Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին . արձակեա զնա՝ զի աղաղակէ ընդ հետ մեր ։ Նա պատասխանի ետ և ասէ . ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի ։ Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա և ասէր . տէր՝ օգնեա ինձ ։ Պատասխանի ետ նմա և ասէ . ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց ։ Եւ նա ասէ . այո տէր , քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս , և ասէ . ով կին դու՝ մեծ են հաւատք քո , եղիցի քեզ՝ որպէս և կամիս ։ Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու ։

Կարոզ ։

Եւ ևս խաղաղութեան զտեր աղաչեսցուք ։

Վասն ի վերուստ խաղաղութեան և ։ Եւ ևս վասն հիւանդիս այս անուանն որ

յուսացեալ է կոչել զանուն նմա, զնոր։

Աղօթք։

Ներեալար և մարդասէր տէր՝ որ զնամ հիւանդութիւնս և զնամ ախտս բժշկես բժշկեա զայս անուն ծառայ քո. յարո ըզ սա ի մահճաց ցաւոց. այց արա ողորմութեամբ և գթութեամբ քո. փարատեա ի սմանէ զամենայն տկարութի և զհիւանդութիւն. զի յարուցեալ քո կարող ձեռամբ, ծառայեսցէ քեզ հանդերձ ամենայն գոհութեամբ։ Ո՛վ դու ես աճ՝ աճ ողորմութեան և կեցուցիչ. և քեզ մատուցանեմք զփառս հօր և որդւոյ և։

Կարող։

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք ըն։

Օրհնեա՛ տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ։

Ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ո։

զվիճան ըմեն ասա։

Շարական։

գձ

Ո՛անապատական ըզ հոգեւոր ըզ գան-
ձըն յապաւանացու կենցաղըս ծախե-
ցի. այլ առ քե՛զ միայն պաղատիմ բա-
րե՛րար փրկիչ, խնայեա՛ ի մեղա՛ցեալ
ծառայս։ Ո՛ճանկ հոգւոյ ինձ քակ-
տե՛ցի և եղէ՛ անբարո՛նահաւ որթ. այլ։
Ոատաքանց եղէ՛ ես որպէս զարմա՛ե-
նի, պըտղակորոյս որպէս ձիւթենի. այլ
անիւղաբար և անոսկակալ փըրկիչ ես։
Ո՛առաքեցի զանըզեռելի ըզհնա՛ծութիւն
առ բարեգո՛ւթեն աըծ, և լըսա՛ր ինձ
՝ի լե՛ռնէ սրբոյ իւրմէ. և եհա՛ն ըզ
կեանս իմ յապաւանո՛ւթենէ։ Ո՛ւ-
ե՛րեա՛ց ըզմահա՛ծ կարողութիւնն
որ խաչեցա՛ւ վասն մե՛ր, և յարեա՛ե-
՝ի մեռելոց որպէս յառա՛ջնայնի կարող.
փրկեըլո՛վ ըզկեանս իմ յա՛։ Ո՛ստուածդ
ե՛ր որ ծընաւ ՝ի միշտ կուսէն ՝ի փըր-

կութիւն ազգի մարդկան, լուսաւո-
րելով լզտիեզերս ՚ի գիտութիւն ճըշ-
մարտութեան. և բարեբանեմք լզ
նորա բարեգըթութի՛ն։ Ո՛ւրախ լի՛ս ան
օրհնեա՛ցուք զա՛ծածինն որ կո՛յս մընաց
յետ ծը՛նընդեանն, և տարաւ յորո՛-
վայնի զանտա՛նելին ամե՛նեցուն, զհա-
մա՛բնակի՛ցըն հօր և ամենասո՛ւրբ
հոգւո՛յն։

Փարոզ։

Սուրբ զա՛ծածինն և զա՛մ սուրբս բա։

Աղօթք։

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխո։

Ալէլուիա. Ալէլուիա։

Ձնծացէ՛ք արդարք ՚ի տր՝ ուղղաց վա-
յելէ օրհնութիւն, խոստովան եղե-
րուք տեառն օրհնութիւք. տաճարաւ
սաղմոսարանաւ սաղմոս ասացէ՛ք նմա։
Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն նոր զի
բարի է, սաղմոս ասացէ՛ք նմա օրհնութիւ։

Գօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց թղթոյն։

Պարտ է մեզ՝ որ կարողս եմք՝ զտկա-
րութիւն տկարացն բառնալ. և մի՛
անձանց և ելթ հաճոյ լինել։ Այլ ի-
րաքանչիւր ոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լի-
ցի ՚ի բարիս՝ վասն շինուածոյ։ Քան-
զի և քրիստոս ոչ ելթէ անձին հաճոյ
եղեւ, այլ որպէս և գրեալ է. նախա-
տինք նախատողաց քոց անկան ՚ի վե՛ր իմ։
Բայց որ ինչ գրեցաւն՝ ՚ի մեր վարդա-
պետութիւն գրեցաւ. զի համբերութիւք
և մխիթարութիւք գրոց, զյոյսն ընկալ-
ցուք։ Այլ աստուած համբերութե
և ամենայն մխիթարութե, տացէ ձեզ
զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յի՛ն
քի՛ն. զի միաբանութիւք ՚ի մի բերան
փառաւորէ առնիցէք զաստուած, և
զհայր տեառն մերոյ յի՛ն քի՛ն։ Վասն
որոյ ընկալարուք զմիմեանս. որպէս և
քա՛ ընկալաւ զձեզ ՚ի փառս աստուծոյ։

Ալէլուիա. Ալէլուիա։

Աստուած յանուան քումմ կեցո զիս,
և ՚ի զօրութե քումմ իրաւ արա ինձ։

Սբդոյ աւետարանիս Յի ԿԻ՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Այն ցնոսա. Ումի է ի ձէնջ՝ որոյ ելցէ քարեկամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. քարեկամ՝ տուր ինձ փոխ երիս նկանակս. զի քարեկամ իմ եկն առ իս յուղեւոյ, և ոչ ինչ ունիմ դնել առաջի նորա։ Եւ նա ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ. մի աշխատ առներ զիս, զի դուռքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի, ոչ կարեմ յառնել և տալ քեզ։ Այսեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն քարեկամուԹեն, սակայն վասն ժուռԹեն յարուցեալ տացէ նմա՝ զինչ և պիտոյ ելցէ։ Եւ ես՝ ասեմ ձեզ. խընդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք. բաղխեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա։ Ցո՞ ոք ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր հաւկն, միԹէ փոխանակ

ձկանն՝ ծձ տայցէ նմա. և կամ խընդրեսցէ ձու, մի թէ կարիճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք, որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց. ո՛րչափ եւս առաւել հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն՚ի նմանէ:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութեան զտեր աղաչեցուք:

Վասն՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր ա: Եւ եւս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տեառն:

Աղօթք:

Խաղումաղորմ և բարերար տէր որ զօրացուցեր զմեզ՚ի ձեռն սրբոց առաքելոցն քահանայական աղօթիւք զհիւանդս բժշկել. աղաչեմք զքեզ, շընորհեա բժշկութիւն և փրկութիւն այս անուն ծառայիս քո. վարատեցո զամենայն հիւանդութիւնս, և սրբեա զաղտեղութիւնս հոգւոյ և մարմնոյ

առա մարդասիրութեամբ քով։ Եւ քեզ փառք և իշխանութիւն և պատիւ, այժմ և։

Եւ եւս խաղաղութեան պէտր աղաչեցուք, ընկալ։

Օրհնեա տէր։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ։

Ողորմեա լինէ աստուած ըստ մեծի ո։

Պիտան կման ասա։

Շարական։

գկ Կրկնատա աստուածածնի աստուծոյ. ո ղորմեա։ Ընդունելութեամբ ի մեղս երկնեաց զիս մայր իմ, աղաչեմ փրկիչ. ողորմ։ Վկրաւորեալ մեղօք անկանիմ առ քեզ փրկիչ. մի անտես առներ. ողորմ։

Ովքեղկիայիր ն քեզ մաղթեմ փրկիչ, որ կենարար բանիւ քո լուծեր զերկանըս մահու. փրկատեա և զիմ ըզհիւանդութիւնս. յոյս կենդանու-

թեան մեր կենդ ըզմեզ : Որ անմա-
հարար քո մեռելութեամբն աւերե-
ալ ըզդրաւնըս դըժոխոց մեռանցեր
ըզմահ . կենադործեա՛ և զիս զմեղք
ըզմեռեալս . յոյս : Աքսուր և ան-
բիծ կոյս յետ ծընդեան . որ մարմ
նով ծընար զարձակոզն ի կապից մա-
մու . բարեխօս լեր վասն անձինց
մերոց , փըրկել ի սատանայեայց գե-
հենից :

Կարող :

Լուեալ տեր ձայնի աղաչա : Երես 119 :

Աղօթք :

Ընկալ տեր զաղաչանս մեր բարեխո :

Ալելուիա . Ալելուիա :

Յարիցէ աստուած և ցրուեսցին ա-
մենայն թշնամիք նորա , փախիցեն ա-
տելիք նորա յերեսաց նորա :

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է :

Ընդէմ զձեզ եղբարք գթութեամբքն

աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ հաճոյ աստուծոյ զխօսուն պաշտօնդ ձեր. և մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտացդ ձերոց, առ ի քննել ձեզ զկամն, և եթէ զինչ են կամքն աստուծոյ բարին և հաճոյն և կատարեալն: Ոյս ասեմ շնորհօքն աստուծոյ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ի ձեզ. մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր որպէս և բաժանեաց աստուած չափ հաւատոյ:

Ալէլուիա. Ալէլուիա:

Ո՞վ բարի կամ զի վայելուչ, զի քնանալ կին եղբարք ի միասին:

Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մորուսն ահարոնի, և ի մորուացն իջանէ ի գրաստանս զգեստու նորա:

Սբոյ Աւետարանիս ՅԻ գլ որ ըստ Մարկոսի:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-

ամ . եթէ ունիցիք զհաւատսն ասա-
տուածոյ , ամէն ասեմ ձեզ , որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և անկիր՝ ի ծով , և ոչ երկմտիցէ՝ ի սրտի իւրում , այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի , եղիցի նմա զոր ինչ և ասիցէ : Վասն այսորիկ ասեմ ձեզ . զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք , և հաւատայցէք թէ առնուք , եղիցի ձեզ : Եւ յորժամ յաղօթս կայցէք , թողուցուք եթէ ունիցիք ինչ զուամեքէ . զի և Հայրն ձեր որ յերկինս նըս է , թողցէ ձեզ զյանցանս ձեր :

Քարոզ :

Եւ եւս խաղաղութեան զտեր աղաչեցուք :

Վասն ի վերուստ խաղաղութեան և : Վ՛եւ եւս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տեառն :

Աղօթք :

Տէր աստուած մեր՝ որ նստիս ի վերայ քերովբէից , և հայիս յանդունդս ,

հայեաց յայս անուն ծառայս քո ՚ի բարձրութենէ սրբութեան քո, հեռացո ՚ի սմանէ զամենայն ցաւս և զամենայն աղետեղութիւնս, և տուր սմա զառողջութիւն զամենայն աւուրս կենաց իւրոց: Ես քեզ փառք և իշխս:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք, ընկալ:

Օրհնեա՛ տէր:

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգ:

Ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ո:

Պիտանի եմ ասա:

Երգիկան.

դձ Ընկանի՛մ առաջի՛ քո՛ և խընդրե՛մ զթողութի՛ յանցա՛նաց իմոց. մի՛ անտես առնե՛ր հա՛յր զաղաչա՛նս իմ: Ընդունակե՛մ որպէս մաքսաւորն, և հե՛ղուլ զարտասո՛ւս իմ առաջի՛ քո՛ ո՛րպէս պոռնկին. մի՛ անտ: Յաներեւոյթ թըշնամ

ամն պարտեցայ, և ի գաղտնի նետից
բանասարկուին վիրաւորեցայ. մի՛ անտ։
Զայս կենդանութեա՛ն և փըրկութե՛ն
իմոյ ա՛ր աստուածդ իմ, ա՛յնչեա զիս
որպէս երբեմն զՂեկիայն. և դարձո
զհոգի իմ ի դրանց դըժոխոց։ Ո՛ր
կամաւոր մահուամբ քո մեռա՛ցեր ըզ
մահ քրիստո՛ս աւրծ. և լուսափայլ
յարութեամբ քո կենագործեցե՛ր զաշ
խարհս. կենագործեա՛ և զի՛՛՛ս զմե
ղաւք ըզմեռեալս։ Ա՛ր քեզ ապաւի՛նի
մըք սուրբ աստուածածին. բարեխո
սեա՛՛ անդադա՛ր առ որդի՛դ քո և աս
տուա՛ծ մեր, փըրկել ըզմե՛զ ի փոր
ձութենի՛ և յամենա՛՛՛յն վըտանգից
մերոց։

Կարող։

Սուրբ զածածինն և զամ սուրբս բա։

Աղօթք։

Ընկալ՛ ար զաղաչանս մեր բարեխօսու։

Աելսւիա. ալէլսւիա։

Որ բնակեալն ի յօգնութի բարձրելոյն, ընդ հովանեաւ այ յերկինս հանգիցէ։ Յօհաննու առաքելոյն՝ ի կաթուղիկեայց Ա. Թղթոյն։ Եւ դուք օծութի ունիք առ՝ ի սրբոյն, և գիտէք ամենեքին։ Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութին, այլ թէ գիտէք զնա. և թէ՝ զի ամենայն ոչ ի՝ ճշմարտութէ անտի։ Իսկ ո՞վ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ յիսւ չէ քրիստոս. նա իսկ է նեռն, որ ուրանայ զհայր և զորդի։ Ամենայն որ ուրանայ զորդի, և ոչ զհայր ընդունի. իսկ որ խոստովանի զորդի, նաև զհայր ընդունի։ Դուք՝ զոր լուարուքն իսկզբանէ՝ ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ՝ զոր իսկզբանէն լուարուք, և դուք յորդի և ի հայր բնակեսջիք։ Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանն յաւիտենական։

Աելսւիա. Ալէլսւիա։

Երանի ումմ Թողութիւն եղեւ մե-

ղաց, և ծածկեցան ամ յանցանք նորա։

Սբթ Աւետարանիս Յն ԻՆ՝ որ ըստ Դ. ուկասու։

Աղաչէր զնա ոմն ՚ի փարիսեցւոցն զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ ՚ի տուն փարիսեցւոյն բազմեցաւ։ Եւ կին ոմն էր ՚ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է ՚ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ ոտս նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նո՛ր, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր. և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՞վ՝ կամ ո՞րպիսի ոք կին մերձենայ ՚ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնա, սիմոն՝ ունիմ ինչ ասել քեզ. և նա ասէ, ասա վարդապետ։ Եւ ասէ. երկու պարտապանք էին ուրումն փոխատուէ. մին՝ պարտ էր հինգ հարիւր դահեկան, և

վիան յիսուն. և իբրեւ ոչ գոյր նո-
ցա հատուցանել, երկոցունց չնորհ-
եաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեցէ
զնա: Պետ սիմոն. ինձ այսպէս թուի
եթէ որում զբազումն չնորհեաց: Ցե-
նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: Ցե-
դարձեալ՝ ի կինն կողմն, ասէ ցսիմոն.
տեսանես զայս կին. մուտ՝ ի տուն քո,
ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա՝
արտասուօք իւրովք եթաց զոտս իմ,
և հերով իւրով չնջեաց. համբոյր մի
դու ոչ ետուր ինձ, սա՝ աւասիկ յորմէ
մեհեաէ մտեալ եմ, ոչ դադարեաց՝ ի
համբուրելոյ զոտս իմ. իւղով զգլուխ
իմ ոչ օծեր, սա՝ իւղով անուշիւ օծ:
Վասն որոյ ասեմ քեզ. Թողեալ լինին
սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրե-
եաց. զի որում շատ Թողուցուս՝ շատ
սիրէ, և որում սակաւ սակաւ: Ցե-
ասէ ցնա. Թողեալ լինին քեզ մեղք
քո: Եւ սկսան որ բազմեալն էին ընդ-
նմա ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է
սա որ զմեղս Թողու: Ցե նա՝ ասէ

ցկինն. հաւասաք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն:

Կարոզ:

Եւես խաղաղութեան զտէր աղաչեցուք:

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և: Նէ եւս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ ե կոչել զանուն սեռառն:

Աղթք:

Պոհանամք զքէն տէր աստուած մեր, որ ես բժիշկ բարի՝ անձանց մերոց. որ զհիւանդութիւնս մեր բառնաս. որ քո վերոք ամենեքեան բժշկեցաք: Որ հո վիւդ ես բարի, և խնդրող մալորեալ ոչխարին: Որ անձանց բեկելոց տաս ապիթարութիւն, և կեանս մահացելոց: Որ զաղքիւր արեան տեռատեսին քրանցիս հանդերձի քո բժշկեցեր: Որ զդուստր քանանացւոյն ՚ի դժնդակ դիւացն ազատեցեր: Որ զպարտս երկուց պարտապանացն չնորհեցեր. և մեղաւոր կնոջն զթողութիւն եառեր:

Ար զբժշկութիւն անպամալուծին պար-
գեւեցեր հանդերձ թողութեամբ մե-
ղաց նորա ։ Ար զմաքսաւորն բանիւ
արդարացուցեր . և զաւազակն ՚ի վեր-
ջին խոստովանութե՛ն նորա ընկալար ։
Ար զմեղս աշխարհի բարձեր , և ՚ի
խաչին բևեռեցեր ։ Ո՛ք եզ աղաչեմք ,
և ք՛եզ պաղատիմք , ներեա , և թող
զանօրէնութի՛ւն և զմեղս սորա զկամայ
և զակամայ , զգիտութեան և զանգի-
տութեան , զոր ՚ի գիշերի և զոր ՚ի
տունջեան ։ Ա՛յո աեր ամ՝ լուր ինձ
մեղաւորիս ՚ի պահուս յայսմիկ վասն
այս անուն ծառայիս ք՛ո , անտես արա
իբրև անյիշաչար աստուած զյանցանս
սորա զամենայն ։ Ո՛ք երան սորա քոյին
օրհնութեամբդ լցո . զչրթունս սորա
բաց , առ ՚ի փառաբանութիւն ան-
ուանդ ք՛ում սրբոյ . զձեռս սորա տա-
րածեա ՚ի գործս պատուիրանաց ք՛ոց .
զոտս սորա առ յընթացս աւետարա-
նին ուղղեա . և զամ անդամս սորա և
զմիտս պարսիակեա ք՛ոյին շնորհօք ։

Դու տէր աստուած մեր՝ որ ի ձեռն սրբոց քոց առաքելոց ծանուցեր մեզ ասելով, թէ զոր կապիցէք ի վերայ երկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և դարձեալ՝ եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողին նմա: Եւ որպէս լուաք եղեկիայ ի նեղութեան անձին իւրում՝ ի ժամու մահուան նորա, և ոչ անտես արարեր զաղաչանս նորա. լուր և ինձ մեղաւոր և անարժան ծառայի քո ի պահուս յայսմիկ: Քանզի դու ես տէր՝ որ ես օձիանաանելի օձին թողուլ՝ որք անկանին ի մեղս, հրամայեցեր քոյին մարդասիրութեամբդ. ապաշաւելով ի վերայ չարեաց մերոց, և խընդալով ի վերայ դարձի կորսւսելոց: Տէր աստուած մեր որ մտեալ ի տուն զակքէի ասացեր, այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ. դու որպէս մարդասէր և բազումողորմ փրկիչ, ա րա և այժմ փրկութիւն տանս այսոր ի կ. զի որպէս մեծութիւն քո, նոյնպէս և ողորմութիւն քո: Եւ քեզ

փառք և երկրպագութիւն, այժմ և։

Յայնժամ կէաս ՚ի չահանայէց կալով յաջմէ հե-
ւանդին, և կէաս ՚ի ձախմէ. և ասացեալն
եկեալ դնէ զաւետարանն ՚ի վերայ գլխոյ հի-
ւանդին, և ասէ զաղօթս։

Ընտուած ամենակալ՝ արարիչ ամ արա-
րածոց. որ առաքեցեր յաշխարհ զմիա-
ծին որդիդ քո, որ եկն և փրկեաց զմ
ամ , քերովբէական աթոռ արարչին
մերոյ տընօրհնութեան . զի ըստ երա
նեցդն ամենայն ազինք հաճնապաղ :
Բրիստոս աստիճած յոյս ապաշխարու- պաշ
թեան . հնարեաւ զթողութիւնն բազում
յանցանաց իմոց : Ա՛ռ քեզ բազմա
դարթ ապաւինեալ կայդամբք . մի մեր
ժեր ըզմեզ յոյղոմութենէդ քումմէ :
Արդէս զաւազակին ապաղաչեմ աս
քեզ . հիշեայ եւ զիս տէր ի քում յար
քայութեանդ :
Ամենազօր խաչդ քո տէր երկնից պաշ
պագեցուք . որով բարձեր ըղձատակ
նիք մահու քո արարածոց . փառս :
Ամենօրհնեալ աստուածամայր մարիա
ամ , քերովբէական աթոռ արարչին
մերոյ տընօրհնութեան . զի ըստ երա
նեցդն ամենայն ազինք հաճնապաղ :
Բրիստոս աստիճած յոյս ապաշխարու- պաշ
թեան . հնարեաւ զթողութիւնն բազում
յանցանաց իմոց : Ա՛ռ քեզ բազմա
դարթ ապաւինեալ կայդամբք . մի մեր
ժեր ըզմեզ յոյղոմութենէդ քումմէ :
Արդէս զաւազակին ապաղաչեմ աս
քեզ . հիշեայ եւ զիս տէր ի քում յար
քայութեանդ :

թեաւնց եւ սիրող, և քննես ըզծա-
ծումըս գաղտնեացդ սըրտի իմոյ. ա՛ւ-
ղիր : Տո՛ւր ի՛նձ ցընծութի՛ւն փըր-
կութեան, և հնդուտ առըութեանըդ
քո հաստատեա զիս. եւ ա՛ղիր :

ապաշ Ա՛ւելք յանցա՛նաց զիս ամենեքեան, և
մեղք իմ բա՛զում զիս յանդիմանեն :
Արդ զինչ արարից մեղսգեալ ան-
ձամբս, որ չեմ ապրելոց յահագին
հըրոյն : Անեղի՛ քեզ քրիստոս որդի՛
աստուծոյ, չնորհեա զթողութի՛ւն բա՛-
զում յանցա՛նաց իմոց :

ապաշ Տէ՛ր, որ ի՛մ միջ լերկնեն ա՛ղբերացդ՛-
ցեր ըզջա՛ւրն ի՛ վերկին : Տէ՛ր, ի սրտե
իմմէ հան ինձ ա՛րատասիրա ապաշխա-
րութեան : Օ՛ի կեցից և ա՛պաշխա-
րութեամբ ապրեցայց ի հանդերձեալ
քոց դա՛տաստանաց :

ապաշ Անեղութեա՛ն անձամբ կա՛րդամառ քե՛զ

հաՏը երկնաւոր, օգնեա՛ ինձ ՚ի նե՛ղ
ըմբռնեանս. որ մեղո՛քս եմ մեռեալ
ծգնեա՛ ինձ: Վ իրաւորեցա՛յ ես յա-
ներեւո՛յթ թշնամւոյն. բժի՛շկ հիւա՛ն-
դաց. բըժշկեա՛ զիմ զհիւանդութիւնս.
որ մե՛ռ: Ա՛ղօթեցա՛յ ես որպէս զուչիար
կորուսեալ. եւ Ա՛ստղ ոսկի ընկե-
լեա՛ զիս զմո՛ռեալս. որ մեղո՛քս եմ:
Ա՛ղբիւր քեզ տէր քա՛ւեա՛ զիս և ա՛յ
ըմբռնեա ինձ ա՛ստըւածդ: Ո՛չխար եմ
բանաւոր հօտի քո՛ւ տո՛ւ քեզ ապա-
ւինիմ հո՛վիւ բա՛րի, եւ ընդունեա՛ զիս
զմո՛ռեալս և ա՛ղօր: Ի՛ ծովէ՛ մեղաց
ալեկոծեալ եմ ես տո՛ւ քեզ ա՛ղաղա-
կեմ նաւա՛պետ բա՛րի, փրկեա՛ զիս ՚ի
վշտահեղեղ և ա՛ղօր:

Օ՛ ՚այհուրեա՛ղ դողացա՛ւ ամենամեղ

ապաշ

անձն իմ, յայնժա՛մ զղջ քոց դատաստա-
նաց, յանդերձեալ տա՛նջանացն: Վա՛ն-

զի կամաւ մերձեցար Ի՞ր՝ ի մեղս մեր ծամեծս. աղդ կա՞յ եւ մընայ ինձ անդնել պատուհան։ Աղդ անկեալ աղաչե՞ր իմ փըրկիչ եւ բարեբար. ըսը նայեա՞ց յիս՝ ի մեղուցեալս, եւ ողորմեա՞ ինձ բանմանելիս։

ապաշ Ա՛մենաիկալ քաւեա՞ զ ըզմե՛զս իմ. զի անտըւած եմ ապաշխարողաց։ Ա՛ւ զհո՛գիդ սուրբ մի՛ հաւաներ յինէն զի անտըւած։ Ա՛ւ փըրկեա՛ զիս յաչ հաւ՛գին հըրոյն. զի անտըւած։

ապաշ Յո՛ժ յիս իմ՝ ի մանկո՛ւթենէ իմմէ. մի թո՛ղուր զիս տէր աստը՛ւած իմ։ Յո՛ժ յիս իմ՝ ի ժամանակի ծերո՛ւթեան իմոյ. մի լքա՛նիր զիս տէր աստը՛։ Յո՛ժ յիս իմ՝ ի միւսանգամ դալո՛ստեան նըման. մի անտես ա՛ռնես զիս տէր աստը՛։

մաս Օ՛ղորմուԹեա՛ն քո զղուռըն բաց մե՛զ տէր. և արժանի արա՛ զմեզ լու-

աեղէն յարկաց. քոց ընդ սո՞ւրբըս. քո՛։
ի պատրաստեա՛լ. քո յօթեւա՛նըս սըր-
բոց. քոց ընկալ՛ և ը՛մեռ վըրկիչ յոր-
դէդրութիւն՝ ի դըպրութեա՛ն կենաց։
ի նըստիլ. քո յաւերնի դասա՛ւոր ա-
հեղ լանայեա՛ յարարա՛ծըս. քո, բարե-
խօսութեամբ և աղօթիւ՛ք սուրբ ձը՛ե-
նաւորացն։

գլխ Ո՛ր կոչեցեր ըզհե՛ռացեա՛լըս ի հար-
սանիս. քո՛ վիաճնին, ըմպել ըզաժակն
խմա՛ստութեան՝ ի ձե՛ռըն սըրբոյն գրի-
գորի. բա՛րեխօսութեամբ սորա ո՛ղոր-
մեա՛ մեզ աստուա՛ծ։ Ո՛ր գերապա՛յ-
ծան ը՛նդունութիւն չարչարանաց. քո՛ ընա-
բելոյն դարձուցեր ըզմո՛ռնըթեալըս՝ ի գի՛-
տութի՛ն ճըշմարտութեան. բա՛րե։
Ո՛ր՝ ի վերայն անդը՛նդային ջաղխեր
նովաւ ըզբա՛խս վիշապին, ՝ի գբի նեռը-
նուա՛ն լիմա՛մբ նորին բարձրացուցեր

զմեզ ՚ի յերկինս . բաւե ։

յոր Յարեաւ երեւեցաւ առաքելոցն , եւ մեզ փրկիչ ընդմեզ ։ Կեզ քրիստոսի Թագաւորիդ անմահի երկնրպատգանեմք , և զյարութիւնդ քո փառաւորեմք ։ Փառք փրկողիդ և միածնիդ անմահի . փրկեա զմժողովուրդըս քո զոր ըստացար պատուականաւն արեամբդ քո սրբոյ ։

հոգ Ա՛ղբիւր կենաց բաշխող ընտրեցդ հոգի գիդ իջեալ ՚ի բարձանց . զանապականն պարգեւըն քո՜ բաժանեցեր յաւետ եաման ։ Ա՛ր ՚ի վերոյ զուրցըն գոլով առեղծանէիր զիրարածս . իջեալ ՚ի ջուրս աւազանին՜ ծնանիս որդիս աստուծոյ ։ Ա՛ր զարդարեալ նորոգես միշտ ընտրեալ քո զեկեղեցի . պէս պէս շնորհաց քոց պարգեւօք վայելին մանկունք սորա ։

Հան Հոգի՛ սրբական զոր առեր յինէն, ես տամ քեզ զայն. ոչ որպէս աշխարհ տայ՝ ես տամ քեզ. մի՛ խռովեսցի սիրտ քո, եւ մի՛ երկնչիր։ Լուարուք զոր ասացի ձեզ, թէ երթամ եւ գամ առ ձեզ։ Եթէ սիրէիք զիս՝ ուրախ լինէիք, զի ասացի, թէ երթամ առ Հայր, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ արդ ասացի ձեզ յառաջագոյն քան զլինելն, զի յորժամ լիցի՝ հաւատասջիք։ Ոչ բազում խօսեսցայց ընդ ձեզ, զի գայ իշխան աշխարհիս այսորիկ, եւ ինձ ոչ գտանէ ինչ։ Այլ զի գիտասցէ աշխարհ, թէ սիրեմ զՀայր, եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ ոչ ինքնին խօսիմ։ Յարուցէք, երթիցուք ասդի։

Ես եմ որթատունկ ճշմարիտ, եւ Հայր իմ արարիչ է։ Զամենայն ոստ իմ որ ոչ պտղաբերէ զիս՝ առնու զայն, եւ զամենայն որ պտղաբերէ զիս՝ զայն մաքրէ, զի բազում պտուղ բերիցէ։ Դուք մաքուր էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ։ Բնակեցարուք ի մէնջ, եւ ես ի ձեզ։ Որպէս ոչ կարէ ոստ պտուղ բերել յանձնէ, եթէ ոչ բնակեսցէ ի որթատունկն, նոյնպէս եւ դուք, եթէ ոչ ի մէնջ բնակեսջիք։ Ես եմ որթատունկ, դուք ոստք։ Որ բնակեսցէ ի մէնջ եւ ես ի նմա՝ նա բազում պտուղ բերիցէ, զի առանց ինձ ոչ կարէք զինչ առնել։ Եթէ ոք ոչ բնակեսցէ ի մէնջ՝ արտաքս հանեալ իբրեւ զոստ ցամաքեսցի, եւ ժողովեսցեն զնա եւ ի հուր արկցեն, եւ այրեսցի։ Եթէ բնակեսջիք ի մէնջ, եւ բանք իմ ի ձեզ բնակեսցին, զոր կամիցիք խնդրեսջիք, եւ լիցի ձեզ։ Ի սմա փառաւորեցաւ Հայր իմ, զի բազում պտուղ բերիցէք, եւ լինիցիք ինձ աշակերտք։ Որպէս սիրեաց զիս Հայր՝ եւ ես սիրեցի զձեզ։ Արդ բնակեցարուք ի սէր իմում։ Եթէ զպատուիրանս իմ պահեսջիք՝ բնակեսջիք ի սէր իմում, որպէս եւ ես զպատուիրանս Հաւր իմոյ պահեցի, եւ բնակեալ եմ ի սէր նորա։ Զայս ասացի ձեզ, զի զուարճութիւն իմ ի ձեզ բնակեսցի, եւ զուարճութիւն ձեր լցցի։ Այս է պատուիրան իմ, զի սիրեսջիք միմեանս, որպէս սիրեցի զձեզ։ Ոչ ոք ունի սէր մեծ քան զայս, զի զանձն իւր դիցէ վասն բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք իմ էք, եթէ առնիցէք զոր ինչ պատուիրեմ ձեզ։ Ոչ ասեմ ձեզ զի ծառայք, զի ծառայ ոչ գիտէ զինչ առնէ տէր նորա։ Այլ ասացի ձեզ զի բարեկամք, զի զամենայն զոր ինչ լուայ յՀաւրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ դուք զիս ընտրեցարուք, այլ ես ընտրեցի զձեզ, եւ կացուցի զձեզ զի երթիցէք եւ պտուղ բերիցէք, եւ պտուղ ձեր կացցէ, զի զինչ խնդրիցէք ի Հաւրէ յանուն իմ՝ տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ ձեզ, զի սիրեսջիք միմեանս։ Եթէ աշխարհ ատիցէ զձեզ՝ գիտասջիք, զի զիս նախ քան զձեզ ատեաց։ Եթէ յաշխարհէ էիք՝ աշխարհ զիւրն սիրէր, այլ զի ոչ էք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այսորիկ ատէ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր։ Եթէ զիս հալածեցին՝ եւ զձեզ հալածեսցեն, եթէ զբանս իմ պահեցին՝ եւ զձեզ պահեսցեն։ Այլ զայս ամենայն առնիցեն ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զԱստուած որ առաքեաց զիս։ Եթէ ոչ եկեալ էի եւ խօսեցայ ընդ նոսա՝ մեղս ոչ ունէին, այլ արդ ոչ ունին պատրուակ մեղաց իւրեանց։ Որ զիս ատէ՝ եւ զՀայր իմ ատէ։ Եթէ գործս ոչ արարի ի նոսա զոր ոչ արար այլ ոք՝ մեղս ոչ ունէին, այլ արդ եւ տեսին եւ ատեցին զիս եւ զՀայր իմ։ Այլ զի լցցի բանն որ գրեալ է յօրէնսդրութեան նոցա, թէ ատեցին զիս անպատճառ։ Եւ յորժամ եկեսցէ Մեծ Մեծ Մեծ

կանգնեցաւ. սա՛ եղեալ մեզ պահապան յաղթող, ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թըշնամւոյն: Ի՛ սմա քարձրացար բարձողդ անիծից որ փառաւորեալդ ես ընդ հօր. ժողովո՛ւ ըզհետացեալսըն կենսաբեր փայտիւն. ապրեցուցանել ըզ:

փառք հօր և որ: Ամէն և միշտ և:

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սա՛ սպասէին արգելեալքն ի մեղսասէրը բանտին. որ ազատեաց ըզմեզ ի պատրա՛:

Կարող:

Վ՚ան ի վերուստ խաղա: (Եբե. 105):

Աղօթք:

Ստուած յաւիտենական, անսկիզբն՝ անեղ՝ անիմանալի՝ անհասանելի խորհուրդ: Հայր բարեխնամող, ծնող միածնի որդւոյ, և արտաքս առաքող հոգւոյդ սրբոյ, որ ի քէն ելանէ՝ և

ընու զամենայն արարածս : Դու տէր՝ կարող զօրութեամբ քով՝ առեալ հող յերկրէ՝ արարեր զմարդն, և բնակեցուցեր զնա յանախտ և յանաշխատ կեանս անմահս, և պատուիրանադրութեամբ քով զգեցուցեր զնա անամօթ փառօք ՚ի դրախտին փափկութեան : Սակայն չարին խանդացեալ ընդ մեծութիւն փառացդ պատուոյ նորա, զոր ՚ի քումմէ բարերարութենէդ ընկալեալ էր, և պատրեալ զնա յաղագս անհասին ցանկութեանդ. որ և զկնի տեղի փառացն ոչ պահեաց, կամակոր եղեալ յերեսաց քոց տէր : Իսկ յանցանել նորա զպատուիրանաւ քով՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան, զգեցուցանելով նմա զմաշկեղէն հանդերձն, զտխրալի և զախտաւոր մարմինս. և սահմանեցեր հողադարձիլ հողոյն :

Սակայն և ոչ այնու անտես արարեր զնա, այլ առաքեցեր զմիածին որդիդ քո. որ եկեալ մարմնացաւ յանարատ

և յանապական կուսէն մարիամայ, և զգեցաւ զՀնացեալ մարմին ծառայութեան մերոյ, զոր ծառայեցաք մահու մեղաց՝ տարագրութիւք ՚ի ձեռն կնոջն գաւաճանութեան. և աղաւեցոյց աստուածութեամբն իւրով ՚ի ձեռն փրկական խաչին իւրոյ՝ և անապական Թաղմանն։ Օ՜ի զոր վասն անսուտ բանի քո հարկիս պարտէաք մեռանել, և բարձ աքանչելագործ յարութեամբն իւրով. և լուսաւորեաց զաղգս որդւոց մարդկան ՚ի նոյն նմանութիւն պատկերի քո, որով ստեղծեր զնախնին մեր զՀայր. և ծանոյց մեզ զանուն քո, որով արժանաւորեցաք կոչել զքեզ Հայր։ Վ՜ասն զի նստեալով ընդ աջմէ քումմէ մարմնովն զոր ՚ի մէնջն էառ, և մեզ խոստացաւ յոյս յարութեան կենաց ՚ի միւսանգամ գալստեան իւրում ՚ի դատաստան յաւուրն յետնում։ Եւ պարգևեաց մեզ զժամադրութիւնն գործոց բարեաց զանցաւոր կեանս որով մարթասցուք գտանել զեր-

կիրն կենդանեաց ՚ի ձեռն վարդապե-
տութեան սրբոց առաքելոց իւրոց, ո-
րովք եբարձ զդիւամոլ կռապաշտու-
թիւն յաշխարհէս։

Եւ այժմ բարեբար և բաղձմողորմ
աստուած՝ ընկալ զհոգի ծառայիս այ-
սորիկ, որ ելից զժամանակ պանդխա-
տութեան իւրոց ՚ի վերայ երկրի, և ըն-
կալաւ զլուծումն յաշխատութենէ,
և յաշխարհահեծ պատրոգական խա-
բէութենէ. և դասաւորեա զսա ընդ
սուրբս քո յարքայութենդ երկնից,
ուստի մերժեալ են ցաւք և հեծու-
թիւնք, միշտ յարտաշուարձ բերկրա-
նօք պայծառացեալ տեսլեամբ աստուա-
ծային փառաց քոց, ուր ուրախանան
ամենայն ընտրեալք քո։ Ընդ նոսին դա-
սաւորեա տէր՝ զհոգի հանգուցելոյս
մերոյ այսորիկ. զի և մեք առաւել հան-
դերձ փառաւորեսցուք զքեզ հայր՝
ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ,
այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հայր մեր որ յերկինս և յերկրի և յա-
ւիտեանս, սուրբ եղիցի անուն քո ի
վերայ մեր: Եղիցին կամք քո որպէս
յերկինս և յերկրի, և փառաւորեսցի
անուն քո յաւիտեան: Որ պատրաս-
տեցեր մեզ հանդիստ յերկրաւոր աշ-
խատութեանցս՝ յանանց և յանախտ
կեանս: Որ ի ձեռն միածնի քո սպա-
ներ զմահ, և լուսաւորեցեր զմեզ ի
կեանս և յանեղծութիւն: Որ փրկե-
ցեր զսուրբս քո յիշխանութենէ խա-
ւարի, և փոխեցեր յարքայութիւն
որդւոյ քո սիրելւոյ՝ տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի: Ընկալ և
այժմ մարդասէր տէր՝ աղաչեմք զքեզ
զհոգի սորա ընդ արդարս քո ի հան-
գըստեան քում. և թուեա զսա ի
համարս սրբոց քոց ի ձեռն միածնի
որդւոյ քո, և նորոգողի հոգւոյդ սրբոյ:
Ընդ որում քեզ հօր ամենակալի, վա-
յելէ փառք:

Ալելուիա. Ալելուիա:

Ընդ չափով եդեր զաւուրս իմ. և կաց

զօրութեան իմոյ որպէս ոչ ինչ է առաջի իմ. սակայն ընդունայն է ամենայն մարդ մեղի: Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի, գանձէ և ոչ գիտէ ումմ ժողովէ:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց Բ. թղթոյն է:

Օրհնեալ է աստուած և հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. հայր գըթութեանց, և աստուած ամենայն մխիթարութեան. որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր. առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յաստուծոյ: Զի որպէս առատեալն չարչարանքն քրիստոսի ի մեզ, նոյնպէս և ի ձեռն քրիստոսի առատեալ լիցի և մխիթարութիւնն մեր: Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան և փրկութեան. և եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մխիթարութեան և փրկութեան. որ յաջող

եան է համբերութեամբ նոցին չարչարանաց, զոր և մեքն չարչարիմք. և յոյն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն՝ նոյնպէս և մխիթարութեանն։ Քանզի ոչ կամիմ զձեզ եղբարք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յասիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ և՛ի կենաց։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի մի յանձինս ապաստանիցիմք, այլ յաստուած՝ որ յարուցանէ զմեռեալս. որ յայնպիսի մահու անէ փրկեաց զմեզ՝ և փրկեացէ. քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեացէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։

Ալելուիա. Ալելուիա։

Զայնիւ իմով ես առ տէր կարդացի. ձայնիւ իմով առ աստուած՝, և նայեցաւ առ իս։

Սրբոյ Աւետարանիս ՃԻ ԿԻ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ
որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ,
եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ.
զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նը-
մին նման գործէ։ Օ՛ի հայր սիրէ զոր-
դի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝
զոր ինքն առնէ. և մեծամեծս եւս
քան զայնս ցուցանէ նմա զգործս,
ընդ որ դուքդ զարմանայք։ Օ՛ի որ-
պէս հայր յարուցանէ զմեռեալս և
կենդանի առնէ, նոյնպէս և որդի զո-
րս կամի կենդանի առնէ։ Եւ ոչ ե-
թէ հայր դատի զոք, այլ զամենայն
դատաստանն ետ որդւոյ իւրոյ. զի ա-
մենեքեան պատուեսցեն զորդի, որպէս
պատուեն զհայրն, որ ոչ պատուէ զոր-
դին, ոչ պատուէ զհայր զառաքիչն նր։

Կարող։

Վ՛ան ուղղել զգնացս։ (Ելք 18։)

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Ընտուաձ հոգւոց և ստեղծիչ մարմնոց. որ զմահ խափանեցեր՝ և զսատանայ կոխեցեր, և աշխարհի կեանս պարգեւեցեր: Յանգո զհոգի ծառայիս քո՝ ի տեղւոջ լուսոյ՝ և ի տեղւոջ հանգստեան, ուստի փախուցեալ են ամենայն ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: Եւ ամենայն մեղաց առ ի սմանէ գործելոց ներումն ասացես, եթէ բանիւ՝ և եթէ գործով և եթէ մտածութեամբ. դու որպէս բարերար և ողորմած և մարդասէր աստուած՝ թողութիւն շնորհեա սմա: Վասն զի ոմ է մարդ՝ որ կեցցէ և ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց. և արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից՝ որ ոչ անցանէ. և բանք քո ճշմարիտ են. և դու ես կեանք և յարութի ամենայն ննջեցելոց. և քեզ ընդ հօր և սբ հոգ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Ընծեակալ տէր, որ բարերարութիւ

քով զաշխարհս արարեր. և սահմաներ զմարդն ի հողոյ, և եդեր զնա ի կեանսն և ի փառաւորութեան քումմ. և լցուցեր զնա բարութ պարգեւօք՝ և առատ ողորմութեամբ քով: Իսկ նա խաբեալ ի չարէն՝ արտաքսեցաւ ի դրախտէն՝ և անկաւ յերկիր մահու, և զանիծաբեր կեանս ժառանգեաց: Այլ դու ողորմած տէր՝ ոչ անտես առնես զարարեր զնա ի խնամոց գթութեան քո, այլ դարձեալ անդրէն առ քեզ դարձուցեր, և հանգուցեր ի հանգիստ կամաց քոց:

Վասն որոյ աղաչեմք զքեզ հայր երկնաւոր՝ ի վերայ ամենայն ննջեցելոց, մանաւանդ որ այժմ հանգուցեալս է. ընկալ զհոգի սորա խաղաղութեամբ, և հանգո ընդ սուրբս քո: Նա մեք գոհանալով փառաւորեցուք զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյ:

Նա ապա ասէ յաճախեղէն երիս պոռն, և յարարիչ և մարդասէրդն Տէր պոռն:

Հոգւոյն հանգուցելոց քրիստոս աս:

Տանին յԵկեղեցին և ասեն ։

Շ. տրական ։

գկ հանգ

Ի՞նդ ա՞ծ որ ՚ի ծո՞ց հօր, վասն մե-
ր՞ոյ փըրկուԹեա՛ն ՚ի յերկինից խոնա՞ր-
հեցար, զի զմեզ նորոգե՞ացես ՚ի կեա-
նըս. ա՞լծ հարցըն մերոց ։ Ո՛ր հան-
դե՞րձեալ ես գա՞լ փառո՞ք հօր զար-
Թուցանե՞լ զննջե՞ցեալսըն ՚ի սուրբ ա՞-
նուանըդ քո. նո՛րոգեա՛ և ըզմե՛ր նըն-
ջեցեալան ա՞լծ ։ ԸնդմահուԹեա՛նց տը-
ւողբրիստոս և պա՞րգեւիչ կենդանո՞ւ-
Թեան, ՚ի միւսանգա՛մ գալստեանն և
յաշխարհակա՛ն ա՞տենին Թո՛ղուԹի՛ն
շնորհեա մեր նը՞նջեցելոցն. ա՞լծ ։ Ո՛ր
նըստի՞ ընդ աջմ՞ հո՞ր ծնողի իւրոյ, և
մա՞րդասիրապէս խընամ՞ զարարածըս.
բարձր ։ Ո՛ր զհողացեալ բնուԹի՞ մարդ-
կան նորո՞գ իւր ա՞ծուԹեամբն, և՛
կենագործե՛ ՚ի կեանս անմահ. բարձր ։

Յանըսկըզբնականն ծոցոյ հօր խոնար-
հեաւ բանըզ մարմնացար ՚ի կուսէն և
վասն փըրկութեան մերոյ, ամլաչեմք
ըզքեզ. զնընջեցեալսըն մեր ՚ի քէզ
ուղիղ հաւատով յիշեաւ սէրդ ըր յոր-
ժամ գան թագաւորութեամբդ քո:
Ընոխակալ քաղցրութեամբ որդի ես,
հաճեցար բառնալ ըզմեղս աշխարհի
քո խաչելութեամբն. աղա: Կամաւո-
րակն մահուամբ քո լուծեր զերկնա-
նըս մահու, և արժանի արարեր թո-
ղութեան յանցանաց քաւիչ քո ար-
եամբ: աղա: Որ վոխանակ մեղաւո-
րաց ըզմեռանիլ յանձն առեր. ինչանե-
լով ՚ի դըժոխըս փրկեցեր ՚ի մեղանէր
բանտէն ըզդերեանն. աղա: Խարե-
բանեմք զանչափ քո զմարդասիրութիդ,
որ երեքօրեայ յարուցեալ զկենդանու-
թիւն պարգեւեցեր աշխարհի. աղա:

տէր Լ ՈՅա ՚ի լուսոյ զմեզ լուսաւորեա, որ փառաւոք հօր հանդերձեալ ես գալ ՚ի դատել զերկիր. արժան նաւորեա և զմեր զընկ՚նչեցեալսն անճառ խնամոմն նց.քոց ընդ սուրբըս քո: Հօր և հոգւոյ համապոյակից, ՚ի տիեզերական ահեղ աւետին արժան: Երկնի և երկրի արդար դատաւոր, յորժամ հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց, արժան:

մե Լ եառըն վիճածին, աղբիւր յորդառատ, բարունակ ծաղկեալ, այգի վայելուչ, սրովբէ հողեղէն. բաբունոյ բանին տուն տնօրէնութեան, տապաստար հոգւոյն. առ ծընեալն ՚ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ շնորհել զթողութիւն մեր նզ՚նչեցեալսն: Փափկութեան դրախտին բացօղ բանալի. քրիստոսի բարձող նը

մանող երկնից, սափոր ոսկեղէն լի
մանանայիւ, գաւազան Ծաղկեալ յար-
մատոյն յեսսեայ, տապանր լուսոյ մայր.
ան: Ձօղ քաղցրածաւալ, ցանկալի
զուարթնոցն, նիւթեղէն որովքէ. գեղ
մարգարտափայլ, հիմն Եկեղեցւոյ.
մաքուր աղաւնի, ամպ հովանաւորն սբ
կոյս մարիամ. ան:

Աւ պահապան որ ճշգեցար յեդեմայ, խաչն
նըշան յաղթութեանն ընդդէմ անե-
րեւոյթ թըշնամւոյն: Դու փակեալ
դրախտին բացող և անաջնորդ մա-
զակին. որ զբոցեղէն սուրն կապտեցոյց
ան նեղլին հրամանաւ:

փառք հօր և: Ա յժմ և միշտ և:

Ւրեւ ցընծան ըստորայինքս առնայն
ի մխիթարանգամ քո գալստեանն. և
յաւէժ զուարճանան զառաք ան-
մարմնոցն ան էին:

Ալելուիա · Ալելուիա ։

Երանի ամենեցուն որ քնակեալ են ի տան տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զնա ։

Որպէս սիրեաց զիս հայրն, սիրեցի և ես զձեզ, ցանկայ և փափագի անձն իմ ի գաւիթս քո ։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց Ա· Թղթոյն ։

Ոչ կամիմ եղբարք՝ եթէ տգիտք լինիք վասն ննջեցելոցն · զի մի տրտմիցիք որպէս և այլքն որոց ոչ գոյ յոյս ։ Եթէ հաւատամք՝ եթէ յիսուս մեռաւ և յարեաւ · նոյնպէս և աստուած զնոսա ննջեցեալսն ի ձեռն յիսուսի ածցէ ընդ նմա ։ Բայց զայս ասեմք տեառն բանիւ , թէ մեք որ կենդանիքս եմք մինչև գալուստն տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն ։ Զի ինքն տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի , և ի փող աստուծոյ իջանէ յերկնից · և մեռեալք ի քրիստոս՝ յարիցեն յառաջագոյն , Ապա և մեք որ կենդան-

ած ինայեալ էցեմք, նոքօք հանդերձ յաւիտականիցս ամպովք ընդ առաջ ն յօդս. և այնպէս յամ ժամ ընդ տն լինիցիմք: Այսուհետև մխիթարեցէք զիմեանս բանիւքս այսոքիւք:

Աքսիա. Ալէլուիա:

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Սբոյ Աւետարանիս Ցն ի Ք՝ որ ըստ Յովհաննու:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եսցի: Եթէ ոք զիս պաշտեսցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

Քարոզ ։

Վ՚ասն հրաժարելոյ անձանց իններեցելոց՝ զտէր աղաչեսցուք ։
Վ՚ասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց սորա և մեր՝ զտէր ։
Վ՚ասն առաջնորդելոյ սմա յանբաւութեր օձևանս , զոր պատրաստեաց որդին միածին՚ի տան հօր իւրոյ՝ զտէր ։
Վ՚ասն լսելոյ սմա զձայն կենարար փրկչին , և վերանալ ընդ առաջ փրկչին՝ զտէր ։
Վ՚ասն արժանի լինելոյ սմա դասիլ յաջակողմեան դասուն զտէր աղաչեսս ։
Եւ ևս միա ։ Օ՚անձինս ։ Ողորմեայ ։

Աղօթք ։

Տէր ողորմեա՝ տէր ողորմեա՝ տէր ողորմեա ։

Ող թագաւորդ ես յաւիտենից քրիստոս աստուած և եւս , և առնես զամենայն ինչ ողորմութեամբ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք . որ զամենայն ինչ՚ի բարի մատակարարես ցեր որդւոյ մարդկան ։ Ընկալ զհոգի ծառայիս քո այսորիկ , և հանգո ընդ

սուրբս քո՝ որք ՚ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ։ Ընկալ զսա ընդ արդարս քո, և ՚ի խորանս սիրոցդ քոյ բնակեցո զսա։ Եւ եթէ մարդկօրէն ինչ յանցեալ էիցէ սորա՝ բանիւ, կամ գործով, կամ մտածութեամբ, դու որպէս մարդասէր և բարերար աստուած՝ թողութիւն շնորհեա սմա. և զմեր ամենեցուն ելս յերկրէ աստի՝ խաղաղութիւն յայտնեա, լինել ժառանգորդ երկնից արքայութեդ։ Ո՛վ յամենայնի փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և սուրբ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Գթած և մարդասէր աստուած՝ հանգո զհոգի ծառայիս քո այսորիկ յօթեւանս արդարոց. և զմեր հաւատս քրիստոնէութեան առանց մեղաց պարգեւեա կատարել, հաստատելով զմեզ յամենայն գործս բարիս, շնորհօք և մարդասիրութեամբ սեաւանդ մերոյ և փրկչիդ Յիսուսի քրիստոսի։ Ընդ որում հօր և սուրբ հոգւոյդ։

Հոգւոյն հան։ Ա՛ն հան։ Քե՛ որդի։ Հայր մեր սր։

Տանին ՚ի գերեզման, ասելով, Տեսեալ զգ
քեզ մահու: Նա ասացի, ինչ ծերչեանն
՚ի գերեզման, հանգիստ առնեն և ասեն:

Ալէլուիա. Ալէլուիա:

Օ՜ճանապարհս իմ ուղիղ արա լինձ ըստ
բանի քումմ. և մի տիրեսցեն լինձ ա-
մենայն մեղք:

Սբթոյ աւետարանիս ՅՒ ԿԻ՝ որ ըստ Մատթէոսի:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ
Յիսուս՝ և ասէ. գոհանամ զքեզն հայր՝
տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր
զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց, և յայտ-
նեցեր տղայոց. այո հայր. զի այսպէս
հաճոյ եղև առաջի քո: Ամենայն ինչ
տուաւ լինձ ՚ի հօրէ իմմէ: Եւ ոչ ոք
ճանաչէ զորդի եթէ ոչ հայր. և ոչ ըզ
հայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ում
որդին կամիցի յայտնել: Եկայք առ-
ես ամենայն վաստակեալք և բեռնաւորք,
և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ
իմ՚ի ձեզ, և ուսարուք յինէն զի հեզ

եմ և խոնարհ սրտիւ . և գտջիք հան-
գիստ անձանց ձերոց . զի լուծ իմ
քաղցր է . և բեռն իմ փոքրագի ։

Հոգւոյն հանգուցելոց ։ Քրիստոս որդի ։

Ս– երևելով ի գերեզմանն ասէն ։

Շարական ։

Անբաժանելի ես ի դուռըն գերեզմանի դձ
նի , եւ եհաս ինձ ժամանակ մըտանելոյ ի յարգանդ երկրի յորմէ հանգ
ստեղծեալ եմք ամենեքեան . բժիշկ
լմնաստուն և ճարտարապետ , բնաժըժ-
կեա զհնգուտս իմ զհիւանդութիւն .
ապարող և յոյժ փրկութեան մերոյ ։
Նշխոյ ձեռըն քո պահպան անձին
իմոյ , եւ այլ քո բարի առաջնորդեա-
ցէ ինձ ի յարտարութիւն . բժիշկ ։
Ընդլսեսցես առ իս ընդհուպ մարդա-
սիրութեանդ . եւ յայցելութիւդ կենաց
լըցեսցես զհեզս անձին իմոյ . բժիշկ ։

կեցցէ՞ ա՛նձն իմ ո՛րհնեսցէ ընդքեզ զամենայն ա՛ւուրըս կենաց իմոց. և առ քեզ ա՛պաւէ՛ն նիմ հովիւ՝ և բանալ ո՛ր հո՛տի, դարձո՛ զմո՛ւրեամբս ի հօտ քո՛ քրիստոս. բըժիշկ։

Ա՛պաւաճանի, Իսալէ, Փառ։

Ե՛ւ հասեալ ի գերեզմանն ասէն։

Դարձ անձն իմ ի հանգի՛ստ քո՛ զի տէր կոչեաց զքեզ։

Սիրեցի՛ զի լսէցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զուշկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի՛ առ նա։

Շրջեցա՛ն զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտա՛ն զիս։

Ո՛ղորմեղութի՛ւն և ճշմարտութիւն գտի, և զանուն տեառն կարդացի։

Ո՛ տէր փրկեա զանձն իմ. ողորմած ա՛ծ մեր, ողորմի՛ և պահէ զտըղայս տէր։

Ն՛ա խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց զնա ։
Դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո՛, զի
տէր կոչեաց զքե՛զ ։

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց Ա· Թղթոյն ։

Ապա եթէ քրիստոս քարոզի թէ ՚ի մե-
ռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ո-
մանք ՚ի ձէնջ՝ եթէ յարուԹիւն մե-
ռելոց չէք · եթէ յարուԹիւն մեռելոց
չէք, ապա և քրիստոս չէ յարուցեալ ·
և եթէ քրիստոս չէոյ յարուցեալ, ըն-
դունայն է քարոզուԹիւնն մեր · ըն-
դունայն են և հաւատքն ձեր · և գը-
տանիցիմք սուտ վկայք աստուծոյ, զի
վկայեցաք զաստուծոյ՝ եթէ յարոյց զ-
քրիստոս · զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ
մեռեալք ոչ յառնիցեն ։ Իսկ եթէ մե-
ռեալք ոչ յառնեն, ապա և քրիստոս
չէ յարուցեալ · և եթէ քրիստոս չէոյ
յարուցեալ, ընդունայն են հաւատքն
ձեր · և տակաւին ՚ի նմին մեղս կայ-
ցէք ։ Իսկ արդ՝ որ ննջեցինն ՚ի քրիս-
տոս, կորեա՞ն արդեօք, եթէ այսու

կենօքս միայն յուսացեալ եմք ի քրիստոս, ապա ողորմելի եմք քան զամենայն մարդիկ: Այլ արդ՝ քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղն ննջեցելոց. քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց. որպէս ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և քրիստոսիւ ամենեքին կեն դանասցին, իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ՝ քրիստոս, և ապա քեանք ի գալստեան նորա. և ապա կատարած:

Ալէլուիա. Ալէլուիա:

Տէր լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի դարձուցաներ զերեսս քո յինէն:

Սրբոյ Աւետարանիս ՃԻ ԿԻ ով լսա Յովհաննու:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանան յաւիտենական. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս:

Ընդէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն աստուծոյ. և որք լսիցենն՝ կեցցեն։ Ո՛ւր որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եհա և որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ Եւ իշխանութիւն եհա նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է, ընդ այն զի՞ զարմանայք։ Ո՛ւր եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքեան որ ի գերեզմանս կայցեն, լսիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարուցիւն կենաց, և որոց զչար արարեալ իցէ՝ ի յարուցիւն դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձինէ առնել և ոչ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Քարոզ։

Վա՛յ ուղղելոյ զգնացս մեր (Երէ. 81)։

Աղօթք ։

Ամենաճշմարիտ հոգւոց և ստեղծիչ մարմնոց, որ ես կենդանեաց՝ և յարութիւն մեռելոց. որ լուիչ ես բարեաց՝ և ներողութիւն ամենայն վիրաւորելոց, և հանգուցիչ՝ հաւատով՝ ի քեզ ննջեցելոց ։ Որ ժողովեցեր ճշմարտութեամբ քով՝ ի կոչումն հաւատոց, և խոստացար հաւատացելոց քոց զհանգիստն յաւիտենական կենացն անվախճանից ։ Զան զի շնորհեցեր նախահօրն մերում զանմահական կեանս, և կացուցեր զնա՝ ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց, և զամենայն ինչ հնազանդ արարեր՝ ի ներքոյ ոտից նորա. և՝ ի ձեռն յանցանացն նորա կոչեցեր զնա յերկիր ուստի առաւ ։ Եւ դարձեալ խոստացար՝ ի ձեռն գալստեան միածնի քո յաշխարհս՝ անձառելի խոստմամբ՝ յարուցանել զմեռեալս, և ասել ամենակարող և հզօր բանիւ քով, եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ ։ Զան

գո տէր աստուած մեր՝ զհոգի ծառա-
յիս քո ըստ բանիդ այդորիկ . և գրեա
զսա ՚ի գիր հանգստեան փառաւոր ար-
քայութեան քո . և պարգևեա սմա
մանն և բաժին ՚ի խորանդ յաւիտե-
նականան : Այլ եթէ մարդկօրէն մե-
ղուցեալ ինչ ելցէ սորա ՚ի յանցանս աշ-
խարհիս այսորիկ , անվախճան քո բա-
նիւդ թողութիւն շնորհեա սմա . և
յամենայն մեղաց և ՚ի անօտի խաբե-
ութեանց զհոգի սորա աղաւեա . և
զամենայն ժողովուրդս քո օրհնեա :
Օ՜ի ՚ի բերանոյ ամենայն արարածոց
քոց փառաւորի ամենասուրբ տէրու-
թիւն քո , այժմ և միշտ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Ընդ՝ խնդրեմք ՚ի քէն թագաւոր թա-
գաւորաց և տէր տերանց , յորժամ
գաս քրիստոս , և երևիս մեծութեամբ
քով . գունդք հրեշտակաց և զօրութիք
առաջի քո ընթանան : Գաս հիացմամբ
և ձայնիւ փողոյ , զարթուցանես զնըն-

ջեցեալն , յարուցանես զմեռեալս , կանգնես զգլորեալս , բժշկես զվիրաւորեալս . գաս բոցով, և դառիս անշէջ հրով : Ծագիս ի վերուստ յարևելից կոչմանէ , և սուրբ խաչն առաջի քո . յայտնեալ երևիս յերկրի , և հաստուցանես իւրաքանչիւր ումեք : Նահնին դպրութիւնք . կարգին աթոռք . լինի ահեղ դատաստան . դնին կշիռք արդարութեան , և ընդունի իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց . վկայքն պսակին ըստ ճգնութեանցն , և մեղաւորքն տանջին ըստ յանցանացն : Դատես զխաչեցողն . տանջես զմեղաւորն . պսակին ուրացողքն : Յայնժամ յայտնին կառք հրեղէնք յերկնից . լինի ձայն փողոյ մեծի . ընթանան զօրութիւնք . սարսափին հրեշտակք . փայլատակի հուր . խաւարի արեգակն , և լուսին . թօթափին աստեղք . խառնակին ամպք . ցամաքի ծով . հիանան ապարանջք ամենայն : Ուրախանան բարիքն , և ողբան չարքն . բերկրին երկիր-

պագուքն քրիստոսի, և հաւաչեն ու-
րացողքն: Պասկքն յայտնին, և կու-
անքն խնդան. առագաստն զարդարի
և իմաստուն կուսանքն պատրաստք մը-
տանեն ճրագունք վառեալք: Իսկ յի-
մար կուսանքն դատարկացեալք, ճը-
րագք անցեալք, գլուխք խոնարհեալք,
սիրտք տրտմեալք, ոգիք լքեալք և
տարակուսեալք հալածին 'ի ձայնէ Թա-
գաւորին որ ասէ, Թէ ոչ գիտեմ ըզ
ձեզ: Խնդան աջակողմեանքն, և լան
ձախակողմեանքն. խայտան օդիքն, և
մերժին այծիքն յերեսաց տեառն. լցան
պայծառանայ, և խաւարն նուաղի.
դժոխքն աղաղակէ, և սատանայ յա-
մօթ լինի. ցանկութիւնն անցանէ, և
արդն ոչ մեռանի: Յայնժամ բարեբար
և մարդասէր տէր՝ յորժամ այս ամե-
նայն կարգի 'ի քումմէ մեծութենէդ,
յիշեա զհոգի ծառայիս քո այսորիկ,
և դասաւորեալ պայծառացո ընդ նբս
քո յարքայութեանդ երկնից: Եւ զա-
մենայն զոր լինչ մեղուցեալ ևս որա՝

բանիւ, կամ գործով, կամ մտածութ, զկամայ և զակամայ, զդիտութեան և զանդիտութեան, ներեա և թող սմա քոյով մարդասիրութեամբդ, վասն զի ոմն է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց. և արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից որ ոչ անցանէ: Եւ քեզ վայե:

Ապա չահանայն ափ ի հող առնու՝ ի ձեռն խաչակնիէ, և ասէ:

Օրհնեա ✠ տէր՝ ողորմութեամբ քով զհողս ծառայիս քո այսորիկ, և յիշեա զսա. զի հող էր՝ և անդրէն ի հող դարձաւ ըստ հրամանի քում:

Ապա ձգէ զհողն ի գերեզմանն, և ասէ:

Օրհնութիւնն աստուածային ելցէ ի հող մահու սորին, և բուսուսցէ յօրն վերջին, անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Ընդ ա՛յսոսիկ:

Աղաչեցայ ես ի դուռնըն գերեզմանի:

Ապա ելոյանէն զննչեցեալն ի գերեզմանն։

Ալելուիա. Ալելուիա։

Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։

Ի վայրի դալարուղ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առիս, և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերացս մահու, ոչ երկեայց ի չարէ, զի դու տէր ընդիս ես։

Ցուպ քո և գաւազան նոքա մխիթարեացեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Ողորմութիւն քո տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց. բնակիլ ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս։

Մաղթանք։

Տէր ուղղեա զքնացս մեր ՚ի ճանա-
պարհս խաղաղութեան։ Տէր ուղղեա և ա-
ռաջնորդեա հոգւոյ մերոյ և ամենայն
հաւատացելոց գնալ յարդարութեամբ ճա-
նապարհն և ՚ի կեանն յաւիտենից։

Կարոզ։

Ընդհանուր զամենակալն աստուած՝ զի
յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծա-
ռայից իւրոց ՚ի բարի և ՚ի խաղաղու-
թիւն։ Ամենակալ տէր ընկալ մեր կեցո։

Աղօթք։

Ընդհանուր կենաց և պարգևիչ խաղա-
ղութեան քրիստոս աստուած մեր,
առաջնորդեա մեզ գնալ ՚ի ճանապարհս
քո արդարութեամբ և խաղաղութեամբ ժամանել
՚ի նաւահանգիստն կենաց և փրկութեանց
հնարաւոր ողորմութեան քո. զի դու ես
օգնական և փրկիչ մեր. և քեզ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որհնեալ ես տէր աստուած փրկիչ

մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբեք թողուս ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ: Ընդունեմք և խնդրեմք ի քէն տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց՝ քո յին վերակացութեամբդ պահելով ի խաղաղութեան. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութեամբ և խընդութեամբ հասանել յիւրաքանչիւր բնակութիւնս ի քրիստոս յիսուս ի տէր մեր. որում վայելէ փառք:

Ն՚ը պարկեալ հող չգէ, և ասէ:

Հող օրհնութեան լինէ ի գերեզման սորին, և քուսուսցէ յօրն վերջին:

Ապա ծածկեն հողով, և ասեն աղօթելով:

Աղերսանաց աստուածդ քաւեա զանօրէնութիւնս իմ:

Հաւատ ունելով հոգի խաղաղութեան, երթ առ արարիչդն հայցելով, աստուածդ լիմ համբուր:

նա ասացի՛ ի զարմանալ իմում, թէ
ամենայն մարդ սուտ է։
Յաւատ ունելով հոգի՛ խաղաղու-
թեան, երթ առ արարիչըն հայցելով,
աստուա՛ծ իմ հանգո՛։
Օ՛ճանապարհս իմ ուղի՛ղ արա ինձ
ըստ բանի՛ քո՛ւմ. և մի՛ տիրեսցեն
ինձ ամենայն մե՛ղք։
Յաւատ ունելով հոգի՛ խաղաղու-
թեան, երթ առ արարիչըն հայցելով,
աստուա՛ծ իմ հանգո՛։ Ո՛վ եռո՛ւր հո-
գի՛ յիսո՛ւս, ըզսա պահեա՛ զի՛ քոյ խա-
չի՛ և յարուԹեա՛նըդ հա՛ւատացո՛ Թա-
գաւո՛ր երկնաւո՛ր, հանգո՛ զհո՛գի սո-
րա յիշելո՛վ սո՛րա զհաւատս։ Ի՛ քաղա՛ք
տեառըն զօրուԹեանց և ի՛ քաղա՛ք
Թագաւո՛րին մեծի՛. ուր ժողովք սըր-
բո՛ցն են ի՛ խա՛ղաղուԹեան, գնա՛ցես
յուսո՛վ և հանգի՛ցես ընդ հրեշտա՛-

կայ դաշտս, տեսանել ըզլոյսըն յա-
ւիտենից։

Աղերսեցաւ անձն ի հոգի յորմէ ստեղ-
ծեր զնա, և հոգւոյս մնկնեալ չինէր. տէր զապաւինեալս չիշեաց ի քոմ գալըստեանն։ Ստեղծուած եմ անա-
րատ ձեռաց քոց մի անտես առներ, այլ խնայեա չիս յահագին աւուրն. տէր։ Յորժամ գան փառք հօր դա-
տել ըզտիեզերս ամենայն, և հարկանիք վիշտ հընչմանն յարուեստեան տէր։

Փառք հօր և որդւոյ և։

Ընդ քրիստոսի պահելով յաղթող լե-
ցուք փորձողին. և ընդ հրեշտակս եր-
գեցուք, փառք ի բարձունս աստու։
Փառք ի բարձունս աստուծոյ, և յեր։

Փառք՝ պատիւ և երկրպա։

Ներին զնա ի գթի ներքնումն ի խաչ
սարի և ի ստուերս մահու։

Տէր աստուածդ վրկութեան իմոյ՝ ի տուէ կարդացեալ և գիշերի առաջի քոյ։

Քարոզ։

Վասն՝ ի վերուստ պահպանութեան՝ ի տեառնէ անձանց մերոց, և հաճոյական աղօթս առնելոյ՝ զտէր։

Վասն ընդունելոյ տեառն աստուածոյ զՆոգի հանգուցելոյս՝ ի հանգստեան արդարոց՝ զտէր։

Վասն Թողլոյ սմա զյանցանս զկամայ և զակամայ՝ զտէր։

Վասն արժանի լինելոյ սմա՝ խաղաղութեամբ և մեծաւ յուսով սպասել տեառնագալուստ փողոյն՝ զտէր աղա։

Վասն քաղցրաբարբառ լսելոյ սմա զահաւոր ձայնն որ ասէ, եթէ արիք՝ ահա գայ քրիստոս՝ զտէր։

Վասն համարձակապէս տեսանելոյ սմա զանապական և զանստուեր լոյսն՝ ըզ։

Վասն աչալրջութեամբ և առանց ամօթոյ կալ սմա առաջի արդար դատաւորին քրիստոսի՝ զտէր։

Վ֊ան տալոյ սմա տեղի ՚ի հայրական
խնամոյն յաջակողմեան դասուն՝ ըզ։
Վ֊ան լսելոյ սմա զերանաւէտ զձայնն,
եթէ եկայք օրհնեալք հօր իմոյ ՚ի տե֊
ղի հանգստեան՝ զտէր աղա։
Վ֊ան պարգևելոյ սմա զերկնային պսակն
կենաց և անմահութեան՝ զտէր։
Վ֊ան հրեշտակի խաղաղութեան ա֊
ւանդելոյ զհոգի սորա ՚ի տեղի արդա֊
րոցն՝ զտէր աղաչեսցուք։
Վ֊ան առաքման շնորհաց մեծի և ա֊
մենազօր աջոյն քրիստոսի ՚ի հողանիւ֊
թեայ յարկ տապանի սորա՝ զտէր։
Վ֊ան կնքելոյ զգերեզմանս զայս նշա֊
նաւ խաչին իւրոյ մինչև ՚ի գալուստն
իւր սուրբ՝ զտէր։
Վ֊ան առաքելոյ զշնորհս հոգւոյն սրբոյ
՚ի սիրտ լսողաց հաւատացելոյ անուան
իւրոյ՝ զտէր։
Վ֊ան մխիթարելոյ զվշտացնեալս սրբո֊
տիւք ՚ի ձեռն ողորմութեանց իւրոյ՝ զտէր։
Վ֊ան պահելոյ զմնացորդս սորա յա֊
մենայն հնարից սատանայի՝ զտէր։

վ֊ան հոգւոցն հանգուցելոց որք ճըշմարիտ և ուղիղ հաւա։

Աղօթք։

Օրհնեալ ես տէր աստուած մեր, որ ստեղծեր զմարդն հող յերկրէ, և փըչեցեր յերեսս նորա շունչ կենդանի, լինելով նմա կամօք քո ՚ի հոգի կենդանարար. և եդեր զնա ՚ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել։ Եւ յանցանել նորա զպատուիրանաւ քով՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան յերկիր ուստի առաւ, մատնելով զնա տաժանաւոր և ախտալից կենցաղոյս այսորիկ. և եդեր սահման ասելով, հող էիր՝ և ՚ի հող դարձցիս։

Եւ այժմ տէր բարերար՝ ընկալ զծառայս քո զայս, որ ելից զժամանակ պանդխտութեան իւրոյ ՚ի վերայ երկրի. և ըստ հրամանի քում եմուտ ՚ի յարգանդ երկրի, յորմէ ծնանելոց է վերստին ՚ի կեանս անմահականս։ Եւ այժմ տէր աստուած մեր՝ ձգեա ըզ

պահպանողական աղ. քո, և կնքեա ըզ
տեզն հանգատեան սորա. զի եղիցին
՚ի զգուշութեան և ՚ի պահպանութե
ոսկերք սորա իբրև զգանձս պատուա
կանս առաջի աստուածոյ քո.
և մի իշխեսցէ մերձենալ ՚ի սա թշնա
մին երևելի կամ աներևոյթ: Եւ զհոգի
սորա զոր աւանդեցեր ՚ի ձեռն հրեշ
տակի քո՝ մերձեցո առ սուրբ փառս ա
թոռոյ քո, ընդ այլ պայծառացեալ
հոգիսն ցնծալ պարել և զուարճա
նալ շուրջ զարքունական աթոռովդ
մինչև յօր կրկնակի կենսաբերը գալստ
եան քո յերկինից՝ փառօք հօր, և ա
մենայն հրեշտակօք սրբովք: Յորժամ
գաս ՚ի նորոգել և կանգնել զանկեալ
և զկործանեալ պատկերս քո, այցե
լութեամբ այց սրա տէր ծառա
յիս քո այսօրիկ. և հան սմա մահն և
բաժին յարքայութեանդ երկնից ընդ
այնոսիկ՝ որք սիրեցին զքեզ յամենայն
սրտէ, և յամենայն զօրութենէ իւր
եանց: Ո՛վ յամենայնի մեծացեալ և

փառաւորեալ եղիցիս տէր մեր յիսուս քրիստոս՝ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ այժմ և միշտ և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ, կենդանի և կենդանարար, կերպարան և կնիք հօր. որ վասն նախաստեղծին քո ադամայ անկելոյն յանցանօք՝ ի փառակեն ցաղ դրախտէն, կամաւ հօր և հաճութեամբ սուրբ հոգւոյն խոնարհեցար յերկինից՝ և իջեր յերկիր, և առեր մարմին՝ ի սրբոյ կուսէն. խաչիւ և անապական արեամբդ քով զհնացեալս մեղօք վերստին նորոգեցեր. որպէս ի սուեղծուածն առաջին որ առանց ապականութեան էր, ի հանդերձեալ յարութեանն մեռելոց՝ եւ լեսոյն փառօք : Ո՛ի դու ինքնին տէր վասն մերոյ փրկութեան իջեր ի գերեզման. աւերեցեր զժոխս, ողորմեալ արդելեալ հոգւոյն ի նմա. լուծեր

զերկուսնա մահու թաղմամբ քով. և
աստուածասքանչ յարութեամբ քով
ազատութիւն և նորոգութիւն շնոր-
հեցեր յուսացելոցս ի քեզ։
Եւ այժմ դու նոյն ինքն տէր աստուած
մեր՝ գթա ի մեղուցեալ ծառայս քո,
որ վախճանեաց զերկրաւոր զկեանս
իւր։ Եւ բարեխօսութեամբ սուրբ
ածածնիդ՝ և ամենայն սրբոց քոց որք
յաւիտենից հաճոյ եղեն քեզ, ներեա
քաւեա և թող զմեղս իւր զոր գործ-
եաց՝ զկամայ և զակամայ. քանզի ոչ
արդարանայ առաջի քո ամ կենդանի։
Որհնեա տէր և զհոգանիւթեայ յարկ
տապանի սորա, և կնքեա անարատ ա-
ջովդ, և պատուական խաչիւդ, յո-
րոմ հեղեր զփրկական արիւնդ ի թո-
ղութիւն մեղաց մերոց։ Որհնեա տէր
և զմնացորդս սորա. սփոփեա և մխի-
թարեա և փարատեցո ի սրտից սոցա
զսուգ և զտրտմութիւն. և խաղաղա-
կան կենօք աճեցո և զարդացո և միա-
ցո ի սէր սրբութեան քո։ Ընդ նոսին՝

աշխատասրացս և համօրէն զհետ ե-
կելոցս ողորմեա տէր, և տուր զբարի
պարգևաց քոց զհատուցումն: Ա-
լածեա և հեռացո 'ի սոցանէ զխորա-
մանկութիւն սատանայի, և զգաստու-
թեամբ առաջնորդեա 'ի շաւիղս ար-
դարութեան քո, հասանիլ 'ի կոչումն
փողագոչ ձայնի հրեշտակապետին 'ի
յաւիտենական հանգիստն: Ո՛ արթուց-
եալք 'ի յայս մահահանգիստ քնոյս՝
և սրաթռիչ լուսեղէն ամպովք ընդ ա-
ռաջ ելանել քոց փառաց, և արժանի
լինելոց բարեբանող փառաւորութեամբ
օրհնել զքեզ քրիստոս աստուած մեր՝
ընդ հօր և սուրբ հոգւոյդ, այժմ և:

Փայլին արդարքն յարքայութե՞ և ճըգ-
նաւորքն 'ի հանգըստեանն. մարտիրոս-
քըն պըսակի՛ն և կուսանաց լապտերք
վառին. դա՞սեցո տէր ընդ նոսին ոըք
զքեզ աստուա՛ծ խոստովանին. ա՛ր-
դարութեամբ մի՛ դատեցի՛ն այլ գը-

թուլթեամբ քո քաւեիցին։ Կո՛ն ան
պատո՛ւմ խոնարհութեա՛մբդ որ թա-
ղեցար մե՛ռելութեամբ, ե՛ւ յարուցեր
յորդւո՛յ մարդկան ոքք հաւատով՝ ի
քեզ անկան. յա՛րո և զմե՛զ արդարու-
թեա՛մբ և զնընջեցեալսն ողո՛րմութիք.
զի կենդանեացըս բերանո՛վ տացին քեզ
փառս ընդ հօրդ հո՛գւո՛վդ։

Փա՛ռաց՝ ի փառըս բարձրա՛նան, աջա-
կողմեա՛նքըն վերանան, յորժամ լսեն
ղերա՛նական ձայն օրհնո՛ւթեան՝ ի քո՛ն
կոչման. նընջեցեալքս մեր լսեցո զաս-
տուածայինն բարբառըդ քո. դա՛սաւոր-
եա ըզսա՛ վերնոցն երգե՛լ քեզ ըզփառս
ընդ զքո՛արքնոցն։ Կա՛հանայք և ժո-
ղովո՛ւրդք հայցե՛մք՝ ի քո՛ն տէր բարե-
գութ, ընդ նընջեցեա՛լսըն հաւատով
ընկալ ըզմեզ նովքի՛ն յուսով, յե՛րու-
սաղէ՛մ քաղաքդ վերին յորում արդա՛ր-

քըն ժողովին, փառս վերըդել միշտ
ընդ նոսին երրորդութեանդ երրեակ
անձին։

Ի վերինն ըրուսաղէմ՝ ի բնակա-
բանըս հրեշտակաց, ուր ենովք և
եղիաւ ա կան ծերացեալ աղաւնան
կերպ, ի դրախտին եդեմական պայ-
ծառացեալ արժանապէս. ողոր-
մած տէր ողորմեաւ հոգւոց։

Հոգւոցն հան։ Վան հան։ Քրիստոս որդի։

Եւ ևս խաղաղութեան պէտք։ Օրհնութիւն և։

Օրհնեցին ✠ և կնքեալ պահեցին գե-
րեզման և ոսկերըք ծառայիս աստու-
ծոյ, նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ
սուրբ աւետարանիս, յանուն հօր և
որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Եւ ևս խաղաղութեան պէտք։ Օրհնութիւն և։

Օրհնեցին ✠ և կնքեալ պահեցին շի-
րիմ և ոսկերըք ծառայիս։

եւ ևս խաղաղութեան զտէր : Օրհնութիւն և :

Օրհնեցի * և կնքեալ պահեցի զամ
բարան և ոսկերք ծառայիս :
Ընշարժ եղիցի կնիք * տէրութեան
՚ի վերայ գերեզմանի ծառայիս աստու-
ծոյ՝ մինչև ՚ի գալուստն քրիստոսի . որ
եկեալ միւսանգամ նորոգեսցէ փա-
ռօք ՚ի փառս հօր և հոգւոյն սրբոյ ,
ամէն :

Հայր մեր որ յերկինս :

Ընդ՝ ըն երևան ՚ի փոս ննջեցելոյն ասէն :

Աւետիս . աւետիս :

Այս ամենայն եկն ՚ի վերայ մեր , և
մեք զքեզ ոչ մոռացաք , և ոչ ստեցաք
ուխտի քումմ , և ոչ դարձաք յետս
սրտիւք մերովք :
Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանա-
պարհաց քոց , խոնարհ արարեր զմեզ
՚ի տեղի չարչարանաց , և ծածկեցին
զմեզ ստուերք մահու :
Թէ մոռացեալ էիմ մեր զանուն այ

մերոյ, կամ ձգեաւլ իցէ զձեռս մեր առ աստուածս օտարս։

Սակայն ձայ խնդրէ զայս. զի նա քընէ նէ զգաղտնիս սրտից մերոց։

Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի զենուճն։

Յարիր, ընդէր ննջես տէր. արի և մի մերժեր զմեզ իսպառ։

Ընդէ դարձուցանես զերեսս քո ի մէնջ, մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր։

Խոնարհ եղեն մինչև ի հող անձինք մեր. և յերկիր կցեցան մէջք մեր։

Արի տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ, վասն անուան քո։

Փառք հօր և որդւոյ և։

Քարող։

Խնդրեսցուք հաւատով ի հօրէ վասն քաւութեան մեղաց, և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ ի վշտաց և ի նեղութեանց. խլանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն մերոյ ամենակալին. կեցո և ողորմեա։

Աղօթք ։

Հայր գթութեանց՝ և աստուած ամ
ենայն մխիթարութեան, որ մխիթարես զմեզ
յամենայն նեղութիւնս մեր. հարկա
նես՝ և դու բժշկես. և ոչ երբէք թո
ղուս ի ձեռանէ քումմէ զստեղծուա
ծըս քո ։ Տուր սոցա տէր հոգի զգաս
տութեան, հոգի մխիթարութեան.
քև մխիթարեա զվշտագնեալս սրտիւք
և բժշկեա զվէրս տրտմութեան սոցա ։
Օ՛ի հաստատուն յուսով փառաց քոց
առողջացեալք ի սգոյ տրտմութեան
իւրեանց, փառաւորեսցեն զամենա
մեծ տէրութիւնդ քո, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Հոգւոյն հանգուցելոց ։ Վասն հանգուցեալ ։

Քրիստոս որդի աստուծոյ անոխակալ և ։

Հայր մեր որ յերկ ։

Կ Ա Ն Ո Ն

ՄԵԾԻ ԱՅԳՈՒՑ ԿԱՏԱՐԵԼՈՅ

Պատ՝ Ի հր—ատ—մ աս—ու—րն Ի գեղեցմանն և
ասէն զամբիծան։

Եւ ևս խաղաղութեան։ Օրհնութիւն և։

Բահանայն խոնհ արկանէ և ասէ։

Ընտրեան։

Գկ
զաղա

Յիսո՛ւս միածինն անմահութեանց
պարգեւատուն երեւեցաւ մեզ՝ ի՞նչ
խափանեաց զքօրհնի՞ մահու։ Ընդես
մա՛ մեք արտասուաց մարիամու և մար-
թայի անկեա՞լ ևս ոտըն տեա՛ւ ի՞ն,
խընդրեի՛ն զնորոգումն եղբօրն։ Բա-
նի՛ւ բանն ա՛ծ կենագործեաց ըզդա-
զարոս Ի թաղմանէ՛ւ ի՞, և եկեալ
արտաքս ա՛նապական ն։

Թաղ Յովհ՛ւ քեզ հաւատացեալ սիրտ տոսի աղերսեր, ընդհեղ զտէրնէն եանդ մարմին։ Օ՛նապակա՛ն զանտուաձծացեալ մարմինդ պատեա՛լ սուրբ կըտաւովք, եւ եդ ի գերեզմանի։ Ո՛ր արարիդ ես ահրաձոց հանգուցեալդ ի քերովբէս, վիմա՛ւ կընքեցա՛ր յերկրի։

Յաբ Յորժամ եկին ի գերեզմանն բո՛ւղա բեր կանանքն, և բերին զխունկն ի խընկել զնապակա՛ն մարմինն։ Յայն ժամ հրեշտակն աւետարաներ յա՛ր եաւ քրիստոս. պատմեցէք աշակերտացն զյարութի՛ւնն տեառն։ Ի՛ակ նոցա զարհա՛ւրեալ վասն ահագին տեսլեանն. պա՛տմէին աշակերտացն զհա՛գին տեսիլն։

Հոգւոյ գալստեան, Հանգստեան, Պատուա ծածին, Հայր, Փառք։

Ալէլուիա · Ալէլուիա :

Ի խորոց կարդացի առ քեզ տէր տէր ,
լուր ձայնի իմում :
Եղիցին ականջք քո ի լսել զձայն ա-
ղօթից իմոց :

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց Ա . Թղթոյն է :

Ա՛յլ մեք պարտիմք գոհանալ զաստու-
ծոյ յամենայն ժամ՝ վասն ձեր եղբարք
սիրեցեալք ի տեառնէ . զի ընտրեաց
զմեզ աստուած ի սկզբանէ ի փրկու-
թիւն՝ սրբութեամբ հոգւոյն , և հա-
ւատովքն ճշմարտութեան . յոր և կոչ-
եաց զձեզ աւետարանաւն մերով ի
փրկութիւն փառացն տեառն մերոյ
յիսուսի քրիստոսի : Ա՛յսուհետև եղ-
բարք՝ հաստատուն կացէք՝ և պինդ
կալարուք զաւանդութիւնն՝ զոր ու-
սարուք , եթէ բանիւ , և եթէ թղթով
մերով : Ա՛յլ ինքն տէր մեր յիսուս քրիս-
տոս , և աստուած հայր մեր , որ սիր-
եացն զմեզ՝ և ետ մեզ մխիթարու-
թիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց

շնորհօք, միսիթարեսցէ զսիրտս ձեր, և հաստատեսցէ յամենայն բանս և՚ի գործս բարուքեան։

Ալէլուիա. Ալէլուիա։

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Սրբոյ Աւետարանիս ցՂ՚ի որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ո՛գոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ եւ հոգովք աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ՚ի վերայ ձեր օրն այն. զի իբրև ընդոգայթ հասանիցէ՚ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս արարեք, զի արժանի լինիջիք զերծանիլ յայնմ յամենայնէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ։ Նա՚ի տուէ՚ի տաճարին ուսուցանէր, և զիշերս

ելեալ ապանէր ՚ի լերինն՝ որ կոչիւր ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առնա ՚ի տաճարն լսել ՚ի նմանէ։

Փարոզ։

Վասն ՚ի վերուստ խաղա։ (Եբ. 105։)

Աղօթք։

Տէր Յիսուս Քրիստոս, որ յայց ելեր, և արդարութեամբ քով փրկեցեր զմեզ ՚ի մեքենայից բանսարկուին. զի նախանձեցար և եհան զմեզ պատրաստ ՚ի յաւէժական կենացն, արտասահմանելով զմեզ ՚ի կորուստ և յապականութիւն։ Այլ դու բարերար և մարդասէր աստուած՝ ոչ թողեր զնորա դառնութիւն թունից ՚ի մեզ յաբակայ. վասն որոյ զմահ կոչեցեր և հեղեր ՚ի վերայ ամենայն արարածոց քոց, զի մի անմահ ճնասցէ չարութիւն պատահեալ. այլ բառնալով զմեզ ՚ի կենացս յայսցանէ՝ և հաստանելով ՚ի

մեղաց, եղև փրկութիւն՝ բարեբա-
րիդ պատուհասն։ Իսկ ՚ի վախճան ա-
ւուրցս այսոցիկ առաքեցեր զորդիդ-
քո սիրելի ՚ի կերպարանս մահու մե-
ղաց. որ դատապարտեաց զմեղս մարմ-
նով իւրով և կամաւոր խաչելութեն
իւրով, խորտակեաց զզօրութիւն մըղ-
նամանն. եղև առաջին պտուղ ննջե-
ցելոց, և աստուածահրաշ յարութեն
իւրով հրաւիրեաց զմեզ յիւր անմա-
հութիւնն։ Որ հաւատացեալ ծա-
ռայս քո այս՝ մկրտեցաւ ՚ի մահ քրիս-
տոսի քո. և ըզեալ այժմ զժամանակ
պանդխտութեան կենցաղավարութե
իւրոյ, փոխեցաւ ՚ի կէտ սահմանա-
դրութեան քո։ Վասն որոյ աղաչեմք
զքեզ հայր սուրբ՝ միջնորդութեամբ
մարմնոյ և արեան միածնի որդւոյ քո՝
և խոնարհութեան. Թող զպարտիս
ստրա զկամայ և զակամայ, զոր վերա-
ւորեաց անմարմին թշնամին պատրա-
նօք խաբէութե իւրոյ. զի դու միայն
ես սուրբ և բարեբար տէր, որ յան-

գոյութենէ ՚ի գոյութիւն ածեր զամ։ Եւ այժմ զվերս սորա բժշկեա, և խաղաղութեամբ անցո զսա ընդ խաւարային իշխանութիւնն, զի մի զչարութիւն իւրեանց գտցեն ՚ի ծառայսդ։ Ա՛յլ ընկեա տէր զձեռագիրս ներգործութեանց նոցա՝ զոր ՚ի սմա սերմանեցին, և տուր սմա ճանապարհ քարի։ Բացակայ եղիցի ՚ի սմանէ հրեշտակն սուրն՝ որ պահէ զճանապարհ ծառոյն կենացդ, պատկառելով ՚ի փրկական նշանէ խաչին՝ որ զպտուղն կենացդ մեզ ընծայեցոյց առհաւատչեայ յաւիտենական կենացն և առաջնորդ։ Որ ապաւինեալ ծառայս քո՝ սովաւ հասցէ ՚ի պահեստ՝ ուր սուրբք ամենայն հաւաքեալ ապաւէն մեծի հարսանեացդ, յերևիլ մեծիդ աստուծոյ՝ և փրկչիդ Յիսուսի քրիստոսի։ Ի ձայն փողոյ մեծի՝ յորժամ սասանին տարրեղէն արարածք. գալարին երկինք. նահմանան լուսաւորք. Թօթափին աստեղք. ցոլանան գետք հրեղէնք յերկնից, և

երևին բանակք անմահիցն։
Նա յակնարկել դատաւորիդ սասանի
երկիր. բանին կնքեալ գերեզմանք.
նորոգին հոգեացեալ մարմինք. և հոգիքն
ելացեալ իբրև զարծուխս՝ անդր հա-
սանեն, և զգենուն զանապական մար-
մինս՝ ի վայրկեան ժամանակի, և ժա-
մանեն յիւրաքանչիւր տեղիս։
Ընդհեմք զքեզ տէր՝ ժամանեցո զծա-
ռայս քո զայս յանապատ ուրախու-
թիւնն. և զամենեսեան զմեզ զհա-
ւատացեալսս ի քեզ՝ խաղաղութեամբ
պահեա, և մխիթարեա հոգւով և
մարմնով։ Օ՜ի արժանի լիցուք փառա-
ւորել զհայր և զորդի և զսուրբ հոգի,
այժմ և միշտ և յաւիտեանս։

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնեալ ես տէր աստուած մեր, որ
անդորրիչ եանեղելոց, և ընդունող հոգ-
ւոցն հանգուցելոց. ընկալ զհոգի ծա-
ռայիս քո ի բարի. և փարատեա ըզ
սուգ և զտրտմութիւն ի սիրելեաց

սորա, որք հետևեցան յուշարկել զսա ընդ երկայնաձիգ ճանապարհն. և մոռմնքին ՚ի վերայ անդառնալի ուղեգնացութեան սորա. և յաւէժ անջատելոյ ՚ի սմանէ առ ժամանակ մի՝ մինչև յիւրեանց յուղն անկանիլն յայսքմ բազմաժողով ծուլածուփ կենցաղոյս: Եւ զջախատուր արտասուս սոցա ընկալ քեզ ՚ի հաճոյս, և մի ՚ի զայրացուսցես. և մխիթարեալ սփոփեսցես զլքեալ սիրտս սոցա գալստեամբ քնարհի քո. և զոբացուսցես զտարակուսեալ հոգիս սոցա առաքմամբ հոգւոյդ սրբոյ: Եւ * կնքեալ պահեսցես զերեզմանս փակեալս յանուն քո՝ նշանաւ խաչիւ քոյ՝ մինչև յօր կրկնակի կենսաբեր գալստեանն քո: Ո՛վ քո ամենակարող զօրութեամբդ՝ եղեմնապատս և ձիւնաթափել պահին ամենայն արմատք, և սերմանիքն թափել յերկիր մեռանին, և ՚ի ժամանակս որոմընդոստ գարնանային յարութեանն զուարճացեալ պայծառանան. զորս կարդեցեր մեզ

’ի սպաս պիտոյից ։

Իսկ զբանական կենդանիքս պահեալ անկորուստ՝ խնամով աստուածաճուրթեան քո՝ յարուցանես զարձեալ ’ի հողոյ, և նորոգես ’ի պատկեր փառաց քոյ ։ Վասն որոյ խոնարհեցար ’ի հայրական ծոցոյ՝ լինել մեզ պատկերակից՝ հացդ անմահութեան. որ ոչ միայն ’ի քո մշանջենաւորն անմահութիւնդ, այլ հատոյ կենդանութեան զմահ յանձն առեր, զի բազում արասցես արդիւնս ։ Լքեր ’ի գերեզման, լուծեր զերկունս մահու, և զդժոխս աւերեցեր. որ յերկնաւորաց օրհնիս, և յերկրաւորաց, և ’ի սանդարամետականաց երկրպագիս. և լի է ամ երկիր փառօք քո ։ Ընդ՝ պահեա ամենազօր աչք՝ զհոգի սորա առ ամենայն ուրբս և սիրելիս անուանդ քո. և զգերեզման ծառայիս քո այսորիկ * կնքեալ պահեսցես. որ փառկես զհարս, և կնքես ամենազօր աջով քոյ ։ Որպէս երկինք՝ և երկնից երկինք՝ և երկիր ամենայն հաստատեալ կան

բանիւ քով. այսպէս անշարժ եղիցի
* կնիք տէրութեան քո ՚ի վերայ բնա-
կութեան սորա և պահարանի ծառա-
յիս: Եւ մի իշխեսցէ մերձենալ ՚ի սա
սիղծ և անմաքուր դևն, որպէս ՚ի մար-
մին և յոսկերս հեթանոսաց, որք ոչ
ուրեք զծնունդ սուրբ աւազանին, և
զկնիքն ահաւոր և պատկառելի ՚ի վե-
րայ գերեզմանացն: Այլ ծառայս քո
այս՝ որ հրաւիրեալ կոչեցաւ ՚ի քոյոց
հրաւիրողացդ ՚ի հանգիստ քո. որ հա-
ւատացեալ ՚ի քեզ ՚ի կենդանութեան
իւրում՝ թաղեցաւ ընդ քեզ մկրտու-
թեամբն ՚ի մահ, և սերմանեալ պա-
հեցաւ ՚ի քէն, և կոչեցեալ՝ յերկիր
դարձաւ:

Լուր աղաչանաց մերոց մարդասէր տէր՝
և՝ թող սմա զամենայն մեղս իւր զոր
մեղաւ. և քաւիչ լեր ամենայն սխա-
լանաց սորա, եթէ կամայ՝ և եթէ ա-
կամայ, եթէ բանիւ՝ և եթէ գործով,
եթէ խորհրդով՝ և եթէ մոռացու-
թեամբ. զամենայն կտակ չարին պա-

տառեա , և զձեռագիր մեղացն ջնջեա
տեր , և զաղտ հնուԹեանն լուա ։ Օ՛ի
անպատկառ լեցի ՚ի մեծի որոտընդոստ
առուըն վերջնում՛, ընդ համօրէն պահ-
պանելոցն ՚ի քէն՝ ընդ առաջ վերա-
նալ քեզ նորափեսուր արփիափայլ դի-
մօք՝ զարդարեալ ՚ի զարդ անկողոպտե-
լի . յորժամ գաս և երևիս աստուածդ
՚ի մէջ ձածայելոց՝ բաժանել և որոշել
ղղանազան պատիւս սիրելեաց քոց ։
Ես այժմ աղաչեմք զքեզ տէր՝ և զմեզ
զամենեսեան զհաւատացեալքս ՚ի քեզ
արժանի արա՝ զայս ահաւոր և զսուս-
կալի օրս տպաւորել հանապազ առաջի
աչաց մերոց . և յամենայն ղպալի և
՚ի պատրողական կենցաղավարուԹեանց
պատսպարեա զմիտս և զղեպայարանս
մեր ։ Պատկերացո տէր՝ զանհրաժեշտ
գալուստ քո առաջի աչաց մերոց . դու
տէր քաղցրուԹեամբդ քո քաւեա զմեզ
մեզ ՚ի մեղաց մերոց . ՚ի հանդերձեալ
գեհենէն փրկեա զմեզ զամենեսեան ,
և ժամանեցո արժանապէս հանդիսիլ

փառաց վեսպիզ ՚ի գալստեան քումմ՝ ամենապուծ տէր ։ Նորոգեա և զմարմին խոնարհութեան մերոյ ըստ անեղծ փառաց քոյ՝ Յիսուս քրիստոս աստուած մեր ։ Նա քեզ ընդ հօր՝ և սուրբ հոգւոյդ՝ վայելէ փառք՝ իշխան ։

Փառաց ՚ի փառս բարձրեանն, ալլա ։

Հոգւոյն հանգուցելոց ։ Վասն հանգուցեալ ։

Քրիստոս որպէս աստուծոյ անեխակալ և ։

Օրհնեսցի * և կնքեալ պահեսցի գեղեցեման և ոսկերք ծառայիս աստուծոյ, նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ սուրբ աւետարանիս, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն ։

Հայր մեր որ յերկինս ։

ԿԱՆՈՆ

ՄԵԾԻ ԵՕԹՆ ԱԻՈՒՐ

ԿԱՄ

ՓՈՒԱՆՈՐԵԱՑ ԵՒ ԿԱՄ ՏԱՐԵՄՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՑ

Եղիան ՚ի գերեզման, և ասեն զամբիծան ։

Ճարպան ։

Յիսուս միածինն անմահ ։ (երես 288 ։)

ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ ։

Այսպէս ասէ Տէր. գամ ժողովել զամ
ազգս և զլեզուս. եկեսցեն և տեսցեն
զփառս իմ. և թողից ՚ի վերայ նոցա
նշան ։ Եւ առաքեցից ՚ի նոցանէ փրկե
կեալս յազգս. ՚ի Թարսիս, և ՚ի փուդ,
և ՚ի լուդ, և ՚ի մոսոգ, և ՚ի Թոբէլ,
և յԵլլադա, և ՚ի կղզիս հեռաւորս՝ ո
րոց չիցէ լուեալ զանուն իմ, և ոչ
տեսեալ զփառս իմ. և պատմեսցեն զՁ

փառս իմ և զանուն իմ՝ ի մէջ ազգաց։ Եւ ածցեն զեղբարս իւրեանց յամենայն ազգաց պատարագ տեառն. հեծեալս կառօք՝ հանդերձ պալարակապ երիվարօք և հովանոցօք՝ ի սբ. քաղաքն երուսաղէմ, ասէ տէր։

Գողոսի առաքելոյն՝ ի կորնթացւոց Ա. Թղթոյն ե։

Այլ ասիցէ ոք, զիարդ յառնեն մեռեալք՝ կամ որով մարմնով գայցեն։ Ընդհատ, դու զոր սերմանեսն, ոչ կեն դանանայ՝ եթէ ոչ մեռանիցի։ Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին զոր ծնանելոցն ևս՝ սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ ևս՝ և եթէ այլոց սերմանեաց։ Եւ աստուած տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։ Ոչ ամենայն մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց՝ և այլ մարմին ձկանց։ Եւ մարմինք երկնաւորք՝ և մարմինք երկրաւորք. այլ՝ այլ

փառք երկնաւորաց՝ և այլ փառք երկրաւորաց։ Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. և աստղ ի աստղէ զատուկ առաւել է փառօք։

Ալէլուիա. Ալէլուիա։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Արբ. Աւետարանիս ցի ԻԲ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր, և մի զանգիտեսցեն։ Լուայք զի ասացի ես ձեզ՝ Թէ երթամ՝ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչեւ եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասջիք։ Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսո-

րիկ, և յիս ինչ ոչ գտանէ. այլ զի ծա-
նիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր. և
որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այն-
պէս առնեմ. օն արդ գնացուք աստի:

Գ.

Վ ան ՚ի վերուստ խաղա: (Երե. 105:)

Աղօթք:

Ընտուած յաւիտենական և Թագա-
ւոր անմահ, որ ստեղծեր զմարդն ՚ի
հողոյ, և եդեր զնա ՚ի դրախտին փափ-
կութեան գործել զնա և պահել, և
պատուիրանադրեցեր կալ ըստ հրա-
մանի քումմ: Իսկ բանսարկու Թշնամին
պատրողական բանիւք խաբեալ զնա,
խրատեաց լուծանել զաստուածական
հրամանդ: Եւ նորա ունկնդիր ե-
ղեալ չարին, արտաքսեցաւ ՚ի լուսե-
ղէն վտառացն. և փոխանակ անմահու-
թեան՝ մահու եղեւ ժառանգաւոր,
ըստ արարչական հրամանիդ զոր ասա-
ցեր, հող էիր և ՚ի հող դարձցիս. և
ոչ կարացին արարածք հնազուանել

պէրամայեաչն ՚ի քէն: Եւ արդ՝ տէր աստուած մեր ողորմած և մարդասէր՝ գթա ՚ի ծառայս քո յայս, որ ելից զերկրաւոր կեանս իւր, և դարձաւ անդրէն ՚ի հող ըստ հրամանի քում: Ընկալ զհոգի սորա, և խառնեա ՚ի գունդս հրեշտակաց քոց. և արժանի արա պահել և ցնծալ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան քո սրբոյ: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ այժմ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Որհնեալ ես տէր աստուած մեր՝ յոյս ամենայն արարածոց, որ նախ յաթոռս քերովբէականս, և բարեբանեալ երկրպագիս յերկնաւորաց և յերկրաւորաց. որ և կոչեցեր զծառայս քո զայս ՚ի հանդերձեալ կեանսդ՝ զոր խոստացար ամենայն հաւատացելոց քոց: Գթա ՚ի ստեղծուածս ձեռաց քոց, և հանգո զհոգի սորա ՚ի խորանդ լուսոյ, բարեխօսութեամբ մօր քոյ սրբոյ

կուսին Մարիամու ։

Լ ՈՒր տէր պաղատանաց մերոց, որ հայցեմք ի քէն զԹողութիւն սորա և մեր. զի դու ես աստուած արդարոց և մեղաւորաց. փառք սրբոց, և հանդիստ աշխատելոց։ Ընկալ զհոգի սորա ի տեղոջ լուսոյ՝ և ի տեղոջ հանգըստեան. ի Թիւս սրբոց՝ և ի համարս արդարոց ։ Եւ հանդո զսա ի գոգն աբրահամու ընդ այլ պայծառացեալ ոբց քոց. և զմեզ արժանի արա որ՝ հաւանիլ մասին ժառանգութեան ոբցն ի լոյս ։ Օ՛ի ընդ նոսին միշտ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ։ փայլին արդարքն յարքայութեան և ։ Ռո անպատում խոնարհութեամբդ ։ փառաց ի փառս բարձրանան յաջա ։ Ռահանայք և ժողովուրդք հայցեմք ։ Տըստմ՞հաղորդ ջարչ՛րանո՛ք ի յան ։

Հոգւոցն հանգուցելոց ։ Քրիստոս որդի աս ։

Օրհնեսցի * և կնքեալ պահեսցի գեղեցման և ոսկեզրք ծառայիս աստու ։

Հայր մեր որ յերկինս ։

ԿԱՆՈՆ

ՏՂԱՅԱԹԱԴ ԿԱՏԱՐԵԼՈՅ

Ալելուիա · Ալելուիա ։

Ընդ քեզ տէր համ ։ ինչ ի Դատեան ։

Օրհնեալ հոգիդ սուրբ աստուած ճշմարիտ ։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ո ։
Դատեա տէր զայնոսիկ որք · (երես 232 ։)

Հարկան ։

Օրհնեցէք մանկունք զտէր և օրհնեցէք զանուն տեառն ։

Ամ Հանգ

Ընդ ստեղծմամբ քոյ տէր պատուեցեր ընդմեզ · ընկալ և այժմ ընծայեցեալսն ի քեզ ձեղիդ հաւատով, ըստ մեծի քում ողորմութեան ։ Որ ընտրեցեր սուրբ հոգւոյն

լուսաւորեցեր, յիշատակիդ իւրեանց
պհոգիս նոցա ընկալ մարդասէր, ըստ
մեծ : Ամէն հաղորդեցան մարմնոյ և արե-
եանն քո տէր. հանգոյ պհոգիս նոցա
ընդ սուրբսըս քո քրիստոս աստուած.
քանզի գիւղ սուրբ արեանն քո ե՛ն :
Օ հոգիս ծառայից քոց քրիստոս, ընդ
կալ ի դասս անդրանկաց գրելոց ի
յե՛րկինս : Ընկալ վասըն սոցա ըզբա-
նաւոր պատարագս ի մէնջ. և շնորհ-
եան նոցա ըզթողութիւն գտանել յա-
ւուրն յետնում :

ապաշ ղար

Ւայր բազմամղղիմ խոստովանիմ առ
քեզ որպէս զանառակ որդին. թող լինձ
ըզմեղս իմ, և ողորմեա : Տէր որ գը-
թացար ի կինըն քանանացի, գլթած
եւ յիս ի մեղաւորս, և ողորմ : Տէր
որ դարձուցեր ըզմաքսաւորն ի գիտու-
թիւն ճշմարտութեան, դարձո և զիս

զմոլորեա՛լս , և ոչ՛ը ։

ապաշ տէր

Տէր ա՛ր ՚ի վե՛րայ քերովբէից փառա՛ բա՛նիս , քաղցրա՛թեամբ խոնարհեալ ընկա՛լ զաղաչա՛նըս մե՛ր ։ Տէր ա՛ր հնոր հեցե՛ր ողո՛րմութիւն ազգի՛ մա՛րդկան , քաղց ։ Տէր ա՛ր ուսուցե՛ր մեզ յամե նայն ժամ փառը՛ս տալ անուա՛նըդ քո՛մ սո՛ւրբոյ , քաղցրո՛ ։

ղաղ

Կենդանութեանց բա՛շխող քրիստո՛ս ՚ի բեթանիա՛ եկաւորեա՛լ այսօր , բա րե՛կամի՛ն ղազարո՛ւ պա՛րգեւե զկե՛ն դա՛նութիւն ։ Տընօրինաբա՛ր արտաս ուելո՛վ ընդ մարթայի՛ և ընդ մարիա մո՛ւ ողբակից ե՛ր . և որպէս մա՛րդ հա՛ր ցանէր ա՛ր եդիք ըզղա՛զարո՛ս ։ Ո՛վ որ պէս զաստուա՛ծ բարբա՛ռով յարու ցանէ՛ ՚ի մեռելոց ըզչորեքօրեայն . և զուգընթա՛ց ձա՛յնի՛ն մեռեա՛լն եկն ար տաքս ա՛նապակա՛ն ։

յար Ընձառելի հօր էակից, ի խաչելեալ
պար կամաւ հօր. ողջոյնս։ Ընդունելի
Թեանց տըւող քրիստոս, ի գերեզ-
մանն իջեալ որպէս մարդ. ողջոյն։ Ու-
րերորդ աւուր յարեաւ, յոյս յան-
բաւ Թեան ցուցար մեզ. ողջոյն։

հոգ Ո՞ր ի քրովբէական կառսըդ հանգչիս,
տէր այսօր իջեր յերկինից ի դաս առաքե-
լացըն սուրբ հոգի. օրհնեալ ես Թա-
գաւոր անմահ։ Ո՞ր գընաս ի վերայ
Թեւոց հողմոց, այսօր ի հրեղէն լե-
զուս բաժանեալ հանգեար յառաքեալ
սըն սուրբ հոգի. օրհ։ Ո՞ր խնամես
տեսչութեամբ զքո զարգարածս, այ-
սօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո
սուրբ հոգի. օրհ։

յոգ Ո՞ր ըզբանն աստուածբաւական եղեր
ընդունիլ յորովայնի միշտ կոյս. զքեզ
մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի

կանայս : Ար էից լուսոյն արժանի՛ եղեր բառնալոյ ՚ի գիրկըս քո մա՛րմնով. ըղ քեզ մեծամ : Ընդարձա՛կ տաճար սրբնօրէ- նա՛լթեան կոչե՛ցար հոգւո՛յն սրբոյն մի՛շտ կոյս ըքեզ մեծամ :

Խաչն

Ա՛ռըր խա՛չն օգնական հաւատացեալ- ըոց, կա՛նգնեցաւ ՚ի յերկրի յաղթող թըշնամւոյն. ե՛կայք ժողովո՛ւրդք երկրպագեսցո՛ւք : Ընդարի՛չն աստուած բարձրացաւ ՚ի խաչի՛ն, և զմեռեալըս մեղօք փայտի՛ն ճաշակմամբն, ՚ի սմա՛ն նորոգեա՛լ կե՛նդանացոյց : Ի միւսան- գա՛մ գալըստեան աստուածո՛ւրդւոյն, ա՛ռըր խա՛չն երեւի՛ և լուսաւո՛րէ. զի նա՛ է յոյս հաւատացելոց :

փառք հօր և : Ա յժմ և միշտ և :

Յաշտեա՛ ՚ի ձեռըն սուրբ մարմնոյ և արեան քո՛ տէր. և պարգեւեա՛ նոցա դասի՛լ յաջակո՛ղեան քո՛ :

Քարոզ։

Վ՚ան ՚ի վերուստ իսաղա ։ (Երէ. 105 ։)

Աղօթք։

Սուրբ ես տէր աստուած մեր՝ հզօր և ահաւոր. հայր գթութեանց՝ և ած ողորմութեանց. որ նստիս ՚ի բարձունս, և բարեբանիս ՚ի սրբոց քոց, և խնամես քաղցրութեամբ զարարածս քո ։ Որ վան անբաւ սիրոյ քո գթացեալ ՚ի ստեղծուածս անարատ ձեռաց քոց, առաքեցեր յաշխարհս ողորմութիւն քով զծոցածին որդիդ քո՝ առ ՚ի փրկել զգրաւեալս մահու զարդիս մարդկան ՚ի ձեռաց դժոխոց ։ Որ եկեալ մարմնացաւ յանարատ և ՚ի սուրբ կուսէն Մարիամայ, և ծնաւ տղայապէս ։ Խանձարրօք պատեցաւ, և յանբանից մսուր եդաւ. ՚ի կուսական ստեանցն կերակրեցաւ, որ բանայ զձեռն իւր՝ և կերակրէ զարարածս ։ Այնուհետև մանուկ ասաղ ըստ եսայեայ՝ էարկ զձեռն իւր ՚ի ծակ իժից, և ելոյծ զղօրութիւն ա

ներևոյթ օձին։ Ապար զօրութիւնս բազում և մեծամեծս՝ աստուածահրաշ ներգործութեամբն իւրով, և ծա նոյց զանուն քո հայր՝ ամենայն աշխարհի։ Ետուր խոնարհութեամբ ի վերայ յաւանակի, և բարեբանեցաւ ի տղայոց, ըստ նախաձայն բանի երգողին դաւթայ։ Եւ կատարեալ զծածկագործ տնօրէնութիւնն իւր՝ յանձն էառ զմահ մարմնով. Թաղեցաւ ի յերկրի, և յարեաւ ինքնիշխան զօրութեամբն իւրով, և ետ յոյս յարութեան հաւատացելոց իւրոց։ Եւ արդ՝ տէր բարերար՝ ընկալ զհոգի տղայիս այսորիկ, որ հաւատացեալ յանուն միածնի քո, ծնաւ ի սուրբ աւազանէն վերստին ծննդեամբ. և այժմ ի տղայական հասակին կոչեցաւ առ քեզ։ Ընկալ զսա և դասեա ընդ սուրբս քս, և հանդո ի խորանատ երկնից. զի դու ես աստուած մեր, և քաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն ընդ որդւոյ և սուրբ հոգւոյդ այժմ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որհնեալ ես արդարադատ և ողորմած աստուած, որոյ ճշմարտութիւնդ անպատում է, և ողորմութեանդ ոչ գոյ թիւ։ Ող վասն մարդասիրութեանդ քո լուծեր ՚ի հող զնչաւոր մարմինս զպատրեալս ՚ի բանսարկուէն՝ ասելով, հող էիր և ՚ի հող դարձցիս. զատ ո՛ւրեմ խոնարհեցաք ՚ի ծերոց մինչև ցըստղայս, և յերկիր մածան մէջք մեր։ Իսկ վասն բազում ողորմութեան քո խոնարհեցար մարդասէր տէր՝ նորոգել ՚ի մեզ զմարմին հոգևոր։ Ընդ քեցար դու լինքն միածինդ հօր, և տըղայացեալ ՚ի սրբոյ կուսէն՝ տպաւորեցեր յանձին քում զմահ մարմնով կամաւորապէս. զի տացես մեզ զքո անմահութիւդ։ Ոչեր ՚ի գերեզման, հաստարեալ ընդ մեռեալս. և յարուցեալ համբարձար յերկինս. և զսիրելեացդ քոց զմարմին խոնարհութեան՝ անկաւկից և կերպարանակից առնել խոստացար մարմնոյ փառաց քոց յերևիլ քո

տէր՝ ՚ի փող յետին, յորժամ գաս տալ
վարձս սիրելեաց քոց: Ընդ՝ աղաչեմք
զքեզ մանկացեալդ աստուած յիսուս
քրիստոս. արա արժանի զտղայս զայս՝
փառաւորութեան ընդ արդարս քո յա-
ւուր յայնմիկ, հանդիպիլ քեզ զուարթ
երեսօք, և փառաւորել ցնծութեամբ
և գոհութեամբ զքեզ ընդ հօր՝ և սբ:

Ալէլուիա. Ալէլուիա:

Ի բերանոյ մանկանց տղայոց և ծաղն-
դեայց հաստատեցեր զօրհնութիւն:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ:

Ահաւասիկ տէր աստուած մեր, յոր
յուսացեալ էաք՝ և ապրեցուսցէ զմ
մեզ. զի սա է տէր որում սպասեաք
սմա: Ցնծասցուք և ուրախ լինցուք ՚ի
փրկութեան մերում. և տացէ մեզ
տէր աստուած մեր հանգիստ ՚ի լերկ-
նըն սրբութեան իւրոյ: Ցաւ մտցէ ՚ի
նա ժողովուրդ որ պահէ զողորմութի-
ւն. որ վերակացու է ճշմարտութեան, և
պահէ զնահապետութիւն: Ցաւ արդ՝ մը-

խնթարեցից զքեզ յամենայն տրտմու-
թեանց քոց ասէ տէր :

Ի վարդապետութենէ սրբոյն Գրիգորի լուսաւորչին
մերոյ ասացեալ :

Ընթէ մեք որ կենդանիքս եմք միացեալք
ի գալստեանն տեառն՝ հանգուցեալով
քըն հանդերձ յափշտակիցուք ամպովք
ընդ առաջ տեառն յօդս . և այնպէս
յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք :
Խառնեալք ի գունդս հրեշտակաց , և
թռուցեալք ի թռիչս երագութեան
ի լուսաւիետուր սպիտակակերպ երա-
մըս աղաւնեաց . որք առին և կերպա-
րանեցին յանձինս իւրեանց զկերպա-
րանս որդւոյն աստուածոյ . որ երեւե-
ցաւ նոցա , և պատուիրեաց սուրբս
լինել . զի բուսուսցէ արդարոցն Թևս
հոգևորս խառնիլ ի գունդն աստուա-
ծական : Ընդ՝ զարմացեալք հարցա-
նիցեն զօրքն վերինք լուսեղէնք , յոր
ժամ տեսանիցեն զնեղբնագունդս սրբց
մարմնականաց՝ զի առ տէր ի ներ-
քուստ թռուցեալ գնասցեն , թէ ոմ

են սոքա որ իբրև զամպս թռուցեալ են, և իբրև զաղաւնիս ձագախառն երամովին գան առ տէր: Ա՛պա լուի ցեն ՚ի տեառնէ զպատասխանիս, եթէ սոքա են որք չիս յուսացեալ են. տա՛ ցայց զնոսա ՚ի լեառն սրբութեան իմոյ, և ուրախ արարից զնոսա ՚ի տան ՚ի աղոթից իմոմ:

Պօղոսի առաքելոյն ՚ի Եբրայեցւոց թղթոյն է:

Ա՛յլ մատուցեալ էք ՚ի սիովն լեառն և ՚ի քաղաք այ կենդանւոյ՝ երուսաղէմ երկինս, և ՚ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, և յեկեղեցիս անդրանկաց գրեալոց յերկինս, և առ դատաւորն ամենեցուն ած, և յոգիս արդարոց կատարելոց. և ՚ի նորոց կտակարանաց միջնորդն յիսուս, և ՚ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զհաբելին: Օ՛գոյշ լերուք գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրա-

ման տայր. որչափ ևս առաւել մեք, եթէ յերկնաւորէն Թիկունս դարձուցանիցեմք: Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և ասէ. միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս: Ընդ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատունքն կացցեն անշարժքն:

Ալէլուիա. Ալէլուիա:

Դատ արա ինձ տէր՝ զի ես յամբծութեան իմում գնացի, ի տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ:

Սրբոյ Աւետարանիս ՃԺ ԿԻ որ ըստ Մարկոսի:

Ա՛ տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն՝ սաստէին այնոցիկ որ մատուցանէինն: Իբրև ետես Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտոյդ գալ առ իս, և մի արգելուք

զդոսա. զի այդպիսեացդ է արքայու-
թիւնն աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ.
որ ոչ ընկալցի զարքայութիւն աստու-
ծոյ իբրև զմանուկ, ոչ մտցէ ՚ի նա:
Եւ առեալ զնոսա ՚ի գիրկս, ձեռն եդ
՚ի վերայ՝ և օրհնեաց զնոսա:

Կարող:

Ա՛ման ուղղելոյ զգնացս: (Երէ. 81:)

Աղօթք:

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա:

Փառք քեզ Թագաւոր յաւիտենից ամ՝
և արարիչ բոլորից գոյութեանց, հայր
տեառն մերոյ Յիսուսի քրիստոսի. քեզ
խոնարհեցուցանեմք զծունրս սրտից
մերոց ամենայն հաւատացեալքս ՚ի
քեզ, և աղաչեմք զամենաստուրբ տէ-
րութիւն քո: Լանգո զհոգի տղայիս
այսորիկ ՚ի ժառանգութիւն երկնից
բարութեդ. և դասեա ՚ի թիւ այնո-
ցիկ՝ որք կարգեցան յաջակողմեան
միածնի քո, յորժամ գայ յերկնից ՚ի
պատրաստ բնակութենէ իւրմէ: Յայ-

նըմ աւուր ահեղին գԹա տէր՝ ’ի գի-
նըս արեան միածնի քո տեառն մերոյ
յիսուսի քրիստոսի. որ նորոգեաց զմ
տիեզերս կամաւոր խոնարհուԹեամբն
իւրով: Ընդ որում գոհուԹիւն և փա-
ռըս վերառաքեալոյդ քեզ հօր ամենա-
կալի՝ և հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ:

ԽաղաղուԹիւն ամենեցուն:

Օրհնեալ ես որդի աստուծոյ՝ և բան
հօր, որ վասն մեր տղայացար ’ի սուրբ
կուսէն մարիամայ, և սրբեցեր զտղ-
ղայացեալսն հաւատով ’ի ձեռն վե-
րըստին ծննդեան սուրբ աւազանին:
Օ’ի որք մկրտեալ լուսաւորին, առ-
նուն զորդեգրուԹեան պատիւն ’ի ձե-
ռըն մկրտուԹեան շնորհին, զոր պար-
գևեցեր հաւատացելոց քոց, ասելով
սրբոց առաքելոցն. մկրտեցէք զնոսա
յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբ-
բոյ: Ընդ՝ ընկալ զլուսաւորեալս ձեր
աւազանաւն, և զհաղորդեալս սուրբ
մարմնոյ և արեան քո. և խառնեա ’ի
սուրբ և ’ի կատարեալ մանկունան,

որք ոստովք և տերևեալ ձիթենեօք
օրհնէին զտուրըք գալուստ քո յերու-
սաղէմ: Եւ զմեզ զամենեսեան արժա-
նի արա փառաւորել զքեզ ընդ հօր:

Եւ ապա ասէ Յիսանեղէն երիս-
կոսն, և Յերարիչ և մարդասէրքն Մեկ
Հոգւոյն Հանգուցելոց քրիստոս աս:
Հայր մեր որ յերկինս:

Տանին յեկեղեցին, և ասեն Շարական:
Բանդ ահ որ ի ծով: (երես 252:)
Ալելուիա. Ալելուիա:
Երանելիք են որք բնակեալ են ի տան
տեառն յաւիտեանս յաւիտենից օրհ-
նեսցեն զքեզ:
Ընթերցուածս Առաքից:
Արդարքն յաւիտեան կեցցեն, և ի
տեառնէ վարձք նոցա, և խնամք նոցա
ի բարձրեալն: Վասն այնորիկ ընկալ-

ցին զարքայութեանն վայելչութիւն, և զիաւն գեղեցկութեան ՚ի ձեռանէ տեառն. զի աջով իւրով հովանի լինի նոցա, և բազկաւ իւրով վերակացու լինի նոցա:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ:

Այսպէս ասէ տէր. ահաւասիկ ես դարձուցանեմ ՚ի դոսա իբրև զգետ զխաղաղութիւն, և իբրև զհեղեղատ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա ՚ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, և ՚ի վերայ ծնգաց իւրեանց գըգուիցեն: Որպէս մայր զմանուկ իւր գըգուիցէ, այնպէս գըգուեցից զձեզ: Եւ յերուսաղէմ միխիթարեսջիք, և տեսջիք և խնդասցեն սիրտք ձեր, և ոսկերք ձեր իբրեւ զդալարի ղուարճասցին. և ծանիցի ձեռն տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի անհաւատիցն:

Գօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց Ա· Թղթոյն ԺԳ:

Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ լսէաի,

իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր՝ ըզ տղայութեանն ՚ի բաց խափանեցի: Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խեղամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ ինձ: Այժց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէր է: Հետեւեցարուք սիրոյ, և նախանձաւորք լերուք հոգեւորացն, առաւել զի և դուք մարգարէանայցէք:

Աղուխա. Աղելուխա:

Կարդացին արտարքն առ տէր, և տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Սրբոյ աւետարանիս ՁԻ ԿԻ՝ որ ըստ Մատթէոսի:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. գոհանամ ղքէն հայր՝ տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր

զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Ա՚մենայն ինչ տուաւ ինձ ՚ի հօրէ իմմէ: Ա՚ւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր. և ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և ումմ որդին կամիցի յայտնել: Ա՚կայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Ա՚ռէք զլուծ իմ ՚ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրոգի:

Կարդ:

Ա՚ստն հրաժարելոյ ան. (երէս 258:)

Աւետ:

Տէր աստուած յիսուս քրիստոս՝ թագաւոր յաւիտենից՝ յոյս մեր և ապաւէն. որդի աստուծոյ ճշմարիտ. ճառագայթ անշիջանելի. լոյս ՚ի լուսոյ, և կեանք ՚ի կենաց. հօր սահմանն և բան. բժիշկ հոգւոց և պատուիչ վիրաց մերոց,

որ բժշկես զբեկեալ սիրտս, և պատես զամենայն վէրս նորա: Որ ոչ խոտան համարեցար զմանկունս առնուլ ի գիրկս քո՝ և օրհնել զնոսա. այլ սատեցեր և աս աշակերտացն քոց, թէ մի արգելուք զդոսա. և հաստատեցեր անսուտ հրամանաւդ, թէ այդպիսեացդ է արքայութիւնն երկնից: Ընդ՝ ի ձեռն բանիդ այդորիկ՝ ընկալ զաղաչս զայս յաղքայութեան քումմ, գրելով ի գիրս ազատութեան որդեգրեցելոցն հօր քո բարերարի: Ընդ որում քեզ՝ և հոգւոյդ սրբոյ վայել փառք. իշ:

Խաղաղութիւն ամենեցուն.

Ողջ երկիրպագանեմք, և զքեզ աղաչեմք, և ի քէն խնդրեմք տէր մեր յիսուս քրիստոս. որ իշխանդ ես և տէր՝ ապականել և կեցուցանել, հարկանել և բժշկել: Որո անմոռաց գթութեամբ ըլլդ՝ և անբաւ մարդասիրութեամբդ գթա ի վերայ ամենայն հաւատացեալ ննջեցելոց, և մանաւանդ ի վերայ սը-

զայիս այսորիկ՝ որ այժմ հանգուցեալ
է: Ընկալ զսա ի լուսեղէն խորանդ
ի յարկան արդարոց ընդ երջանիկ տղա-
յոցն այնոցիկ, որ վասն քո փոխանա-
կեցան ի բեթղեհէմէ: Եւ մեզ հա-
ւատացելոցս ի քեզ՝ ուղարկաւորացս
սորա՝ շնորհեա հոգի զգաստութեան
կանխել միշտ ի սէր և յերկիւղ քո,
և թողութիւն գտանել ի քէն: Եւ
գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր՝
և սուրբ հոգւոյդ, այժմ և:

Ե- ապա ասի այնճանեղէն երիո- փոա՛ն,
և այբարիչ և մարդասէրքն մեզ փո՛ա՛ն:

Հոգւոյն հանգուցելոց: Հայր մեր որ յերկինս:

Տանէն ի գերեզման, ասելով. Բազմերամբք:
Ես ասացի: Ահաւասիկ ոչխարն ի գերեզման,
հանգիպ առնէն և կարգան վանեփարան.
Յայնմ ժամանակի. (երես 323): Ե- եր-
կոքեան ի գերեզման ասեն. Շարական:

 Որ կոչեցեր առ քեզ աչեր զտիեզերս

ամենայն, ընկալ զմեր ընծայեցեալսն
ի գոգ նահապետին աբրահամու, ձ-
ղորմած տէր վըրկիչ և բարերար : Ա՛ր
թողութեանց ես սըւոզ ամաբւած,
թո՛ղ ըզմե՛զըս մեր ննջեցեալսդն, կարող
յամենայնի և հըզօր. ա՛ղօր : Ա՛ր լու-
սատու ես ախե՛զերաց քրիստո՛ս աստը-
ւած, լուսաւորեա՛ և զմեր ընծայեց-
եալսն լո՛ւսով երանաւէ՛տ զըւարթ-
նոցն. ա՛ղօր :

Ընդունի՛ր, Իսրէլ, փառ :

Ե՛ս հասեալ ի գերեզմանն ասէն որպէս ի ձե-
ծի լուղմանն :

Գարձ անձն իմ ի հանգիստ : (Երես 162 :)

Ալելուիա. Ալելուիա :

Օրհնեցէ՛ք մանկունք զտէր. և օրհնե-
ցէ՛ք զանուն տեառն :

Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայ-
սմհետէ մինչեւ յաւիտեան :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈ ԻԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ։

Ա՛յսպէս ասէ տէր. ոչ ևս եղիցի քեզ արեգակն ի լոյս տուընջեան, և ոչ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս ի գիշերի. այլ եղիցի քեզ տէր լոյս յաւիտենական, և փառք քո աստուածդ։ Ոչ մոցէ քեզ արեգակն, և լուսին ի քէն ոչ պակասեսցի. զի եղիցի քեզ տէր լոյս յաւիտենական։

Ի վարդապետութենէ սրբոյն Գրիգորի լուսաւորչի մերոյ ասացեալ։

Ա՛մենեքին որ տեսանիցեն զարդարան ճանապհացն զնոսա և ասասցեն, սքանչեն զաւակ օրհնեալ յաստուծոյ. և սքանչութիւն ուրախ եղիցին ի տէր։ Եւ տէր ամենակալ ասէ ցնոսա, եղիջիք լինձ յուստերս և ի դստերս։ Գումիք արարչական խնամոցն յուզեացին ի նոսա, ըստ մարգարէին որ ասէ. որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։ Օ՛ի այժմ յուսով

հայելով զայս ամենայն իբրեւ ընդ հայելի տեսանեմք , բայց յայնժամ դէմ յանդիման տեսանեմք , և ՚ի նոյն պատկեր նորոգիմք փառօք ՚ի փառս ։

Պօղոսի առաքելոյն Ա Եբրայեցւոց Թղթոյն ։

Ընդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ , և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց . զի մահուն իւրով խափանեցէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր , այսինքն է զսատանայ . և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութիւն ։ Վասնզի ոչ երբէք ըզ հրեշտակաց բուռն հարկանէ . այլ ըզ զաւակն աբրահամու բուռն հարկանէ ։ Վասի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել . զի ողորմած լինիցի , և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անահաս ՚ի քաւել զմեղս ժողովրդեանն ։ Ո՞վ որով ինքն չարչարեցաւ զփորձ

առեալ, կարող է և փորձանաւորացն օգնական լինել:

Ալէլուիա. Ալէլուիա:

Երդարքն որպէս զարմանանիս ծաղք կեսցին. որպէս զմայրան լիբանանու բազումք եղիցին:

Սրբոյ Աւետարանիս ՅՀ ԿՒ որ ըստ Մատթէոսի:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Յայնժամ իբրեւ ետես հերովդէս թէ խաբեցաւ ՚ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ՚ի բեթղէհէմ և յամենայն սահմանս նորա յերկուանէց և ՚ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ՚ի մոգուցն: Յայնժամ կատարեցաւ ասացեալն ՚ի ձեռն երեմիայ մարգարէի որ ասէ. ձայն գոչեաց ՚ի հառամայ, ողբումն և լալումն և աշխարհումն յոյժ. հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարիլ զի ոչ էին:

ԿԱՐՈՂ ։

Վ՚ասն ուղղելոյ զգնացս ։ (երէ՚ 81 ։)

ԱՂՕԹՔ ։

Տէր աստուած ամենակալ, բարերար և բազումողորմ, քաղցր և անհամակալ. որ մարդասիրութեամբ քով գթացար յազգս մարդկան, և առաքեցեր յաշխարհս զմիածին որդիդ քո. որ եկեալ ողջացաւ յամենասուրբ կուսէն մարիամայ, և փրկեաց զմեզ յանիծից ադամայ, և նորոգեաց հոգւովդ քով սրբով. և ազատեալ զմեզ յիշխանութենէ խաւարի, խոստացաւ մեզ կեանս անմահականս ։ Նա արդ բաղմագութ և ողորմած աեր, գթա՚ի հոգի տղայիս այսորիկ զոր փոխեցեր յաշխարհէ աստի՚ի գաւառն կենդանեաց. և արժանի արա զսա լինել ժառանգորդ երկնից արքայութեանդ ։ Օ՚ի դու ես արարիչ ամենայնի, որ ամփոփես զհոգի և զշունչ մարդկան, և դարձեալ նորոգես որպէս և կամիս

խորին քո տեսչութեամբդ : Ընկալ զմ
տղայս զայս ընդ սուրբ մանկունան
բեթղեհէմի , որք վասն անճառ տնօ-
րէնութեան միածնի քո խոզխոզեցան .
և արժանի եղեն հոգեւոր թեւօք ա-
րագաթռիչ ելանել ՚ի կամարս լուսե-
ղէնս և հանդչիլ ՚ի գոգն աբրահա-
մու : Ընդունեմք զքեզ աէր՝ ընկալ զսա ,
և հան սմա մասն և բաժին ընդ ամե-
նայն սուրբս քո , որք հաճոյ եղեն աե-
րութեան քումմ : Նա քեզ ընդ որդ-
եսդ միածնի և ընդ հոգւոյդ ճշմար-
տի վայելէ փառք և :

Խաղաղութիւն ամենեցուն :

Յորժամ ծագին արդարքն իբրև զարե-
գական յարքայութեան քումմ տէր՝ պայ-
ծառացեալք որպէս հրեշտակք լուսա-
ւորս : Յորժամ լինի յարութիւն ամե-
նայն մարդկան՝ և փոխոխումն և նորո-
գումն կերպարանացդ : Յորժամ լինի
միանգամայն մուտ վերին ճանապար-
հին ՚ի յօթևանս բազում անճառ
խնդութեք , ըստ անսուտ բանի փրկչին

մերոյ, եթէ ՚ի տան հօր իմոյ օթևանք բազումք են: Յորժամ մտանեն կատարեալքն յերկնային առագաստն բազում համարձակութեամբ և լի աստուածային փառօք, իջանեն ՚ի դրախտն փափկութեան՝ և ելանեն ՚ի վերինն Երուսաղէմ:

Յայնժամ ընդ նոսին դասաւորեա տէր՝ զննջեցեալսն մեր, և մանաւանդ զմեղայս զայս, զոր անարատ և անշաղախ կենօք առ քեզ կոչեցեր անապական զգեստու սուրբ աւազանին, ցնծալ և պարել շուրջ զարքունական աթոռովդ: Օ՚ի դու ես տէր որ հաստատեցեր զամենայն ՚ի փառս տէրութեան քոյ: Ընդ քեզ վայելէ փառք՝ իշխան:

Ընդ դինէ ՚ի ծածկելն հողով. տես երես 279, ՚ի տեղի լուացմանն. ախեալ Օրհնեա տէր ողոր. դինէ ՚ի ևս ՚ան ՚ի վերուստ պահ:

Աղօթք:

Ընտրեալ յաւիտենական, որ արժանի արարեր զծառայս քո զայս՝ դառնալ

անդրէն ՚ի հող ուստի ստեղծաւ ։ Եւ այժմ բարերար և մարդասէր տէր՝ օրհնեա զհոգեախչտի բնակութիւն ծառայիս քո այսորիկ . կնքեա և պահեա զոսկերս սորա ամրածածուկ աջովդ քով սրբով . զի ՚ի հօտէ խաշանց քոց է , և ՚ի հաւատացելոց ՚ի տէր մեր յն քն ։ Ընդունիմք զքեզ հայր երկնաւոր՝ ՚ի վերայ ննջեցեալ տղայիս այսորիկ . յիշեա զհոգի սորա , և խառնեա ՚ի գունդս հրեշտակաց , և ՚ի թիւս այնոցիկ որ սիրեցին զօր երևելոյ գալստեան միածնի քո ։ Ի գոչել աստուածային փողոյն՝ և յերևիլ սրբոյ խաչին՝ պայծառասցի առ յանանց լոյսն , և ընկալցի զգեղափայլ կերպարանն . զուարթերես կացցէ առաջի ահաւոր բեմի միածնի քո , և առանց ամօթոյ տեսցէ զԹագաւորդ փառաց ։ Որ և զմեզ արժանի արասցես ընդ նոսա քո փառաւորել զքեզ ընդ որդ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Փառաւորեալ է անուն քո սուրբ՝ Թագաւոր անմահ . որ պատրաստեցեր մեզ

հանդիստ յերկրաւոր աշխատութեցս՝ զանախտ և զանաշխատ կեանսդ ի հանդերձեալ աշխարհին՝ ի ձեռն միածնի որդւոյ քո սիրելւոյ. որ ապան զմահ՝ և լուսաւորեաց զմեզ ի կեանս և յաւնեղծութիւն. փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց յարքայութիւնդ երկնից։

Աղդ՝ աղաչեմք և խնդրեմք ի քէն տէր՝ առաքեա զպահպանողական զօրութիւնդ աջոյ քո, և օրհնեա զտեղի հանգըստեան սորա. զի ի գոչել փողոյ գալըստեան միածնի քո՝ նորոգեսցի սրաթռիչ թևօք վերանալ յարքայութիւնդ երկնից ընդ այլ սրբոց քոց։ Եւ ընդ նոսին փառաւորել զքեզ հայր՝ ընդ որդւոյ և փառաց ի փառս բարձրանան աջոյ։ Քահանայք և ժողովուրդք հայցեմք ի փայլին արդարոյն յարքայութեան և Քո անպատում՝ խոնարհութեամբ որ։

Հոգւոյն հանգուցելոց քրիստոս աստուած։

Օրհնեսցի * և կնքեալ պահեսցի գե։

Հայր մեր որ յերկ։

ԿԱՆՈՆ

ՏՂԱՅԻ ԱՅԳՈՒՑ ԿԱՏԱՐԵԼՈՑ

Երեան ՝ի գերեզման և ասէն գոբէլայ ծ
Ընթից ։ Ես ապա Շարական ։

դկ — Երանելի՛ սուրբ մանկո՛ւնքն որպէս քաջ նահատակք եւո՛ւն զանձինս իւրեանց ՝ի մահ՝ա՛ծն վոխանա՛կ որդւո՛յն աստուծոյ ։ Եւ դիակո՛ւնք սուրբ մանկանցն ո՛րպէս ըզծաղի՛կ նըրանեն եաց հարեալ ՝ի կարկտե՛ն, և ա՛ն կեա՛ց ՝ի սո՛ւրբ բե՛թղեհէմ ։ Եւ հա գի՛նք սուրբ մանկանցն որպէս զեբրա՛մա աղաւնեաց թռուցեալք ՝ի յերկի՛նս հո՛վն։ և դա՛սեա՛լք ընդ զբաւո՛ր թո՛ւնս երկնից ։

Յիսո՛ւս միածինն անմա՛հ. (Երէս 288։)
Յո՞րժամ եկիր ՚ի գերեզ. (Երէս 289։)
Հոգո՛յ գալստեան, Հանգստեան, Ըսպասաւ ծաղկի, խալէ, փառ։

Աբելսիա. ալելուիա։

Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհնեցէք զանուն տեառն։
Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Ընթերցուածս Աբայեայ մարգարէէ։

Ընդէս ասէ տէր. յաւուր յայնմիկ մոռասցին զնեղութիւնս առաջինս, և ոչ ևս անկցի ՚ի սիրտս նոցա։ Որ ի եղիցին երկինք նոր՝ և երկիր նոր, այլ օրհնութիւն և ցնծութիւն գտցեն զոր ես հաստատեցից։ Որ ՚ի տեառնէ եղիցի դարձ նոցա. եկեսցեն ՚ի սիոն ցընծութեամբ և ուրախութեամբ յաւիտենից. զի ՚ի վերայ գլխոց նոցա ցընծութիւն և ուրախութիւն հասցէ։ Աներժեցան ցաւք և տրտմութիւնք և

հեծութիւնք. զի ես եմ որ մխիթա-
րեմ զձեզ յամենայն տրտմութեանց
ձերոց ասէ տէր ամենակալ:

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց Ա. Թղթոյն է:

Կանզի փող հարկանի, և մեռեալք
յարիցեն առանց ապականութեան, և
մեք նորոգեսցուք: Օ՜ի պարտ է ապա-
կանութեանս այսմիկ զգենուլ զանա-
պականութիւն, եւ մահկանացուիս
այսմիկ զգենուլ զանմահութիւն: Ա՛յլ
յորժամ մահկանացուս այս զգեցցի
զանմահութիւն, և ապականութիւնս
զանապականութիւն, յայնժամ եղիցի
բանն՝ որ գրեցաւ. ելիթ ընկլաւ մահ
՚ի յաղթութիւն: Ո՞ւր է մահ յաղթու-
թիւն քո. ո՞ւր դժոխք խայթոց քո:
Խայթոց մահու մեղք են, և զօրու-
թիւն մեղաց օրէնք: Ա՛յլ շնորհք աս-
տուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի
ձեռն տեառն մերոյ յիսուսի քրիստոսի:

Ալէլուիա. Ալէլուիա:

Հոգի քո սուրբ և բարի՝ առաջնոր-
դեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ:

Սրբոյ Աւետարանիս ցնի Քնի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Նոթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք, և ես աղաչեցից զհայր, և այլ միխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի ի յաւիտեան. զհոգին ճշմարտութեան. զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի, և ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ. փոքր միւս ևս՝ և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք՝ կենդանի լինելոց էք։

Կարող։

Վ֊ան ի վերուստ խաղա. (Եր֊ 105։)

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

Որհնեալ ես միածին որդի աստուծոյ՝ տէր մեր Յիսուս Քրիստոս. որ ամենահաստատ գթութեամբ քով մարմնացար ի սուրբ կուսէն մարիամայ, և պար֊

գևեցար մեզ ՚ի խաչին նուէր հաշտու-
թեան հօր՝ հեղմամբ քո սուրբ ար-
եանդ : Թաղեցար ՚ի գերեզմանի , և
ԻՋեր ՚ի դժոխս , և ազատեցեր զՀոգիսն
որ ՚ի նմա . ՚ի սուրբ միաշաբաթին յա-
րուցեալդ ՚ի մեռելոց , ձայնելով հզօր
քո բանիւդ , թէ որք ՚ի կապանսդ էք՝
ելէք , և որք ՚ի խաւարի՝ յայտնեցա-
րուք : Աստի և մեք ՚ի սուրբ և ՚ի լու-
սաւոր յարութեան քո եկեալ ՚ի գե-
րեզմանս մեռելոց , կենսատու սուրբ
խաչիւս և սուրբ աւետարանաւս աւե-
տեմք ծց զաքանչելի և զանսուտ յոյս վե-
րըստինննորոգմանն՝ զոր խոստացար մեզ :
Վ ասն որոյ աղաչեմք զամենագութ փրկիչդ մեր միաբան ծառայքս քո , խո-
նարհեաց տէր՝ յաղաչանս մեր , և հան-
գո զՀոգի տղայիս այսորիկ ընդհօք ո-
ղորմութեան քո : Որպէս զի տնկակից
եղեալ նմանութեան մահու քո , լինի
և կցորդ կենսաբեր յարութեան քո ,
և վայելեսցէ զաքթայութիւնդ երկնից
ընդ սուրբս քո : Նա մեք ողորմութիւն

գտեալ ՚ի քէն՝ փառաւորեացուք զքեզ
ընդ հօր՝ և ընդ սրբոյ հոգւոյ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Յոյս յարութեան մերոյ՝ տէր մեր Յի-
սուս քրիստոս, որ աւետարանեցեր զգ
խաղաղութիւն հեռաւորաց և մերձա-
ւորաց, սպանանելով զթշնամութիւն
մահու մեղաց: Զոհանամք զքէն, որ
առատ մարդասիրութեամբ քով զա-
նէծս լուծեր, զդժոխս աւերեցեր. և
զմեզ զամենեսեան յարքայութիւնդ
երկնից վերացեր, և ՚ի դասակցութիւնս
հրեշտակաց խառնեցեր:
Եւ այժմ ժողովեալ մեր ՚ի հանգիստ
տղայիս այսորիկ՝ հնչեմք զաւետիս յա-
րութեան ճշմարիտ բարբառով սուրբ
աւետարանին. և խոնարհեալ առաջի
քո՝ աղաչեմք զբարեգութ մարդասի-
րութիւն քո: Հանգո տէր զհոգի տըղ
այիս այսորիկ ընդ ընտրեալս քո, և
ժառանգակից արա զսա սրբոց քոց
յարքայութեանդ երկնից: Եւ զմեզ

ընդ նոսին արժանի արա յարաշրուարձ
բերկրանօք օրհնել զքեզ ընդ հօր՝ և
սուրբ հոգւոյդ, այժմ և :

Ե՞ ապա ասէ ա՛ծանեղէն, երկո՛ պոռն :
Ե՛ ա՛լարիչ և մարդասէրքն մէկ պոռն :

Հոգւոցն հանգուցելոց : Քրիստոս որդի :

Օրհնեսցի * և կնքեալ պահեսցի զե-
րեզման և ոսկերք ծառայիս աստուծոյ,
նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ ձո
աւետարանիս, յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից ամէն :

Հայր մեր որ յերկինս :

ԿԱՆՈՆ

ՏՂԱՅԻ ԵՕԹՆ ԱԻՈՒՐ

ԿԱՄ

ՓԱՌԱՍՆՕՐԵԱՑ ԵԻ ԿԱՄ ՏԱՐԵՄՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՅ

Պոբէղայ զէ Ընբէձ : Շարական ՚ի յայնէն :
Ինչ, Ը-եփարան, Ղարոչ Ը-յգուցին է :

Աղօթք :

Օրհնեալ ես բարեխնամող և բարեգուէթ աստուած. որ նեղելոց ես անդորրիչ, և տրտմելոց մխիթարիչ. որ տնանկաց ես ապաւէն, և սգաւորաց սփոփիչ. աշխատելոց նաւահանգիստ, և լքելոց զօրացուցիչ. մեղաւորաց ես քաւարան, և անմեղաց պատսպարան. որ յոյսդ ես և ապաւէն կենդանեաց և մեռելոց : Ընկալ և պահպանեա զՂ հոգի ծառայիս քո այսօրիկ հոգւովդ

քով սրբով. պայծառացո զսա ընդ նբս քո, և կարդաւորեա ընդ արդարս քո՝ անճառ փառաւք և աննուաղելի լուսով: Կնքեա և զպահարան բնակութեան սորա, և օրհնեա ողորմութեամբ քով: Եւ մեզ ուղարկաւորացս սորա՝ և ըզ հետ եկեալ ժողովոյս՝ չնորհեա զքաւութիւն մեղաց. փրկեա՛ ի խորամանկ կուռթենէ սատանայի, և զգաստացո զսիրտս մեր՝ ի հաճոյս քո. բեւեռեա զմեզ յերկիւղ քո և՛ ի սէր՝ միշտ խորհիլ զպատուէր քո սուրբ հրամանիդ, և անմոռաց ունել առաջի աչաց մերոց զօրն յեռին ահաւոր դատաստանիդ: Օ՛ի արժանի լինցուք կեալ առաքինասէր վարուք՝ և ոչ յաղթիլ՛ ի մարմնական ցանկութենց. և յամենայնի անդադար փառաւորեցուք զՀայր և զորդի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Երդ՝ և ձեզ պարտ է գոհանալ զաստուածոյ, զի վախճանեալս ձեր՝ յերկրէս յերկինս վերացաւ. ՛ի մարդ-

կանէ՝ի հրեշտակս փոխեցաւ, ՚ի մահ-
ուանէ՝ի կեանս. ՚ի խաւարէ՝ի լոյս.
յաղքատութենէ՝ի մեծ հարստութիւն.
՚ի վաստակոց՝ի հանգիստ. ՚ի տրտմու-
թենէ աշխարհիս՝ի յերկնային ուրա-
խութիւնն. ՚ի մեղաց յարդարու-
թիւն. ՚ի հողեղինացս՝ի լուսեղէնս վե-
րացաւ, և ընդ հրեշտակս դասակար-
պեցաւ: Վ՚ասն այսորիկ ոչ է պարտ
քրիստոնէիս սուգ առնուլ՝ի վերայ մե-
ռելոց՝ այլ լացցեն հրեայք, և կռծեա-
ցին թերեհաւատք. զի նոքա են ար-
ժանի կռծոց և ողբոց: Ա՚յլ դուք մխի-
թարեցարուք՝ միաւանդամ կենդանու-
թեամբ ամենայն ընտրելոց՝ի քրիստոս
Յիսուս՝ի տէր մեր: Ողորմ վայելէ
փառք՝ իշխանութիւն և:

Ե՜ւ ապա ասի ա՚նճանեղէն, երիւ՜ փո՜ն,
և ա՚նարիչ և մարդասէրքն մեղ փո՜ն:

Հոգւոցն հանգուցելոց: Քրիստոս որդի:

Օրհնեցի ✻ և կնքեալ պահեցի զե-
րեզման և ոսկերք ծառայիս աստուծոյ:

Հայր մեր որ յերկ:

ԿԱՆՈՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԿԱՏԱՐԵԼՈՅ

Ալէլուիա ալէլուիա։

Երանի որ խորհի զաղքատն և զտկարն կըն. յաւուր չարի փրկէ զնա տէր։ Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։ Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութէնէ նորա։ Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժըշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ ի ցէ զի մեռցի, և կորիցէ անուն նորա։ Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ՚ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր։ Ատաքս ելանէր և զնոյն խօսէր. զի

նէն չընջէին ամենայն թշնամիք իմ։
Խորհեցան չար ՚ի վերայ իմ. բան անօ-
րէնութեան եդին ՚ի վերայ իմ։
Ամ՛ թէ որ ննջեցէ, այլ ոչ եւս յա-
ւելցի յառնել. քանզի և այրն խաղա-
ղութեան իմոյ, յոր և եմն յուսացեալ։
Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առ-
նել ինձ խաբէութիւն։
Ա՛յլ դու տէր ողորմեա ինձ և կանգ-
նեա զիս, և ես հատուցից նոցա։
Յայսմ ծանեայ՝ թէ հաճեցար ընդիս.
զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։
Ա՛յլ զիս յամբծուեր իմում ընկալար, և
հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։
Օրհեալ տէր աստուած իսրայէլի յա-
ւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

Ալէլուիա. Ալէլուիա։

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց,
այնպէս փափագի անձն իմ առ քեզ ած։
Ծարաւի է անձն իմ առ քեզ աս-
տուած, հզօր և կենդանի. երբ եկից
երեւեցայց երեսացդ աստուծոյ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ Թէ ո՞ւր է Աստ քո։ Այս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. քալալերէի, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն աստուծոյ։ Ի ձայն ցնծութեանն խոստովանութեան, և ի ձայն բարեկենդանութեան։

Ընդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ աստուած խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Ինձն իմ յոյժ խռովեցաւ. վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանու, ի հերմինէ լեռնէ փոքուէ։

Խորք խորոց կարդացին առ քեզ, ի ձայն սահանաց քոց։

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր, ի գիշերի զօրհնութիւն նորա. և աղօթք իմ առ Աստ վասն կենաց իմոց։

Ասացի աստուծոյ ընդունող իմ ես. ըն-

դ֊ը մերժեցեր զիս. ընդ֊ը տրտում գնամ ես ՚ի նեղել Թշնամւոյ իմոյ։ Ի փշրիլ ոսկերաց իմոց նախատեցին զիս Թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ, Թէ ո՞ւր է աստուած քո։ Ա֊րդ ընդ֊ը տրտում ես անձն իմ, կամ ընդ֊ը խռովես զիս. յուսա առ աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց աստուած է։

Ալելուիա. Ալելուիա։

Դատ արա ինձ աստուած, և իրաւ արա ինձ ՚ի դատաստանի իմում։ Յազգէ որ ոչ է սուրբ, ՚ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։ Դու աստուած հզօրիչ իմ ես. ընդ֊ը մոռացար զիս, ընդ֊ը տրտում գնամ ես ՚ի նեղել Թշնամւոյ իմոյ։ Ընդունեա տէր զայս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեացեն ինձ, և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։ Առ՝ի առաջի սեղանոյ աստուծոյ առ

ած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ
աստուած աստուած իմ։
Ընդ ընդէր տրտում ես անձն իմ,
կամ ընդէր խռովես զիս, յուսա առ
աստուած, խոստովանեա նմա փրկիչ
երեսաց իմոց աստուած է։

Փառք հօր և որդւոյ և։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ո-
ղորմութեանդ քում, ըստ բազում գթու-
թեան քում ջնջեա զանօրէն։

Փառք հօր։ Եւ այս խա։ Օրհնու։

Վհատանայն խռովի սրինէք և ասէ։

Ընդպատիան։

Ո՞ր երկայնամիտդ եմ տէր քաղցր և
ողորմած հանդո՞ զհոգիս քոց ծա-
ռայից. զի մի դարձցի՞ տնանկ ամա-
չեցեալ յաւուրն ահեղ ատենին։
Ո՞չիա՞տակ հրաժարելոյն ի հաճոյս

գձ
հանգ

քե՛զ ընկալցիս. եւ զուխտըս մե՛ր ընկալ որպէս զաբեղինն զնոյի՛ն և զաբրահամն. զի՝ ի խորան քում սիրոյդ հա՛նգուսցես զծառայս քո՛, և զհոգիս նոցա՛ դամեսցես ընդ սո՛ւրբըս քո. զի մի՛ դարձցի՛ անանկ ամա՛ն:

աւգ օր Ա՛հաւո՛ր ես Թա՛գաւոր քրովբէական ձայնի՛ւ օրհնեալ. ՚ի յերկի՛նս ՚ի յերկիր և յամենայն ժամանակի՛: Ա՛հաւո՛ր ես Թա՛գաւոր որ նո՛րոգես զքո՛ զարարածս. հաստատե՛ս ՚ի հաւատս ՚ի գիւտ սուրբ խա՛չին ճըշմարտութեա՛ն: Ո՛ւստա՛ւորեա ըզմե՛զ քրիստոս ՚ի միաբանգամ քո՛ գալըստեանն. յորժամ ծագի՛ս ՚ի յերկնից և նո՛րոգես զքո զարարածս:

յար Ա՛յսօր յարութի՛ւն քրիստոսի տօնե՛ զեզ հաւատացեալք ՚ի մի՛ ա՛ստըւածգ հա՛յր ամե՛նակալ: Ա՛յսօր և կանա՛նքն ի՛ւղաբեերք աւե՛տիս տալով ա՛ւազելոյն

ծրհնեն զանստքեաց զհայր ամե՛ն : Աչ-
սօր և հրեշտակք ի յերկինս հոգե-
ւոր հընչմամբ երգ ուլ օրհ :

ամե՛ն Ի դյա լուսոյ մայր, և կենարար բանին
բնակարան. քեզ երանիցեն ազգ և
ազի՛նք ամենայն : Աստեղծողին մայր,
և հընութեան կերպի նորոգողին.
քեզ : Ի դյս ծագեցաւ ի քէն, նըստե-
լոցս ի խաւարի. քեզ :

խաչ Փայտ կենաց որ փոխանակ մահացու
պըտղոյն ըզքո՛ պըտղաբերեցեր. պա-
րըսպեալ պահեա զհաւատա-
ցեալս : Քեզ բարեաւ մեզ ձա՛նապարհ
ծառոյն կենաց ի սրովբէական պահ-
պանութենէն. պարըս :

Փառք հօր և որդւոյ և :

Քեզ աղաւեցաւ նախահայրն ի ձա-
շակմանէ պըտղոյն. ե՛ւ քեզ երկըր-
պագեն ամ հաւատացեալք. պարըս :

Սաղմոսք ։

Յամենայն ժամու աղաչանք իմ այս են ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս տէր, և յօտարէն պահեա զծառայս քո մարդասէր տէր ։

Կարոզ ։

Աղաչեացուք զկենսատու՝ փրկիչն մեր քրիստոս. որ կամաւոր խաչելութբն իւրով զարարածս փրկեաց. և հեղմամբ արեան իւրոյ զմոլորութիւն չնորհեաց յուսացելոց իւրոց. ամենակալ տէր ։

Աղօթք ։

Ընկեալ առաջի քո բարերար և բազմողորմ աստուած՝ աղաչեմք ամենայն սրտիւք մերովք, և խնդրեմք զքեզ թիւն ՚ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր, զամենայն զոր ինչ խնդրիցեք հաւատով յանուն որդւոյ ՚ի հօրէ, տացի ձեզ ։ Չնորհեա և այժմ հաւատացելոցս ՚ի քեզ, և կատարեա ՚ի բարի զխնդրուածս մեր. զի ՚ի քեզ եմք ապաւինեալ ։ Այո քո ա-

ասատ ողորմութեամբդ միսիթարեա զը
մեզ ՚ի կեանս այսոսիկ . և առաջնորդ-
եալ հասո յանճառ երկնից արքայու-
թիւնդ , ՚ի փառաբանութիւն և ՚ի պա-
տիւ ամենասուրբ երրորդութեանդ ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւի ։

Յիշեա տէր և ողորմեա ։

Ի արեւթար և բազումողորմ աստուած՝
քո անմոռաց գիտութեամբդ և անբաւ
մարդասիրութեամբդ՝ յիշեա զամե-
նայն հաւատացեալս ՚ի քեզ, և ողոր-
մեա ամենեցուն ։ Օգնեա , և փրկեա
յիւրաքանչիւր վտանգից և ՚ի փորձու-
թեանց ։ Ընժանաւորեա զոհութեամբ
փառաւորել զհայր և զորդի և զսուրբ
հոգի . այժմ և միշտ և ։

Ալէլուիա . Ալէլուիա ։

Ընդունիմ զքեզ ի գիրկս իմ, և տէր
ընդունող հոգւոց լինիս ։

Ընթերցուածս Առաքից ։

Պատուեա զտէր ՚ի քոյոց արդար վաս-
տակոց . և հան նմա պտուղ ՚ի քոյ

արդարութեան արմատաց. զի լցցին
շեմարանք քո լիութեամբ ցորենոյ.
և գինեաւ հնձանք քո առաւել ևս
բղխեսցեն: Որդեակ՝ մի՛ լքանիր ՚ի խրա-
տուս տեառն, և մի՛ լուծանիցիս յան-
դիմանեալ ՚ի նմանէ, զի զոր սիրէ տէր՝
խրատէ, տանջէ զամենայն որդի զոր
ընդունի:

Ընթերցուածս ՚ի գործոց առաքելոց:

Այնպէս պաշտեմ զՀայրենի ածն. հա-
ւատացեալ ամենայնի որ ինչ յօրէնս
և ՚ի մարգարէս գրեալ է: Ունիմ
յոյս առ աստուած. որում և դոքա
իսկ ակն ունին՝ թէ յարութիւն լինել-
ոց է արդարոց և մեղաւորաց: Ցո-
րում և ես իսկ ձգնիմ, անխիղճ միտս
ունել առ աստուած և առ մարդիկ
յամենայն ժամ: Ի բազում ամաց ողոր-
մութիւնս եկի առնել յազգդ իմ, և ե-
տու պատարագիս. որովք գտին զիս
սրբեալ ՚ի տաճարին:

Պետրոսի առաքելոյն ՚ի կաթուղիկեացն Ա. թղթոյն է:

Սիրելիք, զսոյն իսկ և մեռելոց խոս-

տացեալ է՝ զի դատեսցին ըստ մարդկան մարմնով. և կենդանասցին ըստ աստուածոյ՝ հոգւով: Ումեքեցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք այսուհետև. եւ լերուք զուարթունք յաղօթս:

Ալէլուիա. Ալէլուիա:

Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. երևեցո զերեսս քո՛ ի մեզ՝ և ողորմեա մեզ:

Սրբոյ աւետարանիս Յ՚ի Քի՛ որ ըստ Ղուկասու:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ մտեալ շրջէր ընդ երկիրս. և ահա այր մի անուն կոչեցեալ զակքէոս. և նա էր մեքսապետ. և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ. և ընթացեալ յառաջս, ել՛ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր: Իբրև եկն՛ի տեղին. հայեցաւ՛ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. զակքէ՝ փութա՝ էջ այտի, զի այսօր՛ի

տան քում արժան է ինձ ապանել. փութացաւ և էջ և ընկալաւ զնա ուրախութեամբ: Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել: Նին՝ եկաց զակքէոս՝ և ասէ տէր. տէր՝ ահա կէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին: Նա ասէ ցնա Յիսուս. այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի աբրահամու էր: Որ ի երկն որդի մարդոյ կորնդրել և կեցուցանել զկորուսեալն:

Կարող:

Վասն ի վերուստ խաղալ: (Երես 105:)

Աղօթք:

Ամէն երկնաւոր՝ բարեգութ և ողորմած, քաղցր և երկայնամիտ առ ամենեսեան որք կանդրեն ի քէն: Ամենայն ի ստեղծուածս ձեռաց քոց, որ ապաւինիմք ի քո բարերարութիւնդ. և ընկալ ողորմութեամբ քով զպատուական պատս, զոր մատուցանեմք հաւատա-

ցեալքս՝ի քեզ՝ առ՝ի յիշատակ ննջե-
ցելոց յանուն քո սուրբ: Օ՜ի դու ես
աէր՝ որ հաստատեցեր՝ի սիրտս մեր
զյոյս յարութեան, և զհաւատացումն
բարեաց ամենեցուն՝ որ հաւատան
գալստեան միածնի քո: Դու՝ աէր աս-
տուած մեր, յաղթեալ՝ի մարդասի-
րութենէ քումմէ՝ առաքեցեր յանքըն-
նին ծոցոյ քումմէ զմիածին որդիդ քո.
որ եկն և գնեաց զմեզ՝ի ծառայութե-
նէ մեղաց: Նովաւ իբրև զմեզ մարդ, և
հրաւիրեաց զմեզ յորդեգրութիւն
հօրդ երկնաւորի: Ասոյց զինքն պա-
տարագ կամօք քովք, և եբարձ զպար-
տիս մարդկութեանս մերոյ, հաշտե-
ցուցանել զտարագրեալքս՝ի քէն՝ի
ձեռն հեղման արեան իւրոյ: Համա-
րեցաւ ընդ մեռեալս՝ի գերեզմանի
դնելով անապականաբար, և զմահա-
ցեալսն՝ի սկզբանէ՝ կորչեաց՝ի ձեռաց
մահու: Յարեաւ աբանչելապէս, և
մշտնջենաւոր կենդանութեն հաղորդս
արար զմահկանացու բնութիւնս մեր:

Եւ այժմ՝ ահա աստուած մեր՝ օրհնեա զպատարագս զայս, առաքելով զանեբևոյթ ալ քո. և հանդո զկամս ընդունելութեան քո՝ ի մատուցողքս. որք հաւատացին առ հաւատչեայ ընդունել զհանգիստ փոխեցելոյն, զոր աւանդեցեր՝ ի պատրաստ բնակութիւն՝ քո անձառ բարեացդ։ Ոյո տէր՝ քո անձառ շնորհօքդ, և բազմապատիկ ցնծութիւք զժողովուրդս քո, որք հաղորդ հանդիսեցան լինիլ այսմ հոգևոր խրախճութեանս։ Ողաւաղեացին ընդ մեզ պարակցութեամբ բանակք զուարթնոցն, բազմելով՝ ի վայելս հաշտարար կամաց քոց։ Որպէս զի երկոքումբք հրճուանօք բերկրեացին հոգիք հանդուցելոցն ապրմամբ շնորհաց սուրբ հոգւոյդ. որ անպեղծ ես՝ ի փոխատրութիւնն նոցա՝ որք կամակար մնօք ընծայեցին զքոյդ քեզ։ Պայծառացո տէր աննուաղելի փայլմամբ զհոգիս այնոցիկ, յորոց անուն կատարին աղօթքս և պատարագս՝ բարեխօսութեամբ ընդ

ըելոց .քոց· որք մատուցին զինքեանս արեամբ բանականաւ .քեզ ընդունելի զկիր հօր· և յանուանանելի .քոց հատուցմանցդ վայելեսցեն ՚ի փառս՝ որ ոչն երևին: Ա՛ման որով գոհացողական փառատրութեամբ և երկրպագութիւք մատուցանեմք օրհնութիւն ամենասուրբ երրորդութեանդ՝ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Հայր մեր որ յերկինս:

ԱՆԲԻԾՔ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Ալէլուիա· Ալէլուիա:

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի,
և որք գնան յօրէնս տեառն:
Երանի որք քննեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտիւ խուրձանց խնդրեսցեն զնա:
Ոչ թէ որք գործեն զանօրէնութիւն,
՚ի ճանապարհս նորա գնասցեն:

Դու պատուիրեցեր զպատուիրանքս
՚ի պահել ինձ յոյժ ։
Ընդանի թէ յաջողեալ էին ինձ ճանա-
պարհք իմ ՚ի պահել ինձ զարդարու-
թիւնս քո ։
Յայնժամ ես ոչ ամաչէի ՚ի գործա-
նել ինձ ՚ի պատուիրանս քո ։
Խոստովան եղէց քեզ տէր յուղղու-
թիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զի-
րաւունս արդարութեան քո ։
Զիրաւունս քո պահեցի, մի թողուր
զիս մինչ ի կատար ։
Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանա-
պարհս իւր, այլ ՚ի պահել զբանս քո ։
Ի՚ողջոյն սրտիւ իմով խնդրեցի զքեզ,
մի մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց ։
Ի սրտի իմում թագուցի զբանս քո,
որպէս զի մի մեղայց քեզ ։
Օրհնեալ ես դու տէր, ուսո ինձ
զարդարութիւնս քո ։
Ընթամբք իմովք պատմեցից զամենայն
իրաւունս բերանոյ քո ։
Ի ճանապարհս վկայութեանց քոց զբ-

ւարձացայ, որպէս յամենայն ի մեծուե։
Ի պատուիրանս քո հոգացայ, և զգու-
շացայ ի ճանապարհս քո։
Օխրաւունս քո խոսեցայ, և ոչ մոռա-
ցայ զբանս քո։
Հատո ծառայի քում, զի կեցից և
պահեցից զբանս քո։
Օ՛արկո զաչս իմ, և նայեցայց ի
սքանչելիս օրինացդ քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի, մի թա-
գուցաներ ինձ զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ ի ցանկալ ինձ
յիրաւունս քո յամենայն ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից, անիծեալ՝
որ խոտորեցան ի պատուիրանաց քոց։
Ի բաց արա ինձն զնախատինս և զար-
համարանս, զի զվկայութիւնս քո
խնդրեցի։
Գանգի նստան իշխանք և չարախօսէին
ինձն. այլ ծառայ քո խորհէր յիրա-
ւունս քո։
Օ՛ի վկայութիւնք քո խօսք իմ էին, և
խորհուրդք իմ արդարութիւն քո։

Ներձեցաւ անձն իմ ՚ի հող, տէր կեցո զիս ըստ բանի քումմ։

Օ՜ ձանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ, ուսո ինձ զարդարութիւնքո։

Ի ձանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս, և քննեցից զբանչելիս քո։

Տ՜քնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալ. հաստատեա զիս ՚ի բանս քո։

Օ՜ ձանապարհս մեղաց ՚ի բաց արա յիս ինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։

Օ՜ ձանապարհս ճշմարտութեանց ընտրեցի, և զկրաւունս քո ես ոչ մոռացայ։

Ներձեցայ ես ՚ի վկայութիւնս քո, տէր մի յամօթ առներ զիս։

Ի ձանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ։

Օրէնսդէտ արա զիս տէր ՚ի ձանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամենայն ժամ։

Իմաստուն արա զիս, և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։

Առաջնորդեա ինձ ի շաւիղս պատուի քոյ, զի ընդ նոսա հաճեցայց։
Խոնարհեցո զսիրտ իմ ի վկայութիւնս քո, և ոչ ի յագահութիւն։
Դարձո զաչս իմ, զի ոչ տեսիցեն զնանրութիւն. ի ճանապարհս քո կեցո զիս։
Հաստատեա ծառայի քումմ զբան քո յերկիւղ քո։
Հան զինէն զնախատինս, զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են։
Ահա ցանկացայ պատուիրանաց քոյ. յարդարութեան քում կեցո զիս։
Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկութի՛ն քո ըստ բանի քում։
Տայց պատասխանի ոչք նախատեն զիս բանիւք. զի ես ի բանս քո յուսացայ։
Ոչ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութե՛ն մինչեւ յոյժ զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամ ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրութ, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թա-
գաւորաց, և ոչ ամաչէի ։
Խորհէի՛ի պատուիրանս քո, զոր սիրեցի ։
Համբարձի զձեռս իմ՛ի պատուիրան
քո զոր սիրեցի, և խորհէի յարդա-
րութեան քումմ ։
Ցիշեա զբան ծառայի քո, յոր և յու-
սացուցեր զիս ։
Սա մխիթարեսցէ զիս՛ի խոնարհութե՛
իմում. զի բան քո կեցոյց զիս ։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ.
այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։
Ցիշեցի զկրաւունս քո յաւիտենից տո՛ր,
և մխիթարեցայ ։
Տրտմութիւն կալաւ զիս՛ի մեղաւո-
րաց, և այք թողին զօրէնս քո ։
Գովելի են ինձ իրաւունք քո՛ի տե՛ղ
ուղ պանդխտութեան իմոյ ։
Ցիշեցի՛ի գիշերի զանուն քո տէր,
և պահեցի զօրէնս քո ։
Սա եղեւ ինձ ճանապարհ՛ի կեանս,
զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Փառք հօր և որդւոյ և ։

Ալելուիա. Ալելուիա:

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել զօրէնս քո:

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում:

Խորհեցայ ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս իմ ի վկայութիւնս քո:

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պահեցի զպատուիրանս քո:

Տուռունք մեղաց պատեցան զինեւ. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո:

Հաղորդ էի ես ամ երկիւղածաց քոց, որոց պահեալ էին զպատուիրանս քո:

Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր. զարդարութիւնս քո ուսո ինձ:

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում տէր ըստ բանի քում:

Ո քաղցրութիւն, զխրատս և զգիտութիւն ուսո ինձ, զի ի պատուիրանս քո ես հաւատացի:

Ինչչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ.
վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տէր, և քաղցրութիւնք
քով ուսոյ ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ
իմով քննեցի զպատուիրանս քո։
Ածան որպէս կաթին սիրտք նոցա. այլ
ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս,
որպէս ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան
զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս.
իմաստուն արա զիս, և ուսայց զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ
եղիցին, զի ես ’ի բանս քո յուսացայ։
Ծանեայ տէր զի արդարութեամբ են
դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո ’ի մխիթարել
զիս, ըստ բանի քում՝ ղծառայս քո։

Ակեսցեն յիս գթութիւնք քո՝ և կեցից, զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք ի տա-
րապարտուց անիրաւեցան յիս. այլ
ես հոգայցայ ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և որք
ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան
քում, զի մի ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ ի փրկութիւնս
քո, զի ես ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում. ասա-
ցի՝ երբ մխիթարեսցե զիս։
Եղէ ես որպէս տիկ ի պարզի, զի զար-
դարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ հինչ են աւուրք ծառայի քո. երբ
արասցես ինձ իրաւունս ի հալածչաց
իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս,
այլ ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են.
ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ։
Փոքր մի ևս և կորուսանէին զիս յերկ-

րի . այլ ես ոչ Թողի զպատուիրանս քո :
Ըստ ողորմութեան քումդ կեցո զիս ,
և պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ :
Յաւիտեան տէր բան քո կայ յերկինս ,
ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութի՛ քո :
Հաստատեցեր զերկիր՝ և կայ :
Հրամանի քումդ մնայ տիւ , զի ամենե-
քեան ծառայք քո են :
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին , կա-
խաւ ևս արդեօք կորուսեալ էի ՚ի խո-
նարհութեան իմում :
Ի յաւիտեան ոչ մոռացայ զարդարու՛ի-
քո , զի նոքօք կեցուցեր զիս :
Քո եմ ես և կեցո զիս , զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի :
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորուսա-
նել , զի զվկայութի՛ քո ես ՚ի միտ առի :
Յամենայն կատարած տեսի զվախ-
ճան . յոյժ անդորր էին ինձ պատուի-
րանք քո :
Որպէս սիրեցի զօրէնս քո , զօրհնա-
պաղ խօսք իմ էին :
Քան զքաղաւիս իմ իմաստուն արարեր

զնա ՚ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին։

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ, զի վկայութիւնք քո խօսք իմ էին։

Քան զծերան իմաստուն եղէ, զի զպատուիրանս քո քննեցի։

Յամ ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնսդիր արարեր զիս։

Որպէս զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ առեյի զամենայն ճանապարհս չարաց, զի դու օրէնսդիր արարեր զիս։

Լո՛րդ են բանք քո ոսկւոյ իմոյ, և լոյսան շաւղաց իմոց։

Ներդուայ և հաստատեցի, զի պահեցից զամ իրաւունս արդարութեանդ քո։

Խոնարհ եղէ մինչեւ յոյժ. տէր կեաց զիս ըստ բանի քում։

Կնդիր կամս բերանոյ իմոյ հաճեա տէր,

և զնրաւունս քո ուսո ինձ ։
Անձն իմ ի ձեռս քո է յամ ժամ, և
զօրէնս քո ես ոչ մոռացայ ։
Եդին ինձ մեղաւորք որոգայթ. ի
պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ ։
Ժառանգեցից զվկայութիւնս քո յա-
ւիտեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զար-
դարութիւնս քո յաւիտեան վն հատուցման ։
Ոչ անօրէնս առեցի, և զօրէնս քո սիրեցի։
Օգնական և ընկէց իմ ես դու, և ես
ի բանս քո յուսացայ ։
Ի բաց եղերուք ինէն չարք, և քննե-
ցից զպատուիրանս աստուծոյ իմոյ ։
Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո
զիս, և մի յամօթ առներ զիս ի յու-
սոյ իմմէ ։
Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խոր-
հեցայց յիրաւունս քո յամ ժամ ։
Ընարդեցեր զամենեան՝ որք ապստամբք
եղեն յարդարութենանց քոց. զի անի-
րաւութեամբ էին խորհուրդք նոցա ։
Յանցաւորս համարեցայ զամենայն մե-

ղաւոտս երկրի. վասն այսորիկ սիրեցի
զպատուիրանս քո:
Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ,
զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:

փառք հօր և: Այժմ և:

Ալելուիա. Ալելուիա:

Ընարի իրաւունս և արդարութիւն.
մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:
Ընկալ զծառայս քո ի բարի, զի մի
ամբարտաւանք ղղուեսցեն զիս:
Սպասեցին աչք իմ փրկութեան քում
տէր, և բանից արդարութեան քո:
Ընդ ծառայի քում տէր ըստ ո-
ղորմութեան քում. զարդարութիւնս
քո ուսո ինձ:
Ծառայ քո եմ ես, իմաստուն արա
զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:
Ժամ է պաշտել զտէր, խափանեցին զօ-
րէնս քո:
Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո քան զամենայն ոսկի և զտպազիօն:
Ամենայն պատուիրանք քո յաջողեցան

ինձ, զի առեցի ես զճանապարհս չարաց։
Աքանչելի են վկայութիւնք քո, վասն
այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսաւորէ
և իմաստուն առնէ զտղայս։
Օ՛բերան իմ բացի, և առի շնչել. ՚ի
պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ ըստ
իրաւունս սիրողաց անուան քո։
Օ՛ճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ
բանի քում, և մի տիրեսցեն ինձ ա-
մենայն մեղք։
Փրկեա զիս ՚ի զրպարտութենէ մարդ-
կան, և պահեցից զպատուիրանս քո։
Երեւեցո զերեսս քո ՚ի ծառայս քո,
և ուսո ինձ զարդարութիւնս քո։
Վ՛տակք ջուրց իջին յաչաց իմոց, զի
ոչ պահեցին զօրէնս քո։
Ուղիղ ես դու տէր, և ուղիղ են
դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութիւն վկայ-
ութեանց քոց, և ճշմարիտ են յոյժ։
Սաչեաց զիս նախանձ քո, զի մոռա-

ցան զբանս քո Թշնամիք իմ։
Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ
քո սիրեաց զսա։
Անուկ եմ ես և արհամարհեալ, և
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Արդարութիւն քո արդարութիւն յա-
ւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են։
Նեղութիւնք և վիշտք գտին զիս, և
պատուիրանք քո խոսք իմ էին։
Արդարութ են վկայութիւնք քո յաւի-
տեան իմաստուն արա և կեցո զիս։
Կարդացի առ քեզ բողոքով սրտիւ ի-
մով. լուր ինձ տէր, զի զարդարութիս
քո խնդրեցի։
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս,
և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու, աղաղակեցի,
և ես՝ ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու՝ ի խո-
սիլ ինձ զբանս քո։
Ձայնի իմում լուր տէր ըստ ողորմու-
քումդ. և յիրաւունս քո կեցո զիս։
Անրձեցուցին յիս հալածիչք իմ զա-

նօրէնութի, զի յօրինաց քոց հեռի եղեն։
Անդր ես դու տէր, և ամենայն պատ-
ուիրանք քո ճշմարիտ են։
Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեց քոց,
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։
Տես զնուարհութիւն իմ և փրկեա
զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Դատեա զդատաստանս իմ և փրկեա
զիս, և ըստ բանի քում կեցո զիս։
Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն,
զի զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են տէր, և
ըստ իրաւանց քոց կեցո զիս։
Բազում են, որք հալածեն և նեղեն
զիս. ՚ի վկայութեց քոց ես ոչ խոտորեցայ։
Հայեի յանապատսն և մաշէի, զի զբ
պատուիրանս քո ոչ պահեցին։
Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
տէր՝ ողորմութեամբ քո կեցո զիս։
Ակիզբն բանից քոց ճշմարտութիւն է.
յաւիտեան են ամ իրաւունք արդա-
րութեան քո։
Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր, և

Ի՛ բանից քոց երկեաւ սիրտ իմ։
Ցնծացայ ես Ի՛ բանս քո որպէս այն
որ գտանէ աւար բազում։
Ոչ մեզս ատեցի և անարգեցի, և զո-
րհնըս քո սիրեցի։
Յօրէն անգամ յաւուր օրհնեցից զքեզ
վասն իրաւանց և արդարութեան քո։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ որք
սիրեն զօրհնս քո, և ոչ գոյ Ի՛ նոսա
գայթակղութիւն։
Ապասեցի փրկութեան քում տէր, և
զպատուիրանս քո սիրեցի։
Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո,
և սիրեաց զնոսա յոյժ։
Պահեցից զպատուիրանս և զվկայու-
թիս քո, զի ամենայն ճանապարհք իմ ա-
ռաջի քո են։
Ներձեսցին խնդրուածք իմ առաջի քո
տէր, ըստ բանի քում ինձաստուն արա
զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, և
բանիւ քո փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս

քո, յորժամ ուսուսցես ինձ զարդա-
րութիւնս քո:
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամ
պատուիրանք քո արդարութեամբ են:
Նղիցի ձեռն քո՝ ի կեցուցանել զիս,
զի զպատուիրանս քո ընտրեցի:
Ցանկացայ փրկութեան քումմ աէր,
և օրէնք քո խօսք իմ էին:
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և
իրաւունք քո օգնեսցեն ինձ:
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորու-
սեալ. խնդրեա զծառայս քո, զի զպ
պատուիրանս քո ես ոչ մոռացայ:

փառք հօր և: Այժմ և միշտ և:

Ալէլուիա. Ալէլուիա:

Ակնեցի զի լուիցէ տէր զձայն աղօթից
իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր
առ իս, և ես յաւուրս իմ կարդացի
առ նա:
Շրջեցան զինեւ երկունք մահու, և
վիշտք դժոխոց գտին զիս:
Ընդեղութիւն և զանձկութիւն գտի,

և զանուն տեառն կարդացի ։
Ո՛ տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած ած
մեր ողորմի և պահէ զտղայս տէր ։
Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց զիս .
դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո , զի տր
օգնեաց քեզ ։
Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ , զա-
չըս իմ յարտասուաց ; և զոտս իմ ՚ի
գայթակղութենէ , հաճոյ եղէց առա-
ջի տեառն յերկրին կենդանեաց ։

ՇԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԴՍՏԵԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ։

Ձայն արկեալ կէ՛նարարին ա՛ստուա- ած
ծայի՛ն բարբա՛ռովն, ասէ եկայ՛ք օրհ-
նեալքդ հօր իմոյ ժառա՛նգեցէ՛ք պա՛տ-
րաստեալ ձեզ ըզկեանն ի՛ հանդէ՛ր-
ձեաւ երկրին։ Ո՛ւղ առաջ ելանել
քեզ հաւատո՛վ ի՛ յօ՛դըս վէ՛րինս, աս-
տուա՛ծապզեա՛ց լո՛ւսով պայծա՛ռացեալ
ի՛ դա՛ս անմարմնոցն. ի՛ լըսել ըզձայն
երանա՛ւէ՛տ կոչմա՛նն։ Ո՛ւղ աջմէ քու՛մ
մէ՛ կացո ընդ իմաստո՛ւն սուրբ կո՛ն-
սանան, ի՛ լուսեղէ՛ն ա՛ռագաստին
պայծա՛ռացեալ ի՛ դա՛ս անմարմնոցն,
ի՛ ժողո՛վս անդրանկա՛ց գրեալոց ի՛ յե՛՛ր
կի՛նս։

Քեզ վայելէ ա՛ծ օրհնութիւն, որ յարուցիր ես ձայնիւ յաւիտենից նընջեցեալսդ. Թագաւոր և իշխան վերօրհնեմք ըզքեզ։ Ի միւսանգամ գալստեանդ քո քաջ փառաց Թագաւոր ի՛ ձայն փողոյ նորոգիչն հոգիք նընջեցեալսդ, և յառնեն ի մեռելոց անապական մարմնով։ Ա՛ստ որպ եմք մեք ըզքեզ աղաչեմբք հայր երկնաւոր. դասաւորեա՛ ընընջեցեալսդն մեր ի վերինսդ քո երուսաղէմ, ի ժողովս անդրանկաց գրեալոց ի յե՛րկինս։ Ա՛յր բաղձմամբ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. Թող ինձ ըզ մեղս ի՛մ, և ա՛ղո՛թեաւ։ Տէր ո՛ր գըթացար ի կինսդն քանանացի, գըթա՛ եւ յինս ի մեղա՛ւորս, և ա՛ղո՛ր։ Տէր ո՛ր դարձո՛ւցեր ըզ մաքսաւորն ի գիտո՛ւթիւն ճըշմարտութեան, դարձո՛

և զին զմոլորեաւքն, և ողբ։

ապաշ Աստուած բազում ողորմ, խընայեա յարարածըս քո հայր ամենակալ, և ողորմեա։ Արեգական արդարութե, ճանգեա՛ ի հոգիս մեր լոյս ճըշմարտութեան, և ողբ։ Տուր մեզ տէր գնասաղղութիւն, եւ փըրկեա՛ ի նեղչաց մերոց հոգիդ ճըշմարտութե՛, և ողբ։

ապաշ Աղօթեմք լինձ ամստուած։ Որ զառաջինն ոչ պահելով զպատուիրանն մեռար, հնարհեցե՛ր քեւ օրինակ մեզ պատուիրան կենաց, զի պահելով կենդանանացո՛ք. ողբ։ Որ ի խորհուրդ քո կամաւոր մահուանն եկեղեցի քո քրիստոս. մեռանելո՛վ օրինաց մեղաց, զի յարուցեալ ընդքեզ նորոգեսցի ի փառս. ողբ։

ղպա Կենդանութեանց բաշխող քե՛ ի բե-

Թանիւ եկաւորեաւ այսօր, բարեկա-
մին զազարոս պարգեւէ զկենդա-
նութիւն: Տընօրինաբար արտասուե-
լով ընդ մարթայի և ընդ մարիամու
ողբակցեր. և ոչ մարդ հարցանէր
ձեր եդիք ըզ զազարոս: Նա որպես
զայծ բարբառով յարուցանէ ի մե-
ռելոց ըզ չորեքօրեայն. և զուգընթաց
ձայնին մեռեալն ելկն արտաքս անա-
պական:

յա Ընդ լսեսանալ միաշաբաթին կան-
խացին կահանայքն ի գերեզմանն, ի
խընկել զանապականն մարմինն: Նա
գան ըզ վէմն բարձեալ ի դրանց
գերեզմանին, և լուեալ բարբառ ի
հրեշտակէն, եթէ յարեաւ քրիստոս
և խաւարնեաց ըզմահ: Նա հանդի-
պեալ քո տէր առաքեցին, և տես-
եալ զմեղն կենդանարար, առաքե-

ցեր զնոսա ի փրկութիւն տիճեզերաց։
Ո՞ր ի քրովբեական կառսըդ հա՛նդ- հոգ
էիս, այսօր լքեր յերկինից ի դաշտս ա-
ռաքելոցըն սուրբ հոգի. օրհնեալ եւս
Թագաւո՞ր անմահ։ Ո՞ր գընա՛ս ի վե՛ր
թեւոց հո՛ղմոց, այսօր ի հրեղէն լե-
ռըս բաժանեալ հանգեար յանառաքեալ-
սըն սբ հոգի. օրհ։ Ո՛ր խնամե՛ս տես-
չութեամբ զքո զաշա՛րածս, այսօր ե-
կիր ի հաստատել զեկեղեցի քո սուրբ
հոգի. օրհ։

Յանճա՛ւ փառաց խո՛նարհեցար ի մեր մեծ
բընո՛ւթիւնս, բա՛ղդ աստուա՛ծ և յայտ
մարմնացար ի սըրբոյ կուսէ՛ն։ Ընդ
ծնար ի սբ կո՛ւսէ անո՛ւպական մա՛րմ
նով. ըզքե՛զ անդա՛դար բարեբանեմ
մեծաշո՛ւքանեմբ։ Այսօր զեկեա՛ղ ի
փրկո՛ւթիւն ազգի մարդկան, միաբա-
նութեամբ ամենեքեան մեծա՛։

մծ յար Յարուցեալն ի մեռելոց բնակարանն մայր և՞ կոյս, որ ըզնընջեցեալսըն յադամայ կենագործե՞ նապականն. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Ընտրուղին երկնի՛ և երկրի՛ եղեր տաճա՛ր և առագաստ, որ ըզնընջեցեա՛լսըն մեր հրեղէն նորոգե՛. զքեզ: Կերակրո՛ղին տիեզերաց արբո՛ւցեր ըզքո՛ւբ ըզկաթն, որ ըզնընջեցեա՛լսըն մեր վերըսատի՛ն նորո՛գէ. զքեզ մեծա՛:

խաչ Սո՛ւրբ խաչն օգնակա՛ն հաւատացեալ՛ց, կա՛նգնեցաւ ի յերկրի յաղթո՛ղ թըշնամւո՛յն. ե՛կայք ժողովե՛ցէք երկրպագեցո՛ւք: Ընտրեա՛լն աստուածբարձրացաւ ի խաչի՛ն, և զմեռեալըս մեղո՛ք փայտի՛ն ճաշակմամբն. ի սմանորոգեա՛լ կե՛նդանացոյց: Ի միւսան դա՛մ գա՛լըստեան աստուածա՛յրդւո՛յն,

սո՛ւրբ խանչն երեւի՛ և լուսաւո՛րէ .
զի նա՛ է յոյս հաւատացելոց :

Աւետիս . Աւետիս :

Տէր մի սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս , և մի բարկութեամբ քով
խրատեր զիս :
Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ ես .
բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոս-
կերք իմ :

Սրբոյ Աւետարանիս ձի՛ կի՛ որ ըստ Յովհաննու :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ :

Ամէն ամէն ասեմ ձեզ . ոչ կարէ որդի
մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ , ե-
թէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ .
զի զոր նայն առնէ , զնոյն և որդին նը-
մին նման գործէ : Օ՛ի հայր սիրէ զոր-
դի , և զամենայն ինչ ցուցանէ նմա՝
զոր ինքն առնէ . և մեծամեծս ևս քան
զսոյնս ցուցանէ նմա զգործս՝ ընդ որ
դուքդ զարմանայք : Օ՛ի ոպէս հայր յարու-
ցանէ զմեռեալս և կենդանի առնէ ,

նոյնպէս և որդի զոր կամի կենդանի առնէ : Եւ ոչ եթէ հայր դատի զոք, այլ զամենայն դատաստանն ետ որդւոյ իւրոյ . զի ամենեքեան պատուեսցեն զորդի՝ որպէս պատուեն զհայրն : Ո՛ր ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զհայր զառաքիչն նորա :

